Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6
7

20299

281.6 Հայրապետ. Ա
Հ-97 Սրբոյն Սարգիս
խոնարհն տեսարք.
1904թ.

Դա-741	31/III	09թ.	

2055

№ 330

281.6
Z-97
25
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ 1600-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ
280
942-3ՊԻ
2055
1005
20299
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI. 1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ա.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բ.

ԹՈՒՂԹ ՍԻՄԷՕՆԻ ՍՍՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ա Ռ

ՓԻԼԻՊՊՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

(Արտատպած «Արարատ» ամսագրից)

Միաբան Ս. Էջմիածնի
ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1904

17.06.2013

8021

Дозволено Цензурою Тифлисъ, 5 Февраля 1904 г.

04 NOV 2009

Ա.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.

1. Էջմիածնի կառուցումն. — Դ. դարում Վաղարշապատը իբրև մայրաքաղաք՝ դարձաւ հանդիսավայր այն բոլոր անցքերի՝ որոնք քրիստոնէութեան Հայաստանում հաստատուելու և այնտեղ արմատանալու կարապետը եղան։ —Վաղարշապատում տեղի ունեցան ս. Հռիփսիմեան կոյսերի նահատակութիւնները, Տրդատ թագաւորի անբուժելի հիւանդութիւնն ու Արտաշատի մահապարտների վերապից վերադարձող բազմաչարչար ս. Գրիգորից բժշկուելն մարմնաւոր ախտից և լուսաւորուելը քրիստոնէական հաւատի լուսով. ս. Գրիգորի առաջին քարոզութիւնները և Միածնի իջման ու լուսեղէն խորանի հրաշալի տեսիլքը։ Այս բոլորի հետևանքը այն եղաւ, որ հայերը ազգովին ընդունեցին քրիստոնէական հաւատը և 303 թուին հիմնարկուեց ու կառուցուեց Վաղարշապատի Կաթուղիկէն, ուր և հաստատուեց հայրապետական Աթոռը։

2. Հայրապետական Աթոռի տեղափոխուելը Դուին. — Արշակունի հարստութեան անկումից յետոյ պարսիկները վերջնականապէս տիրելով Հայաստանին՝ վարչութեան կենդրոն դարձրին Դուինը։ Թէև պարսից մարզպանները Դուինից էին կառավարում երկիրը, բայց հայրապետները Վաղարշապատի Կաթուղիկէն չէին լքանում. և Հայրապետական Աթոռը դարձեալ Վաղարշապատի Կաթուղիկէումն էր մինչև Վարդանանց պատերազմի վերջը։ Պատերազմի ժամանակ Վաղարշապատը լինելով բաց դաշտում, առանց բնական ամրութիւնների, աւերածութեան ենթարկուեց. իսկ Կաթուղիկէն ու հայրապետանոցը՝ քայքայման վի-

ճակին հասան. թող այն, որ հայրապետները այլ ևս այդ աւերակներում չէին կարող ապրել, իրանց հօտին աւելի ևս շուտափոյթ օգնութիւն հասցնելու համար հարկադրուած էին երկրի կենդրոնական վարչութեան մերձ բնակութիւն ունենալ. ուստի և պատերազմից անմիջապէս յետոյ, 453 թուականին դումարուած Դուինի Ա. ժողովում նահատակ Յովսէփ Վայոցձորեցու տեղ կաթուղիկոս ընտրուեց Մելիտէ Մանազկերտցին և Հայրապետական Աթոռը որոշուեց տեղափոխել Դուին։ 303 — 452 թուականը ուղիղ 150 տարի Հայրապետական Աթոռը Վաղարշապատի Կաթուղիկէում յարատևելուց յետոյ առաջին անգամ պաշտօնական տեղափոխութեան ենթարկուեց և աստանդական մնաց մինչև 1441* թուականը, երբ Վաղարշապատի համազգային ժողովով նորից վերահաստատուեց Վաղարշապատի կաթուղիկէում։

3. Հաւատն ու համարումն դէպի կաթուղիկէն. — Ինչպէս Բաբելոնի գերութեան մէջ տառապող և Երուսաղէմի ու նրա տաճարի համար տոչորուող հրէաները չէին մոռանում իրանց Երուսաղէմն ու տաճարը (Սաղմ. ՃԼԶ.), այնպէս էլ հայերը չէին մոռանում իրանց Մայր Աթոռ Կաթուղիկէն թէ այն ժամանակ՝ երբ նա չէն էր ու բարգաւաճ իւր հայրապետանոցով, և թէ այն ժամանակ՝ երբ նա կիսաւեր դրութեան մէջ էր ու թափուր հայրապետական գահից, վերջինիս տեղափոխութեան պատճառով։

Դեռ Դ. դարում Տրդատի որդի Խոսրովի ժամանակ հայոց զօրքերի սպարապետ Վահան Ամատունին մինչև Վաղարշապատի դռները հասած թշնամու դէմ, Օշականի սարալանջի քարքարոտ և դժուարագնաց տեղերում պատերազմելիս՝ ապաւինելով Վաղարշապատի Կաթուղիկէին, սաստիկ կոտորածով խորտակեց թշնամու զօրութիւնը և իւր հաւատն ու ուխտը պահեց կատարեալ յաղթութեամբ. «Յայնժամ քաջին Վահանայ Ամատունւոյ հայեցեալ յեկեղեցին կաթուղիկէ, ասէ. Օգնեա՛ ինձ Աստուած

* Ծն. Խմբ. Այդ թուականը վերատուգութեան կարօտ է, տես «Արարատ» էջ 38։

... ուղղեա՛ և զնիզակս իմ ական հզօրիս այսմիկ» (Խորենացի գիրք Գ. գլ. Թ.)։

Վաղարշապատի Կաթուղիկէն ոչ միայն նշանաւոր էր իւր հայրապետանոցով, այլ և իւր վանահայրերով ու երէցներով։—Երբ Վարդան Մամիկոնեանը տեսնելով հայ նախարարների թուլասրտութիւնն ու երկպառակութիւնը խոյս էր տալիս դէպի յունաց բաժնի Հայաստանը, Սիւնեաց իշխան Վասակը, որ այդ ժամանակ մարզպան էր, մի պատգամաւորութիւն ուղարկեց Վարդանին հրաւիրելու. այդ պատգամաւորութեան մէջ, որ կազմուած էր նշանաւոր նախարարներից ու հոգևորականներից, էին Վարդանանց պատերազմում հռչակաւոր Ղևոնդ երէցը, Մրենի Խորէն քահանան և Վաղարշապատի Կաթուղիկէի երէց Երեմիան (Ղազար Փարպ. Լ.)։

Հայրապետական Աթոռի տեղափոխութեամբ Վաղարշապատի Կաթուղիկէն մոռացութեան չը տրուեց։ — 491 թուին Վահան Մամիկոնեանի մարզպանութեան ժամանակ Վաղարշապատի Կաթուղիկէում գումարուեց Վաղարշապատի Ե-րդ ժողովը, ուր միանգամ ընդ միշտ սահմանուեց տիեզերական համարել միմիայն Նիկիոյ, Կ. Պոլսի և Եփեսոսի առաջին ժողովները, և բացի այս երեք տիեզերական ժողովներից՝ այլ տիեզերական ժողով չընդունել, որով Քաղկեդոնի ժողովի առիթով ծագած ներքին վէճերը դադար առան։

Վարդանանց պատերազմի ժամանակ Կաթուղիկէն կիսաւեր էր եղել։ Վահան Մամիկոնեանը, ինչպէս ասում է Ղազար Փարպեցին՝ «հիմնեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեաց իւրոց»։ Եթէ Ներսէս Մեծի նորոգութիւնը (Փաւստ. Բիւզ. Ե. Раскопки разв. церк. Св. Григ. Архим. М. Теръ Мовсесянъ) չը համարենք հիմնական կամ 'ի հիմանէ, պատմութեան մէջ յիշուած այս առաջին հիմնական նորոգութիւնն է*).

*) Կաթուղիկէն նորոգուել է ըստ Եղնիկ երիցու ս. Սահակ Պարթևի օրով ևս (Տես Արարատ 1903, փետր.-մարտ եր. 143)։

երկրորդ նորոգութիւնը եղել է Է. դարի առաջին քառորդին Կոմիտաս կաթուղիկոսի ձեռքով։ Կոմիտասը ս. Հռիփսիմէի վկայարանը հիմնովին վերաշինելուց յետոյ Կաթուղիկէի փայտեայ տանիքն ու գմբէթը քարի փոխեց և շինեց սալայատակը։ Նոյն Է. դարում Ներսէս Գ. Շինողը շինեց Վաղարշապատի Առապարի եկեղեցին՝ որ Վաղարշապատի եկեղեցիներին մերձ բնակութիւն ունենայ (Սեբէոս պատմ.)։

Հաւատքը դէպի Վաղարշապատու Կաթուղիկէն ինչպէս զօրաւոր էր Վահան Ամատունու ժամանակ Դ. դարում, այնպէս էլ զօրաւոր մնաց հետևեալում։— Ե. դարի վերջին քառորդին Վահան Մամիկոնեանը պարսից դէմ վարած ժանական պատերազմներում տարած յաղթութիւններից յետոյ իւր գոհութեան և փառաբանութեան ուխտը Վաղարշապատի Կաթուղիկէումն էր կատարում (Ղազար Փարպ. Հէ.)։

4. Կաթուղիկէի վանահայրեր.—Բացի Ղազար Փարպեցուց՝ որ առաջին վանահայրը կարող է համարուել Վարդանանց պատերազմի աւերմունքներից Վահանի վերաշինութեան ժամանակ, Կաթուղիկէի վանահայրերի շարքում յիշւում են Կիւրիան, որ յետոյ վրաց կաթուղիկոս դարձաւ և որի օրով Վիրք (Զ. դարում) ընդունելով Քաղկեդոնի ժողովը՝ անջատուեցին հայ եկեղեցուց։ Է. դարու սկզբում Աբրահամ վանաց երէց Կաթուղիկէի, նոյն դարում՝ Յովհաննէ կամ Յովհաննիկ. Եղբ՝ փակակալ Կաթուղիկէի, Յովհան Մայրավանեցի ևն։ 1441 թուին, երբ Վաղարշապատի ժողովում որոշուեց Հայրապետական Աթոռը տեղափոխել Վաղարշապատ՝ յիշւում է եպիսկոպոս Էջմիածնի Դաբրիել, որից կարելի է եզրակացնել՝ թէ Վաղարշապատն ու իւր Կաթուղիկէն թէև անշուք դրութեան մէջ, բայց բոլորովին աւերակ և անմարդաբնակ դրութեան մէջ չէին։ Հայրապետական Աթոռի Էջմիածին տեղափոխուելուց յետոյ, 1441 թուից սկսած, Կաթուղիկէի վանահայր համարւում է Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց։

5. Կաթուղիկէի Էջմիածին կոչուելը.—Մինչև ԺԵ. դարը ս. Էջմիածինը պատմութեան մէջ ընդհանրապէս յայտնի է «Կաթուղիկէ Վաղարշապատայ» անունով։ Է. դարի վերջին քառորդում (677—703 թ.) գահակալող Սահակ Գ. Զորափորեցուն վերագրուած «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի մէջ դեղեցիկ բանաստեղծութեամբ ամփոփուած է ս. Լուսաւորչի տեսլեան աւանդութիւնը, որից առնելով՝ ոմանք կարծում են, թէ Կաթուղիկէն դեռ Է. դարում Էջմիածին էր կոչւում։ Պ. Կ. Կոստանեանցը այս կարծիքին է (Ստեփաննոս Օրբելեանի Ողբ ի Կաթուղիկէն. յառաջաբան եր. 12)։ Եթէ Զորափորեցունն էլ լինի այդ շարականը, դրանից չի կարելի եզրակացնել, թէ Է. դարում Վաղարշապատի Կաթուղիկէն «Էջմիածին» էր կոչւում. վասն զի «Էջ Միածինն» անուն չէ, այլ ստորագրեալ՝ իւր ենթակայով. «Էջ» բայ է, իսկ «Միածինն» անուն։ Ըստ իս՝ որքան և խաչի շարականները վերագրւում են Սահակ Զորափորեցուն, «Էջ Միածինն» շարականը, թէև խաչի կարգումն է դրուած՝ Զորափորեցունը չէ, այլ յետին ժամանակի գործ՝ Ժ. դարից յետոյ։ ԺԳ. դարում «Ողբ ի ս. Կաթուղիկէն» գրող Ստեփաննոս Օրբելեանն էլ Էջ Միածին իբրև յատուկ անուն չի գործ ածում. նա դիմառնաբար Կաթուղիկէի կողմից խօսելով գրում է. «Այս ես, այս ես Էջք Միածնին»։ Այս դարձուածքից յայտնի երևում է, որ ԺԳ. դարում դեռ կենդանի էր մնացել ազգի մէջ ս. Լուսաւորչի տեսիլքի համեմատ Միածնի էջման աւանդութիւնը և կարելի է հաստատապէս ասել, որ այդ ժամանակ կաթուղիկէն Էջմիածին կոչւում էր։ ԺԵ. դարում «Վաղարշապատի Կաթուղիկէ» անունը մոռացութեան է տրուել և «Վաղարշապատու Էջմիածին» անունն էր կիրառութեան մէջ։ Ի յիշատակ Վաղարշապատու ս. Էջմիածնի ԺԵ. դարից սկսած Երուսաղէմի ս. Յակոբեանց Հայոց վանքում և Սուսմ մի մի մատուռ կոչւում էին Էջմիածին։ Էջմիածին բառը, որպէս մի ամբողջ սուրբ աւանդութիւն բովանդակող անուն, շատ սիրելի դարձաւ և շատ երգիչներ սկսեցին յօրինել և երգել ս. Էջմիածնին

նուիրուած երգեր։ ԺԵ. դարի բանաստեղծ Առաքել Բաղիշեցին Էջմիածնին նուիրած իւր Ներբողի իւրաքանչիւր տունը սկսում է «Էջմիածին» բառով, ըստ այժ. «Էջմիածին կաթուղիկէ ... Էջմիածին պարծանք Հայոց ... Էջմիածին ժողովարան ... Էջմիածին տեղ նորոգման ... (Կ. Կոստանեանց Ողբ ի ս. կաթուղիկէն, եր. 19)։ Հ. Ալիշան կարծում է, թէ Վաղարշապատի Կաթուղիկէն Էջմիածին է կոչուել ԺԵ. դարից ոչ առաջ (Այրար. եր. 210)։ Ըստ մեզ՝ Արարատեան ժողովուրդը անյիշատակ ժամանակներից «Կաթուղիկէ Վաղարշապատայ» իւր ականջին խորթ ու կրկնակ բառի տեղ գործ է ածել Էջմիածին բառը. այդ անյիշատակ ժամանակը կարող է մինչև Ժ. դարը հասնել։ Ժողովրդին սիրելի անունը հետզհետէ մուտք է գործում գրականութեան մէջ, և ԺԵ. դարում արդէն դառնում է պաշտօնական անուն։

6. Տարագիր հայրապետանոցի խնամքը կաթուղիկէի վերայ. — Դուինը հեռի չէր Վաղարշապատից, ուստի և Դուինում դահակալող հայրապետները, որոնցից մի քանիսը կաթուղիկէի միաբաններից ու վանահայրերից էին (Կոմիտաս, Եղբ. ևն.) մեծ խնամք ունէին կաթուղիկէի վերայ. և այս՝ շատ պատճառներով.—Նրանք իրանց մօր կաթի հետ ներշնչել էին այն օգը, որ համակուած էր Կաթուղիկէի մասին աւանդութիւններով, ս. Լուսաւորչի յիշատակով և Հայոց դարձի պատմութիւններով. Նրանց սրտի և հոգու մէջ վառ էին կաթուղիկէի մասին ամեն մի հայի համար նուիրական աւանդութիւնները, ս. Հռիփսիմեանց նահատակութիւնը, Տրդատ թագաւորի քրիստոնեայ դառնալը ս. Լուսաւորչի քարոզութեամբ։ Նրանց ոգևորում էր այն աւանդութիւնը, թէ Տրդատ ս. տաճարների հիմքերի համար Մասիս նուիրական ոտից քարեր է բերել. Նրա կին, Աշխէն թագուհին, և քոյրն՝ Խոսրովիդուխտ, շինութեան համար ջուր ու աւազ էին կրում։ Նրանց ոգևորում էր Կաթուղիկէն, որովհետև այնտեղ սկսուեց հայ գրութեան զարգացումն ու ս. Գրքի թարգմանութիւնը ս. Սահակի և Մեսրոպի առաջնորդութեամբ։

Նրանք ամեն օր տեսնում էին այսքան նուիրական դէպքերի հանդիսարան Վաղարշապատու Կաթուղիկէն, շատ բնական է, որ անտարբեր չէին կարող մնալ։

7. Կաթուղիկէի մոռացութեան մատնուելը.—Բագրատունեաց զօրանալով և Յովհաննէս Զ. պատմաբանի մահուամբ Հայրապետական Աթոռը աստանդական վիճակի ենթարկուեց. ինքն Յովհաննէս կաթուղիկոս մի անգամ միայն, և այն ևս Բաբդէնի՝ Նոր Քաղաքում գումարած ժողովի մասին խօսելիս զգացմամբ յիշելով Կաթուղիկէի անունը, էլ բոլորովին չի յիշատակում, թէև իւր ժամանակին յարակից դէպքերը նկարագրելիս՝ մի քանի անգամ յիշում է Վաղարշապատի անունը։ Ստեփաննոս Բ.-ից մինչև Անանիա Մոկացին (925—965 թ.) հայրապետները Աղթամարում և Վասպուրականի այլևայլ տեղերում վարեցին իրանց իշխանութիւնը։ Վահան Սիւնեցու և Ստեփաննոս Դ.-ի անյաջող կաթուղիկոսութիւնից յետոյ 972 թ. Անւոյ ժողովով կաթուղիկոս ընտրուեց Անանիա Մոկացու քեռորդի Արշարունեաց եպիսկոպոս Խաչիկը և Ճիրակի Արգինայում վարեց իւր իշխանութիւնը, մինչև որ 993 թ. Սևանի վանահայր Սարգիս Ա.-ի ընտրութեամբ Հայրապետական Աթոռը, թէև ժամանակաւոր, կայան գտաւ Անիում, որ Բագրատունեաց մայրաքաղաքն էր։

Արագած լերան պէս ահագին անջրպետը, Վասպուրականցիների ու Մոկացիների կաթուղիկոս ընտրուելը, որոնք գուցէ ամենևին տեսած էլ չէին Վաղարշապատու Կաթուղիկէն, շատ բնական պատճառ է, որ Կաթուղիկէն մոռացութեան տրուէր։

Կաթուղիկէն աւելի ևս մոռացութեան մատնուեց հայրապետների կողմից, երբ Բագրատունեաց անկմամբ և Պետրոս Գետադարձի թափառաշրջիկութեամբ Հայրապետական Աթոռը կորցրեց իւր կայանը, և հետևապէս՝ իւր վեհութիւնը։ Թափառական Պետրոս Գետադարձը վախճանուեց 1058 թ. Սեբաստիայում տարագրութեան մէջ։ Պետրոսի քեռորդի և յաջորդ Խաչիկ Բ.-ը 1064

թուին վախճանուեց Թաւ-Բլուրում։ Խաչիկ Բ.-ին 1066 թ. Ծամնդաւում յաջորդեց Գրիգոր Վկայասէրը։ Յաջորդող հայրապետները աստանդեցին Հոնիում, Անիում, Թաւ Բլուրում, Ծովքում և 1147—1294 թ. աթոռակալեցին Հռոմ-կլայում։ Վերջապէս 1294 թ. Գրիգոր Անաւարզացու կամ Անարզաբացու օրով Հայրապետական Աթոռը տեղափոխուեց Սիս և այնտեղ մնաց մինչև 1441 թիւը։

8. Հայրապետանոցի օտարասիրութիւնը. — Որքան Հայրապետական Աթոռը հեռանում էր կենդրոնից, այնքան հայրապետանոցում զօրանում էր հակամիտութիւնը դէպի օտարները. այնքան թուլանում էին մայրենի եկեղեցու կարգերի և կանոնների նախանձախնդրութեան հոգին ու եռանդը. այնքան նուազում էր խնամքը դէպի Վաղարշապատի Կաթուղիկէն։ Օտարութեան դատապարտուած հայրապետների մէջ կային լուսամիտ անձինք ևս, որոնք զգում էին օտարութեան ծանրութիւնը. այսպիսի լուսաւոր անձերից մէկն էլ ս. Ներսէս Շնորհալին էր, որ դառնութեամբ գրում էր (Առ համօրէն հայասեռ աղինս) ... «քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ դոյ աղգի մերում, որպէս զի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերում զաստուածային պատուիրանս ըստ առաջին հայրապետացն և վարդապետաց։ Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի գիւղից կամ յագարակաց, յորոց ունիմք և ոչ մի» (Թուղթ ընդհ. տպեալ յԷջմ. 1865, եր. 8—9)։ Սակայն ինքն Ներսէս Շնորհալին ևս եկեղեցիների միութեան համար բանակցութեան մէջ էր բիւզանդական արքունիքի հետ, և եթէ թուլացած չը լինէր նրա մէջ սէրը դէպի մայր երկրի սրբութիւնները, կարող էր գտնել այնտեղ և՛ քաղաք բազմաժողով, որպիսի էր Անին, որ դեռ աւերուած չէր, և՛ մայրաքաղաք վանքեր, որպիսիք էին, եթէ չասենք Վաղարշապատու Կաթուղիկէն, Հաղբատ, Սանահին, Բջնի, Ցաթև, ս. Թադէոս առաքեալի վանքը Արտազում։

Խաչակրաց արշաւանքների ժամանակ, երբ արևելքում սկսեց զօրանալ կաթոլիկութիւնը, Շնորհալուն այլ յաջորդող հայրապետներն էլ սկսեցին հակամիտութիւն ցոյց տալ դէպի Հռովմ։ Օտարասիրութեան ապացոյց են Հռոմկլայի Բ. ժողովը (յօդ. Գ.) 1179 թ., Սսոյ Ա. ժողովը 1204 թ., Սսոյ Ե. ժողովը 1307 թ. և ևն.։ Պահլաւունիների և Լամբրոնի իշխանների յունասիրութեան մի այլ պատճառն էլ նրանց իշխանական ծագումն էր ու բիւզանդական արքունիքից յարգուած ու պատուած լինելը։ Այս իշխանական տները—Պահլաւունիք միմեանց յաջորդող մի քանի կաթուղիկոսներով և Լամբրոնի իշխանները, որոնցից էր Ներսէս Լամբրոնացին — Ռուբինեան ազգային իշխանութեան հետ էլ լաւ յարաբերութեան մէջ չէին։ Պարտական ենք Արևելեան կամ բուն Հայաստանի վանական հաստատութիւններին (Հաղբատ, Սանահին, Սիւնիք), որոնք յանձին Գրիգոր Տաթևացու, Քոբայրեցու և Ստեփաննոս Օրբելեանի, նշանակելով կիլիկեցւոց օտարասիրութիւնը, պաշտպանեցին հայ եկեղեցու ինքնուրոյնութիւնը։ Սիւնիքի Ա. ժողովը 1294 թ. կազմուած Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի նախագահութեամբ ու Արևելեան վարդապետների մասնակցութեամբ, վերջին ժողովն է, ուր միանգամ ընդ միշտ ապահովուեց հայ եկեղեցու առանձնայատուկ դրութիւնը կաթոլիկութեան և այլ եկեղեցիների ոտնձգութիւններից։

Այսպէս, Կիլիկիայում ապաստանած հայրապետների կրօնական խնդիրներում օտարասիրութեան դէմ տեսնում ենք Արևելեան կամ բուն Հայաստանի հոգևորականութիւնը ախոյեան կանգնած, իսկ Պահլաւունիների ու Լամբրոնացիների հակազգային ուղղութեան դէմ Ռուբինեաններին (Տես Ծերենց, Թորոս Լևոնի)։ Ընկաւ Ռուբինեան հարստութիւնը, յաջորդեց կիսակաթոլիկ Լուսինեան ցեղը, կաթոլիկութիւնը ազատ ասպարէզ դտաւ։ Կաթոլիկութիւնը այնպիսի ուժ ստացաւ Լուսինեանների օրով, որ հայք իրանք, այս կործանիչ ուժը խորտակելու համար Լևոն Զ.-ին, ըստ Դարդելու Լևոն Ե.-ին, մատնեցին Եգիպտոսի սուլթանի ձեռքը։

9. Հայրապետական աթոռի Վաղարշապատ տեղափոխուելը.—Կիլիկիայում քրիստոնեայ իշխանութեան անկմամբ, բարոյապէս ընկնում է Սսոյ Հայրապետանոցն էլ։ Ազգը էլ չի կարողանում հանդուրժել Սսի վերջին կաթուղիկոսների ապօրինի և դայթակղեցուցիչ արարքներին։ Նոյն ինքն կիլիկեցիք դիմում են Արևելեան հայերին չարիքի առաջը առնել՝ Հայրապետական Աթոռը տեղափոխելով իւր բնավայրն Վաղարշապատ։ Ազգը առաջարկում է Սսոյ վերջին կաթուղիկոս Գրիգոր Թ. Մուսաբէկեանին դալ Էջմիածին և այնտեղ դահակալել. երբ նա հրաժարւում է, Թոմա Մեծոփեցու ձեռներէցութեամբ 1441 թ. դումարւում է Վաղարշապատի Զ. ժողովը, ուր Վաղարշապատի Կաթուղիկէն կամ ս. Էջմիածինը հրատարակւում է Հայրապետարան՝ իսկ Կիրակոս Վիրապեցին՝ կաթուղիկոս ամենայն հայոց։ Գրիգոր Մուսաբէկեանը շարունակեց կրել կաթուղիկոս կոչումն, և ազգը, իւր թշուառութեան օրերում, չը կամենալով նոր խռովութիւնների տեղ տալ՝ լռելեայն թոյլ տուեց Սսի կաթուղիկոսութիւնը որպէս մասնաւոր թեմ, իւր վիճակների համար եպիսկոպոսներ ձեռնադրելու և միւռոն օրհնելու իրաւունքով։ Սակայն Սսոյ կաթուղիկոսները իրանց իրաւանց շրջանից դուրս դալով միշտ խռովութիւնների պատճառ էին դառնում. նրանց ապօրինի վարմունքի համար ներքին խռովութիւններն էլ Սսոյ թեմում անպակաս էին։

10. Հայրապետանոցի դրութիւնը Էջմիածնում.—Էջմիածին տեղափոխուած հայրապետանոցը սկզբում շատ էլ նախանձելի վիճակ չունէր։ Հայրապետների վերայ ծանրանում էին նախ և առաջ դարերով ամայացած ս. Էջմիածինը նորոգելու և նիւթապէս ապահովելու հոգսը, երկրորդ՝ ազգի բարոյական շինութեան գործը և երրորդ՝ մահմետական բռնակալների անիրաւ պահանջների պատասխանատուութիւնը։ Առաջին և երկրորդ պարտքերի կատարման մէջ ցանկալի յաջողութիւնը չէին կարողանում ունենալ, որով և ազգը յուսախաբութեան մէջ էր մնում։ Վաղարշապատ տեղափոխուած հայրապետանոցում մոռացութեան էին տրուել հայրապետանոցի աւանդական կարգ ու կանոնները. ամեն քայլափոխում նկատելի էին կամայականութիւն և անսահման թուլութիւն։ Տիրող մահմետական իշխանները թէ Կիլիկիայում և թէ Արարատում կաշառ առնելու ակնկալութեամբ քաջալերում էին փառամոլ հոգևորականների ոտնձգութիւնները, և այս իսկ պատճառով միաժամանակ մենք տեսնում ենք Էջմիածնի կամ Սսի անուամբ մի քանի կաթուղիկոսներ։

Ս. Էջմիածնում այս դրութիւնը շարունակուեց 1441—1629 թ., երբ Մովսէս Գ. Սիւնեցին կաթուղիկոս ընտրուելով իւր մաքուր վարք ու բարքով և անբասիր գործունէութեամբ սկիզբն դրեց ս. Էջմիածնի նիւթական և բարոյական վերածնութեան։ Մովսէս Գ.-ին 1633 թ. յաջորդեց Փիլիպպոս Ազբակեցին. սա ամեն բանով հետևող դտնուեց իւր նախորդին։ Սրա օրով ս. Էջմիածնում նոր-բանոր շինութիւններ եղան և այնքան բարեզարդուեց, որ օտարների աչքում և նախանձելի էր։ Հ. Ալիշան իւր Այրարատ գրքում (եր. 232—233) թարգմանաբար մէջ է բերում ֆրանսացի ուղևոր Տավերնիէի (Tavernier) նկարագրութիւնից ս. Էջմիածնի ճոխութեան վերաբերեալ հետևեալ կտորը. «Իսկ վասն ճոխութեան սպասուց և զարդարանաց եկեղեցւոյն (ի նուիրաց հայոց) ասէ, ոչ ուրեք հաւասար նմին տեսեալ յեկեղեցիս քրիստոնէից։ Բովանդակ դասն պըճնեալ էր վենետկեան ոսկեդիպակաւ և գեղոյն ընտիր կապերտիւք։ Ի վերայ սեղանոյն բազմէր խաչն ի միջի վեց ոսկեղէն աշտանակաց, իսկ ի վերայ ասպիճանացն չորք մեծամեծ աշտանակք արծաթիք հինգ ոտնաչափ բարձրութեամբ»։—Տավերնիէի նկարագրած ճոխութեան և ոչ մին կայ այժմ. ոչ վենետկեան ոսկեդիպակը, ոչ ոսկի աշտանակները և ոչ հինգ ոտնաչափ աշտանակները. ԺԷ և ԺԸ. դարերում կրկնուող ասպատակութիւններին աւար են դնացել դրանք։

Մինչև 1627 թ. երբ ս. Էջմիածինը սկսեց նորոգուել՝ ժամանակակից Առաքել պատմագիրը (եր. 232—234. տպ. Էջմ. 1884 թ.) ս. Էջմիածնի դրութիւնը այսպէս է նկա-

բագրում. «Ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամ ասել և կամ ընթերցումն. ոչ զգեստ և շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի Իշման Տեղն և սուրբ սեղանն ոչ ունէին ծածկոց. ոչ կանթեղք . . . կաթուղիկոսունքն՝ անդ յէջմիածին ոչ բնակէին, այլ յԵրևան քաղաք, ի կաթուղիկէ եկեղեցւոջն և կամ շրջակայութիւնս աշխարհաց. բայց սեագլուխք ոմանք սիլնքորք և գռեհիկք, որպէս զգիւղական հողագործս, որք վարնորդ մշակաք բնակէին յէջմիածին»։ — Այս և Տավերնիէի նկարագրութիւնը կարդալիս՝ մարդ զարմանում է թէ այնպիսի կարճ ժամանակում (1627—1655), 28 տարուայ ընթացքում, ինչպէս հնար եղաւ ս. Էջմիածինը այնքան ճոխացնել։ Այո, ոգևորութեան, բարի ցանկութեան, եռանդի և բարեաք վարչութեան շնորհիւ ամեն ինչ հնարաւոր է, ամենայն դժուարութիւն յաղթելի է։ Հենց մեր ժամանակում 1892—3 թ. կառուցուեց Մայր տաճարի արևելեան կողմը երկյարկ մի մեծ և հոյակապ շինութիւն՝ միաբանների համար. 1893—97 թ. ս. Հռիփսիմէի վանքը շրջապատուեց սրբատաշ քարեայ պարսպով, վանահայրական դեղեցիկ բնակարանով և այլ հարկաւոր շինութիւններով շնորհիւ Երեմիա Սրբազանի։

11. Փիլիպպոսի հոգաները եւ Սսի Սիմէոն կաթուղիկոս.— Փիլիպպոս կաթուղիկոսը իւր նախորդի շինարարական գործերը առաջ տանելով՝ միջոց էր գտնում ի սփիւռս աշխարհի վայրավատին եղած հայերի վիճակումն էլ զբաղուել։ Նրա աչքից չէին վրիպում ոչ Նիկոլ Թորոսովիչի անմիտ և եղուիտների խորամանկ ջանքերի շնորհիւ Լեհաստանի հայոց ողբալի վիճակը, ոչ Կ. Պոլսոյ պատրիարքարանի խառնակ և անվսեթար դրութիւնը և ոչ Կիլիկիայի կաթուղիկոսների յաւակնութիւնները. Կիլիկիայի կաթուղիկոսների՝ որոնք իրանց թեմի շրջանից դուրս վիճակների գործերին խառնուելով՝ մեծամեծ խռովութիւնների պատճառ էին դառնում։

Փիլիպպոս կաթուղիկոսը մի կոնդակով Սսոյ Սիմէոն կաթուղիկոսին ի զգուշութիւն է հրաւիրում և մի այլ շրջաբե-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922

Ս. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՐԱՆ

1005
20999

ական կոնդակով էլ յորդորում է Ծաճկաստանի հայերին իրանց հաւատարմութեան ուխտը անսասան պահել դէպի Մայր եկեղեցին, դէպի ս. Էջմիածինը և դէպի ամենայն հայոց կաթուղիկոսը։ Ահա այս կոնդակներին ի պատասխանի՝ Սսոյ Սիմէոն կաթուղիկոսը գրում է մի թուղթ, որ մենք մատդրուեցինք հրատարակել և որի մասին յետոյ։

Հայրապետական Աթոռը 1441 թուին ս. Էջմիածին տեղափոխուելուց յետոյ, ինչպէս վերն ասացինք, Սսում կաթուղիկոս անունը շարունակեց կրել Սսոյ վերջին կաթուղիկոս Գրիգոր ԺԱ. Մուսաբէկեան. նրա յաջորդները կրում էին «կաթուղիկոս տանն Կիլիկիոյ» տիտղոսը։ Սկզբում թէ ինչ քաղաքներ և վիճակներ էին մտնում Կիլիկիոյ թեմի մէջ՝ որոշ չէ կարելի ասել։ Սսոյ Սիմէոն կաթուղիկոսի թղթից կարելի է ենթադրել՝ որ Կիլիկիայի ամենամեծ քաղաքներն անդամ — Անկիւրիա, Ղոնիա կամ Իկոնիա, Կեսարիա, Մերսին ևն. Էջմիածնի իրաւասութեան տակ էին։ Սակայն Սիմէոնը իւր թղթի մէջ Երուսաղէմը Սսոյ թեմ է համարում, թէև հաստատ է, որ Երուսաղէմը միշտ ս. Էջմիածնին է վիճակուած եղել։

12. Էջմիածնին վիճակուած տեղերը ամենայն ուրեք.— ԺԸ. դարի վերջին կիսին Օսմանեան պետութեան մէջ, ինչպէս աւանդում է ամենայն հայոց կաթուղիկոս Սիմէոն Երևանցին (Ջամբռ գլ. Ե. Զ.) Էջմիածնին վիճակուած հայաբնակ գաւառները երկու տեսակ էին — նուիրական և տէրունի։ Նուիրական կոչւում էին այն գաւառները, ուր ս. Էջմիածինը նուիրակներ էր ուղարկում և այդ նուիրակների ձեռքով երեք տարին միանգամ ստանում էր նուիրական, դանձանական, հոգեբաժնական, և կտակով աւանդուած արդիւնքներն ու վիճեղէն, այսինքն առարկայական, յիշատակները, որպիսի են զգեստ, անօթ, սպաս ևն։ Առաջնորդական այն գաւառներն էին կոչւում, ուր առաջնորդական արդիւնքներն էլ ստանում էր Էջմիածնի ներկայացուցիչը։

Նուիրական տեղերն էին. — Ծաճկաստանում. — 1. Կ. Պոլիս, 2. Էմիրնէ կամ Ադրիանուպոլիս, 3. Փոքր-

Ասիական քաղաքները, 4. Ռումելու երկիր (Խրիմ, Բեսարաբիա, Ռումանիա), 5. Թոխատ, 6. Էնկիւրիա, 7. Էրզրում, 8. Կարս, 9. Բայազիտ, 10. Վան, 11. Դիարբէքիր՝ իրանց շրջակայքով։ Սիմէոն կաթուղիկոսը յիշուած կենդրոններին ենթակայ տեղերը անուն անուն յիշում է բացի Էրզրումից, Վանից և Դիարբէքիրից։

Պարսկաստանում.—1. Ասպահան, որ է Նոր-Ջուղայ, 2. Դաւրէժ, 3. Նախիջևան, 4. Երևան՝ իրանց շրջակայքով։

Առաջնորդական կենդրոններն էին. — 1. Զմիւռնիա, 2. Բաղդատ և Բասրա իրանց շրջակայքով, որի մէջ մտնում էին Հնդկայք ևս, 3. Գիլանու երկիրը (Ռաշտ, Անզալու, Սալիան, Մազանդարան, Լանքարուտ կամ Լէնքորան), 4. Վրաստան, 5. Ռուսաստան—Աժդէրխան, որին ենթարկւում էին Ռուսաստանի բոլոր հայերը։

13. Սսին վիճակուած տեղեր. — Սոյ Սիմէոն կաթուղիկոսի (ԺԷ. դար) և ս. Էջմիածնի Սիմէոն կաթուղիկոսի (ԺԸ. դար) առաջ բերած անուններից կարելի է եզրակացնել, որ Սսոյ կաթուղիկոսութեան ենթարկւում էին Հալէպի և Ադանայի կուսակալութիւններին ենթարկուող հայրենակ գաւառները։ Սսի թեմը Եփրատից դէպի արևելք և Հալէպի կուսակալութեան արևելեան և հարաւային սահմաններից դուրս չէր գալիս։ Այս նկարագիրը աչքի առաջ ունենալով 1441 թուից յետոյ Սսին վիճակուած էին միայն այն քաղաքները, որոնց ցուցակը դնում ենք, քաղելով սինոդի գործերից (գործ սինոդի 1882 ամի № 137 մասն I. և 1891 № 58) և Կ. Պոլսոյ ազգային հիւանդանոցի 1901 թ. ընդարձակ օրացուցից եր. 410)։

Սինոդի ճանաչած թեմեր.	Կ. Պոլսի պատրիարքարանի ցուցակ.
1. Սիս	1. Սիս
2. Ադանա	2. Ադանա և Բէրէքէթ
3. Բերիա կամ Հալէպ	3. Հաճըն
4. Անթափ	4. Հալէպ և Իսկէնդէրուն

5. Հաճին	5. Այնթափ և Քիլիս
6. Մարաշ	6. Անթաքիա (Անտիոք)
7. Զէյթուն	7. Մարաշ
8. Անտիոք և Պելէն (Անթաքիա)	8. Զէյթուն և Ֆոնուզ
9. Եօզղատ	9. Մալաթիա
10. Կիւրին	10. Եօզղատ
11. Տիվրիկ (Տաւրիկ)	11. Կիւրին և Մանսանճըգ
12. Մալաթիա և Պէչիան	12. Տիֆրիկ
13. Տարինտէ	13. Տարէնտէ

Այսպէս՝ Սսոյ թեմը սահմանափակուած է Տաւրոս և Անտիտաւրոս լեռների շղթայով, որ հարաւ արևմուտքից ձգւում է դէպի հիւսիս արևելք մինչև Եփրատ գետը, արևելեան կողմից՝ Եփրատ գետով, իսկ հարաւից՝ Հալէպի կուսակալութեան հարաւային սահմանով։ Բայց Սսոյ կաթուղիկոսները օգուտ քաղելով հանգամանքներից՝ իրանց իշխանութեան սահմանից դուրս էին գալիս, Էջմիածնին վիճակուած թեմերի համար եպիսկոպոսներ ձեռնադրելով և կարգադրութիւններ անելով։ Խնդրիս նիւթ եղող Սսի Սիմէոն կաթուղիկոսը իրան արդարացնում է առարկելով թէ իւր նախորդներն ևս եպիսկոպոսներ են ձեռնադրել Ղոնիայի, Կեսարիայի, Մերտինի, Մարսուանի և Անկիւրիայի վերայ։

14. Երուսաղէմի ժողով.—Իւր նախորդից արդէն բարեկարգուած հայրապետանոցն ու հայրապետական իշխանութիւնը ժառանգելով Փիլիպպոս կաթուղիկոսը չէր կարող անտարբեր մնալ դէպի ամեն մի գործողութիւն, որ ազգի մէջ խռովութեան և ս. Էջմիածնի իրաւանց սահմանափակման պատճառ էր լինելու։ Երջանկայիշատակ Փիլիպպոս կաթուղիկոսը իւր ազգարարութեան համար Սսոյ Սիմէոնից շատ կոպիտ պատասխան ստանալով՝ որոշեց գնալ Երուսաղէմ և վերադարձին Կ. Պոլիս հանդիպելով կարգի դնել այնտեղի խառնակ գործերը։ Մինչև Փիլիպպոսի Երուսաղէմ հասնելը՝ վախճանուել էր Սսոյ Սիմէոնը և նրան յաջորդել Ներսէսը, որ բարեբաղդաբար Երուսաղէմում գտնուեց։

Փիլիպպոսը Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքի գործակցութեամբ և Սսոյ Ներսէսի ներկայութեամբ հոգևորականներից և աշխարհականներից մի ժողով կազմեց Երուսաղէմում, ուր կարգի դրուեցին կաթուղիկոսական երկու աթոռների միջև տարակուսութիւն յառաջացնող խնդիրները։ Առաքել պատմագիրը (եր. 331—333. հրատ. 1896) ամբողջութեամբ մէջ է բերում ժողովի կանոնները. նոյնը երկրորդում է Հ. Զամչեան (պատմ. հայոց հատ. Դ. եր. 628—629) քաղելով Առաքելից։

Այս կանոնները, որ մեր եկեղեցու վարչութեան զանազան մասերի պարտքերն ու իրաւունքներն են պարզաբանում, աւելորդ չենք համարում դնել այստեղ, և ահա այն.

«Առաջին է սէր և միաբանութիւն երկուց աթոռոց կաթուղիկոսացն Էջմիածնի և Սսոյ, և իւրաքանչիւր կաթուղիկոս զիւրոյ վիճակի նուիրեալն ձեռնադրեսցէ և մի զայլոյ. և թէ դէպ լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ զոք, յիւրում վիճակին տեղաւորեսցէ զնա. և ձեռնադրեալն՝ թէ յայնմ կաթուղիկոսի վիճակէ փոխեսցի յայլ կաթուղիկոսի վիճակ, անընդունելի լիցի։

Երկրորդ՝ զի ինքն նուիրեալն ևս մի համարձակեսցի առ այլ կաթուղիկոս գնալ՝ թողլով զիւրն, այլ առ իւր կաթուղիկոսն։

Երրորդ՝ զի թարց խնդրանաց ժողովրդեան և վկայական թղթոյ մի ձեռնադրեսցի ոք յեպիսկոպոսութիւն։

Չորրորդ՝ ամենևին զինչ և իցէ պատճառաւ ոք եպիսկոպոս զայլոյ վիճակ մի յափշտակեսցէ։

Հինգերորդ՝ միոյ վիճակի մի լիցին երկու եպիսկոպոսք, և երկու առաջնորդք, բայց թէ կարի մեծ ինչ պատճառ ի մէջ գայցէ։

Վեցերորդ՝ մի համարձակեսցի եպիսկոպոս՝ յայլմէ վիճակէ զոք ձեռնադրել, ապա թէ համարձակեսցի լուծցի ինքն և իւր ձեռնադրեալն։

Եօթներորդ՝ զի եպիսկոպոս թէ ոչ հրամանաւ կաթուղիկոսին իւրոյ՝ այլ կաշառօք և այլազգեաց բռնութեամբ

համարձակեալ իշխեսցէ այլոյ վիճակի, լուծցի ի կարգէն։

Ութերորդ՝ մի համարձակեսցի ոք վարդապետ անխրտարաբար տալ իշխանութիւն վարդապետութեան ամենայն ումեք. եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ուսմամբ՝ և առաքինութեամբ, և հասակաւ, և աստուածային երկիւղիւ՝ և վկայեալ յամենեցունց, զի այսու պատճառաւ բազում անկարգութիւնք և դայթակղութիւնք մտին յեկեղեցի, և թէ ստունդանեալ քահանիցեն զայս հրաման, տուող իշխանութեանն անկցի ի պատուոյն. և առող իշխանութեանն անընդունակ լիցի։

Իններորդ՝ քահանայ և այլ ժառանգաւոր յիւրմէ եպիսկոպոսէ ընկալցի ձեռնադրութիւն հաւանութեամբ իւրոյ ժողովրդեանն, և թէ ոչ այսպէս, լուծցի ի կարգէն։

Տասներորդ՝ զիրաւունս և զհասոյթս՝ որ ի ժողովրդենէն կարգեալ է եպիսկոպոսաց և երիցանց, ըստ հրամանի հայրապետական կանոնաց, առցեն եպիսկոպոսք և երիցունք, և մի զմիմեանս զրկեսցեն, որոց վասն տրտունջ և դժգոհութիւնս յոլովս լսեմք հանապազ։

Մետասաներորդ՝ երիցունք մի զրկեսցեն զիրեարս՝ զմիմեանց ծուխն և զհասոյթն յափշտակելով. կամ կեղծաւոր բարեձևութեամբ և կամ այլազգեաց բռնութեամբ, այլ իւրաքանչիւր ոք իւրով բաժնաւն բաւականասցի, և թէ ոչ այսպէս, վատահողն լուծցի ի կարգէն։

Երկոտասաներորդ՝ յորժամ հանդերձեալ իցեն նշան ումեմն աղջկան յաղագս ումեմն երիտասարդի. մի իշխեսցեն առնել զայն կանայք, կամ ժողովրդականք, կամ երիցունք առանց բազում քննութեան. և կամ առանց դիտելոյ առաջնորդին. այլ քահանայքն քարոզեսցեն բազում աւուրս ի մէջ եկեղեցւոյն, և ծանուցցեն առհասարակ ամենեցուն, զի դուցէ ոք տեղեակ իցէ աղդացեղութեան նոցա, որոյ ի լսելն՝ եկեալ յառաջագոյն ծանուսցէ. և այսպէս յետ բազում քննութեանց՝ թէ ոչ գտցի աղդացեղութիւն ի մէջ նոցա, ապա յայտ յանդիման ամենայն քահանայից և ժողովրդոց՝ քահանայք օրհնեսցեն զնշանն զայն՝ և հաստատեսցի գործն։

Երեքտասաներ որդ՝ այլի երիցունք, թէ իցեն պարկեշտք և ծերք, և կամ ունիցին մանկունս սնուցանելոյ՝ կացցեն յեկեղեցին, և թէ ոչ այսպէս, գնասցեն ի վանս և յանապատս. և թէ ոչ գնասցեն, ի բաց կացցեն ի ժառանգութենէ և ի կարգէ»։

15. Սսի կաթուղիկոսների ոսնձգութիւնները. — Սակայն այս կանոնները կարճ ժամանակ միայն ունեցան բարերար ազդեցութիւն մեր եկեղեցական վարչական կազմի մէջ։ Երևանցի Սիմէոն կաթուղիկոսը այս ժողովից մի դար յետոյ Սսոյ վերաբերութեամբ գրում է (Ջամբռ գլ. ԺԲ. եր. 98—99). «Տես դու այժմ զՍսեցւոց կանոնապահութիւնն, որոց կաթուղիկոսք եպիսկոպոս ձեռնադրեն, որոց չև է ժամանակ սարկաւագութեան, որոց ոչ զուստին գիտեն և ոչ զորպէսն, և մանաւանդ բազմիցս մին զմին ընկենու և զտեղին յայլորդէ և երկուքն ևս զեպիսկոպոսունս ձեռնադրեն։ Որպէս ի մերում ժամանակի Ղուկասն ընկեցեալ ի Հաճին գեօղն նստէր և Միքայէլն ի Սիս. Ղուկասն զչատս ձեռնադրէր քան զՄիքայէլն՝ միոյ հօխայ զահֆէի և այլովք այսպիսօք։ Իգնատիոս աբեղայի միոյ զէշն առեալ ձեռնադրեաց զինքն եպիսկոպոս. ի միւս օրն ձեռնադրեալն զէշն իւր առեալ փախեաւ։ Նմանապէս և եպիսկոպոսունքն յաձեալ ի վիճակս որոյ և իցէ՝ շրջեալ ի տանէ ի տուն, ի ծակէ ի ծակ, ձեռնադրեն զքահանայս և զայլ աստիճանաւորս, չը գիտելով զինչ լինելն։ Եւ վարդապետքն՝ որք չև են ժամանեալ ի Ի. (20) ամս, ընդ աբեղայութեանն առնուն զծայրագոյն դաւազան, յորս գրէ թէ ոչ գտանի աբեղայ և մանաւոր վարդապետ, այլ որք են՝ են ի ծայրագոյն աստիճանի։ Թողցուք զայսպիսիս։ Ցաւուրս Ղազարու կաթուղիկոսին մերոյ ճահկեցւոյ (ի ՌՃՂԸ—1749 թ.) ... Միքայէլ կաթուղիկոսն Սսոյ եկն ի Կոստանդնուպոլիս, և անկաւ առ յոմանս իշխանս ի տանէն Սսայ, և կամէր ոտն ածել ի վերայ էջմիածնի խնդրելով ի վիճակաց սորին զոմանս նահանգս զսահմանակիցս վիճակին իւրոյ ...»։

16. Հոգեւոր վարչութեան անկեալ վիճակը. — Սակայն ԺԷ. ԺԸ դարերում միայն Սսոյ թեմում չէին գործւում այսպիսի ապօրինութիւններ. մենք գիտենք դէպքեր, որ ԺԹ դարի մէջ են կատարուել, օրինակ. ԺԹ. դարի եօթանասնական թուականի սկիզբներին ոմն Երեմիա եպիսկոպոս Տ. Սարգսեան Վանեցի «այցելու Հայաստանի» մեծահնչիւն տիտղոսով շրջում էր Տաճկաստանի հայաբնակ գաւառները և քահանաներ ձեռնադրում սիմոնականութեամբ. նա կամեցել է Կարսի վիճակում ևս, որ այն ժամանակ տաճկաց իշխանութեան տակ էր, քահանայ ձեռնադրել. Կարսի առաջնորդ Հանգուցեալ Յովհաննէս եպիսկոպոս Ռշտունի տեղական իշխանութեան ձեռքով հեռացնում է նրան. սակայն նա ժամադիր է լինում իւր ձեռնադրելիք տիրացուների հետ, որոնք համարեա բոլորն էլ անգրագէտ էին, և Կարսի սահմանից դուրս Բագրեւանդի առաջին գիւղում ձեռնադրում է։ Մենք այդպիսիներից երիքին պատահեցինք Ծղնի գիւղում, ուր հինգ քահանայ կային, և անհնարին եղաւ նրանցից ուրիշ գիւղերի համար քահանայ կարդել, որովհետև անկարող էին միայնակ ժամասել և օրէնք կատարել։ Նման դէպքեր հարիւրներով կարելի է թուել։ Եթէ հանգամանքները մեզ ներէին, կարող էինք յանուանէ յիշել, թէ ինչպէս մի թափառաշրջիկ եպիսկոպոս մի անչափահաս պատանու քահանայ է ձեռնադրում։ Բայց մենք դառնանք բուն խնդրին։

17. Սսի եւ Աղթամարի կաթուղիկոսական ընտրութիւն եւ կաթուղիկոսների յարաբերութեան խնդիր. — Սսի և էջմիածնի յարաբերութիւնները *) աւելի սուր կերպանք ստացան Սսի վերջին Մկրտիչ կաթուղիկոսի և ամենայն հայոց Գէորգ Դ. կաթուղիկոսի օրով։ Սսոյ թեմը, յանձին Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանի, և Աղթամարայ թեմը յանձին Յովհաննէս վարդապետ Սեթեանի 1866 թ. յուլիսի 12 մասնակցեցին Կ. Պոլսոյ եկեղեցա-

*) Հայրապ. Հայաստ. Առաք. ս. եկեղ. և Աղթ. ու Սիս. Մատթ. եպիսկոպոս Իզմիրլեան 1881։

կան վիճակային ժողովին ամենայն հայոց հայրապետութեան համար ընտրելիների եօթնանուն ցանկը պատրաստելու։ Այս ցանկը պատրաստելուց մի երկու օր յետոյ նոյն եկեղեցական վիճակային ժողովը զբաղուեց Աղթամարայ և Սսոյ կաթուղիկոսական գործերով։ Ժողովը անվաւեր ճանաչեց թէ Աղթամարայ Խաչատուրի և թէ Սսոյ Նիկողայոսի կաթուղիկոսութիւնը, որովհետև նրանք ապօրինաբար էին գրաւել յիշեալ աթոռները։ Որոշուեցին նոր ընտրելիներ.

Աղթամարի համար	1. Յակովբ եպ. Թոփուզեան	23 ձայնով.
	2. Մկրտիչ վրդ. Խրիմեան	22 »
	3. Երեմիա վրդ. Բաղիշոյ	20 »
Սսի համար	1. Ներսէս եպ. Վարժապետ.	21 »
	2. Արիստակէս եպ. Ադանայի	17 »
	3. Յովհաննէս եպ. Եդեսեան	15 »

Սսի և Աղթամարի ընտրելիների ցանկերը գործադրութիւն չըստացան. միայն Էջմիածնի կաթուղիկոսական ընտրելիների ցանկը ուղարկուեց Ս. Էջմիածին, ուր Համազգային Ժողովի մէջ 1866 թ. սեպտեմբերի 15—17-ին Բրուսայի արքեպիսկոպոս Գէորգը ընտրուեց ամենայն հայոց կաթուղիկոս որ և վարեց իւր իշխանութիւնը Գէորգ Դ. անուամբ։ Այս Համազգային Ժողովին Տաճկաստանի հայերի 65 վիճակների կողմից Կ. Պոլսոյ պատրիարքի և տեղւոյն երեսփոխանական ընդհանուր ժողովի յանձնարարութեամբ պատգամաւոր էին կարգուած հոգևորականներից՝ Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան և աշխարհականներից՝ Յակովբ էֆէնտի Նուրատունկեան։

Կ. Պոլսոյ Պօղոս Բ. պատրիարքը ընտրուած ու հաստատուած ամենայն հայոց Գէորգ Դ. հայրապետի ներկայութիւնը Կ. Պոլսում պատեհ առիթ համարելով՝ ներկայացնում է Նորին Սրբութեանը Սսի և Աղթամարի կաթուղիկոսական խնդիրը։ Գէորգ Դ. 1867 փետրվարի 6-ին մի մասնաժողով է կարգում, որի մէջ էր նաև Սսի ապագայ կաթուղիկոս Մկրտիչ եպիսկոպոս Մարաշեցին։ Մասնաժողովը յարաբերութեան հետևեալ ծրագիրն է կազմում.

«Ա. Կաթուղիկոսունքն Սսոյ և Աղթամարայ ընտրին ի վիճակայնոց իւրեանց և յընդհանուր ժողովոյն Կ. Պոլսոյ, յորմէ առաջարկին առ Վեհափառ կաթուղիկոսն ամենայն հայոց ի վաւերացումն և ի հաստատութիւն»։

«Արդէն ի ցեղէ Աղվանահեանց Սսոյ բարձեալ է ընտրութիւն կաթուղիկոսական ընդհանուր հաւանութեամբ ազգին, արժանաւորաց և եթ սեպհականելով զայն»։

«Բ. Կաթուղիկոսունքն Սսոյ և Աղթամարայ զօծումն կաթուղիկոսական ընդունին ի ձեռաց Վեհափառ կաթուղիկոսի ամենայն հայոց ի ս. Էջմիածին»։

«Արդէն ըստ սմին օրինակի Աղուանից, Վրաց և Ասորւոց կաթուղիկոսունքն ձեռնադրէին ի սրբազան յաջորդէ Լուսաւորչին Հայաստանեայց»։

«Գ. Կաթուղիկոսունքն Սսոյ և Աղթամարայ ըստ բաղմամեան սովորութեան կարող են ձեռնադրել եպիսկոպոս՝ ընդունելով յառաջագոյն զգրաւոր հաւանութիւն Հայրապետին ամենայն հայոց»։

«Ձեռնադրեալ եպիսկոպոսունք ըստ թուոց թեմից վիճակի իւրեանց միայն պարտին լինել, զոր և պարտ է որոշել և սահմանել»։

«Դ. Կաթուղիկոսունքն Սսոյ և Աղթամարի պարտին յիշել ի ս. պատարագի զանուն Վեհափառ կաթուղիկոսին ամենայն հայոց, իսկ եպիսկոպոսունք, վարդապետք և քահանայք Սսոյ և Աղթամարայ պարտին նախ յիշատակել զանուն Վեհափառ կաթուղիկոսին ամենայն հայոց և յետոյ զանուն կաթուղիկոսի վիճակին»։

«Ե. Վեհափառ կաթուղիկոսի սրբոյ Էջմիածնի միայն է սեպհական ստորագրել կաթուղիկոս ամենայն հայոց, իսկ Սսոյ և Աղթամարայ կաթուղիկոսաց կոնդակաց վերատառութիւնն լինելոց է կաթուղիկոս տանն Կիլիկիոյ, կաթուղիկոս տանն Աղթամարայ. իսկ ստորագրութիւն նոցա կաթուղիկոս Սսոյ, կաթուղիկոս Աղթամարայ»։

«Զ. Ի կրօնական դժուարին խնդիրս կաթուղիկոսունք Սսոյ և Աղթամարայ պարտին զվերջին որոշումն ընդունել

յընդհանուրական Հայրապետէ անցի սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց»։

Գէորգ Դ. յարաբերութեան որոշումները յանձնում է պատրիարքին գործադրելու, բայց չէ գործադրւում (Հայրապ. Հայաստ. առաք. ս. եկեղ. եր. 639—650)։

Սսի Նիկողայոս և Աղթամարի Խաչատուրի ապօրինի գրաւումն յիշեալ կաթուղիկոսական աթոռների դեռ չէր վերջնականապէս կարգադրուած. Կ. Պոլսոյ կենդրոնական վարչութիւնը ցանկանում էր ոչ միայն Սսոյ Նիկողայոսի և Աղթամարայ Խաչատուրի գործը կարգադրել, այլ ապագայ անկարգութիւնների առաջքն էլ բռնելու համար միջոցներ ձեռք առնել, ուստի և յանձնարարում է խառն ժողովին «Սսոյ և Աղթամարայ կաթուղիկոսական խնդրի համար տեղեկագիր պատրաստել»։ Տեղեկագիրը պատրաստւում է, բայց դարձեալ չէ գործադրւում, վասն զի տպագրած մի օրինակը հասնելով ս. Էջմիածին՝ Գէորգ Դ. մերժում է յանուն Պոլոս պատրիարքի ուղղած մի ազգարարական կոնդակով 1868 թ. ապրիլ ամսին։

Այս կոնդակի մէջ Սսոյ Սիմէօնի և ս. Էջմիածնի Փիլիպպոս կաթուղիկոսների միջև եղած տարաձայնութիւնների մասին ակնարկութիւն կայ ըստ այսմ. «Ո՞չ գիտէք յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսի, որ էր յամին 1651, հակաթոռքն այնոքիկ իբրև ապստամբք հռչակեալ կային ամենայն ուրեք և ոչ երբէք կարէին համարձակ մուտ գործել ի վիճակս Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, ոչ յայնժամ և ոչ յետ նորա ամենեին։ Զի թէպէտ եղաւ անդանօր յԵրուսաղէմ ուխտ, ի միջի ունել սէր առ միմեանս և այն յօգուտ համադգեաց, բայց ոչ իրաւասութիւն հաւասար. վասն զի այլ է պայման սիրելոյ զմիմեանս և այլ իրաւասութիւն իշխանութեան» (Հայապ. Հայաստ. եր. 711—735)։

18. Կ. Պոլսոյ կենդրոնական վարչութիւնը Սսի կաթուղիկոսական խնդրի առիթով.—Կ. Պոլսոյ կենդրոնական վարչութեան մէջ դեռ հրատապ խնդիրներից առաջինն էր Սիսն ու Աղթամարը. Գէորգ Դ. շատ հետաքրքրւում

էր այդ խնդիրներով, ուստի և 1869 թ. սեպտեմբերի 4-ին պատրիարքը ընտրուած Մկրտիչ արքեպիսկոպոսի ընտրութիւնը չնորհաւորելով Գէորգը նորընտիր պատրիարքի ուշադրութիւնն է հրաւիրում Սսոյ և Աղթամարայ խնդիրը լուծելիս՝ պաշտպան հանդիսանալ ամենայն հայոց հայրապետի իրաւանց՝ որով և ազգի լրութեան միութեան սուրբ և մեծ գործին։ Գէորգը պնդում էր, որ Սսոյ և Աղթամարայ կաթուղիկոսների ընտրութիւնը սահմանափակուի իրանց թեմերի մէջ։ Այս կոնդակը որ տրուած էր 1870 թ. յունվարի 2. թ. 9. զանազան մեկնութիւնների ենթարկուեց, իբր թէ Գէորգ կաթուղիկոսը այդ կոնդակում Սսի և Աղթամարի համար գրած լինէր «Թոյլ տուք մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց»։

Կ. Պոլսի ազգային ժողովը 1870 թուի Բ. Դ. Դ. Ե. Զ. Է. նիստերի մէջ զբաղուելով Սսի և Աղթամարայ խնդիրներով՝ յանդում է չորս կէտերի կամ առաջարկութեան, որոնց համառօտութիւնն է.

Ա. Ս. Էջմիածնի հայրապետը ս. Լուսաւորչի յաջորդն է. իսկ Սսի և Աղթամարի կաթուղիկոսները եկեղեցական անիշխանութենէ ծագած են և ապօրինաւոր: Ազգային ժողովը, որ թուրքիաբնակ, բայց ս. Էջմիածնի թեմական հայոց ներկայացուցիչն է, պէտք չէ նրանց ընտրութեանը մասնակցի. վասն զի այս մասնակցութիւնը ս. Էջմիածնէն հրաժարում կը նշանակէ։ Պէտք է որ Սսոյ և Աղթամարայ թեմականները կամ զատ զատ երկերկու ընտրելի պատրաստեն, որոնցից մէկին ս. Էջմիածնայ Հայրապետը Սսի և միւսին Աղթամարայ կաթուղիկոս հաստատի և կամ թոյլ տալ, որ թեմականները հին սովորութեան համեմատ իրանց ուզածն ընտրեն իրանց առաջնորդ կամ կաթուղիկոս (առաջարկ Ռուբէն էֆ. Կիւմուշկէրտեանի)։

Բ. Համայն հայոց, ուր ուրեք և կան նրանք, Հոգեւոր գլուխը ս. Էջմիածնի կաթուղիկոսն է. իսկ Սսոյ կաթուղիկոսը ս. Էջմիածնի կաթուղիկոսի հակաթոռն է. բայց պէտք է պահել այն իւր ազատ պաշտօնավարութեամբ։ Բայց, որպէս զի Ազգային կենդրոնական վար-

չութիւնից անկախօրէն կատարուելով նրա ընտրութիւնը՝ բոլորովին անջատ մարմին չը կազմի, Ազգային ժողովը, որի գլուխն է ս. Էջմիածնի կաթուղիկոսի փոխանորդ պատրիարքը, պէտք է ընտրէ Սսոյ կաթուղիկոսին կամ նրա ընտրութեանը մատնակցի, որով անուղղակի կերպով կը միանայ նա ընդհանուր եկեղեցու հետ (առաջարկ Գրիգոր էֆ Օտեան)։

Գ. Հայոց ազգի և Հայաստանեայց ս. եկեղեցւոյ հոգեւոր ընդհանուր տեսչն ու հայրապետը ս. Էջմիածնի կաթուղիկոսն է... իսկ Աղթամար և Սիս մասնաւոր կաթուղիկոսներ են. պէտք է պահեն իրանց կաթուղիկոսական յաջորդութիւնն, և իբրև բարձր աստիճանաւորներ՝ պէտք է ազգային ժողովով ընտրուեն. և որպէս զի ազգային եկեղեցական իշխանութեան միութիւնից ու ամբողջութիւնից բաժանուած իբրև ազատ գլուխներ զատ մարմին չը լինեն, պէտք է նրանց թէ կրօնապէս և թէ քաղաքականապէս ենթարկել Կ. Պոլսոյ պատրիարքին, որ բոլոր Թուրքիոյ հայոց պետն՝ ու ս. Էջմիածնի ընդհ. կաթուղիկոսի փոխանորդն է, և պէտք է ճշդել ու սահմանել ս. Էջմիածնի ընդհ. հայրապետի, Կ. Պոլսոյ պատրիարքի և Սսոյ ու Աղթամարի թեմական առաջնորդների յարաբերութիւնների ու պաշտօնավարութեան եղանակը (առաջարկ Ստեփան էֆ. Փափազեանց)։

Դ. Արարատեան Աթոռոյ — ս. Էջմիածնի գահակալն է Հայաստանեայց ս. եկեղեցւոյ վարչութեան գլուխը, ազգի հոգեւոր գերագոյն պետը եւ ամենայն հայոց ճշմարիտ աստուածընտիր հայրապետը. իսկ Աղթամարայ և Սսոյ աթոռակալները դաւառական (Սսոյ և Աղթամարայ) պարզ առաջնորդներ կամ վանահայրեր, միմիայն այն հոգեւոր առաւել արտօնութեամբ, որ եպիսկոպոս են ձեռնադրում և ս. միւռոն օրհնում. ուստի և ըստ իրաւանց և ազգային սահմանադրութեան նրանց ընտրութիւնը պէտք է, որ Աղթամարայ և Սսոյ թեմական ժողովրդեան սահմանադրապէս ներկայացուցիչ ժողովները կատարեն,

և կենդրոնը, այսինքն կենդրոնական վարչութիւնը վաւերացնէ (առաջարկ Նահապետ էֆ. Ռուսինեան)։

Ազգային ժողովը բացարձակ առաւելութեամբ, հետը հաշուելով իւր նախագահ պատրիարք Մկրտիչ արքեպիսկոպոսի քուէն, ընդունում է, որ «սահմանադրապէս իբրև դաւառական առաջնորդի մը ընտրութիւն, Աղթամարայ և Սսոյ վանահայր առաջնորդաց կամ վիճակաւորաց ընտրութիւնը դաւառինն է, վաւերացումն՝ կենդրոնինն է»։

Այսպէս, Ազգային ժողովը իւր Ը. նստին, լսելով իւր նախագահ պատրիարքի յայտարարութիւնը, (թէ. «եթէ այսօր այս երկու կաթուղիկոսութեանց խնդիրը կենդրոնէն դուրս ելլէ, ընդհ. ժողովին չը տրուի ընտրութեան վաւերացումն, ես կը պարտաւորիմ պատրիարքութենէ հրաժարուելու») քուէից մեծամասնութեամբ ընդունում է, որ Աղթամարայ և Սսոյ վանահայր վիճակաւորաց ընտրութեան վաւերացումն Ազգային ժողովը կատարի (Հայրապ. Հայաստ. եր. 787—857)։

19. Սսի կաթուղիկոսի ընտրութիւնը. — Ազգային ժողովը Սսոյ և Աղթամարի կաթուղիկոսական ընտրութեան խնդիրը այսպէս ձևակերպելուց յետոյ Սեֆերեան Սիմէոն եպիսկոպոսին և Յովհաննէս էֆէնտի Ֆրէնկեանին Սսոյ կաթուղիկոսական ընտրութեան տեսուչ է նշանակում, որոնք Բ. Դրան մի պաշտօնեայի հետ 1871 թ. սեպտեմբերի սկիզբներին հանում են Ադանա և Քաղաքական ժողովի հրահանգին համեմատ կազմում են դաւառական ընտրողական ժողովը։ Հոկտեմբերի 21 և 22 ժողովներում քուէարկութեամբ կազմում են վեց ընտրելիների ցանկը. ընտրելիներն էին.

1. Մկրտիչ եպ. Մարաշցի՝ առաջ. Բերիոյ 33 ձայն.
2. Ներսէս եպ. Վարժապետեան առաջ. Նիկոմիդիոյ 28 ձայն.
3. Մկրտիչ եպ. Խրիմեան պատրիարք Կ. Պոլսոյ 20 ձայն.
4. Արիստակէս եպ. Դերձակեան առաջ. Դաղատիոյ և Եօզղատի 17 ձայն.

5. Սիմէօն եպ. Սեֆերեան միաբան ս. Երուսաղէմի 12 ձայն.

6. Եսայի պատրիարք Երուսաղէմի 11 ձայն։

20. Քաղաքական ժողովի պահանջը նորընտիր կաթուղիկոսից.—Այս ցուցակը հեռագրով հաղորդւում է Կ. Պոլիս՝ Քաղաքական ժողովին, որը եղծելով ցանկից Կ. Պոլսոյ Մկրտիչ և Երուսաղէմի Եսայի պատրիարքների անունները, նոյն ցանկը հեռագրով վերադարձնում է Սբ. Սոյ կաթուղիկոսական ընտրողական ժողովին՝ վերջնական ընտրութիւն կատարելու համար։ Ժողովը նոյն հոկտեմբերի 27-ին վերջին անգամ գումարուելով 35 քուէներից 28 քուէով կաթուղիկոս է ընտրում Բերիայի առաջնորդ Մարաշցի Մկրտիչ եպիսկոպոսին, որ 1860 թ. ս. Էջմիածնում Դաղատիայի եպս. էր ձեռնադրուած։ Ընտրողական ժողովի տեսուչները հեռագրով խնդրում են Կ. Պոլսոյ Քաղաքական ժողովից ընտրութեան շուտափոյթ վաւերացումն։ Քաղաքական ժողովը նոյն հոկտեմբերի 29-ին պատրիարքի ստորագրութեամբ յայտնում է. «վաւերացման ստիպողականութիւնը կը ճանաչեմք, բայց գիտէք թէ Ընդհանուր ժողովը որոշած է յարաբերութեան խնդրէն եֆը կատարել, որ հարկաւ կերկարի։ Ուստի կրնայ Մկրտիչ սրբազան հեռագրել մեզ, և վարչութեան անուան նամակ մը յանձնել ձեզ թէ, Ընդհ. ժողովոյ յարաբերութեանց մասին ընելիք տնօրէնութիւնը կընդունի, որպէս զի վաւերացումն անմիջապէս կատարուի. այն ատեն հեռագրով զինքը շնորհաւորելով՝ յիշատակութեան հրահանգը կրնամք տալ» (Հայրապ. Հայաստ. եր. 858)։

Անշուշտ, ոչ մի խելքը գլխին մարդ չի համաձայնի իւր մասին մի կարգադրութիւն ընդունել՝ նախապէս չիմանալով թէ ինչ է այն, մանաւանդ եթէ ընդունելը լուր կամքից կախուած լինի։ Մկրտիչ Մարաշցին, որի փառասիրութեան և շահասիրութեան անզուսպ ձգտումն անց էր սահմանից, Քաղաքական ժողովի կէս պաշտօնական կէս մտերմական, ի վերին երեսա՝ միամիտ առաջարկու-

թեանը, որը պատրիարքի ստորագրութիւնն էր կրում, ձգձգում է յայտնել, թէ «յարաբերութեանց մասին ընելիք տնօրէնութիւնը կընդունի»։ Մկրտիչ Մարաշցին իւր գործը վարպետութեամբ կարգի է դնում։ Սիմէօն եպիսկոպոսը նոյեմբերերի 7-ին հեռագրում է պատրիարքի, թէ, «Սոյ կաթուղիկոս ընտրուած Մկրտիչ Մարաշցին Կենդրոնական Վարչութեան որոշածը յարդել կը խոստանայ», և նոյեմբերի 9-ին էլ՝ թէ, Մկրտիչ սրբազան յանձներ է իրեն վարչութեան անուան պէտֆ եղած խոստմնագիրը»։

21. Ազգային ժողովի խաբուած լինելը. — Ազգային ժողովը 1871 թուի նոյեմբերի 12-ին Լդ. նիստին հաւատալով որ Մկրտիչ Մարաշցին տուել է պահանջուած խոստմնագիրը՝ վաւերացնում է նրան Սոյ կաթուղիկոս ընտրուելը. կաթուղիկոսի օծումն Կ. Պոլսոյ պատրիարք Մկրտիչ Խրիմեանցի յանձնարարութեամբ 1871 թուի նոյեմբերի 28-ին կատարում է Սիմէօն եպիսկոպոսը։ Մկրտիչ Մարաշցին դառնում է կաթուղիկոս տանն Կիլիկիոյ, բայց խոստմնագիրը 1871 թուի նոյեմբերի 8-ին ուղղուած Կ. Պոլսոյ պատրիարքի անունը, չէր այն, ինչ որ պահանջում էր։ Ահա խոստմնագրի էական կէտը... «Ուստի սոյն ամենածանր և փափուկ պաշտօնը վարելու եղանակին մէջ ինչպէս ս. Էջմիածնայ կաթուղիկոսը և ս. Երուսաղէմի պատրիարքը, նոյնպէս և նուաստս ալ ազգային կենդրոնական ընդհ. ժողովոյ յօգուտ մեծի աթոռոյս Կիլիկիոյ և Հայաստանեայց ս. եկեղեցւոյ ըրած որոշումները յարդել կը խոստանամ»։

Սոյ Մկրտիչը խոստանում է յարդել Ազգային Ընդհ. ժողովի, յօգուտ մեծի աթոռոյն Կիլիկիոյ, որոշումները ս. Էջմիածնի կաթուղիկոսի և ս. Երուսաղէմի պատրիարքի նման։ Ինչ կասկած որ այս խոստումն արժանի էր այն առաջարկութեան՝ որ եղել էր նրան հոկտեմբերի 29-ին։ Ս. Երուսաղէմի պատրիարքի անունը խոստմնագրում մէջ բերելը բոլորովին աւելորդ էր. որովհետև «յարաբերութեանց մասին ընելիք տնօրէնութիւնը» Էջմիածնի, Սոյ

և Աղթամարայ կաթուղիկոսութիւնների միջև էր ծագած։ Մկրտիչ Մարաշցին հէնց առաջին օրից, դեռ չօծուած, իրան և իւր հետ Սսոյ աթոռը հաւասարացնում է Էջմիածնի աթոռին, և «յարաբերութեան մասին ընելիք տնօրէնութիւնը» խոստանում է յարգել, եթէ կը լինի այն յոգուտ մեծի աթոռոյն Կիլիկիոյ։ Սսոյ Մկրտիչը այս խաղը անպատիժ խաղալուց յետոյ շարունակեց իւր ոտնձգութիւնները ամենայն Հայոց հայրապետի և Կ. Պոլսոյ կենդրոնական վարչութեան դէմ։ Մահը միայն վերջ դրեց նրա՝ ազգային իշխանութեան դէմ բռնած ինքնակակար ընթացքին և Կիլիկիայի ոտն համար ոչ միայն ապարդիւն, այլ և ինքնակար պաշտօնավարութեանը։ Անհերելի փաստերութիւնն ու ընչասիրութիւնը և յաւակնութիւնները Կ. Պոլսոյ կենդրոնական վարչութիւնից անկախ դիրք ըստանալու, չափ ու սահման չունէին։

22. Դէորգ Դ.-ի վերաբերմունքը դէպի Սսի եւ Աղթամարի կաթուղիկոսութիւնները. — Հանգուցեալ Դէորդ Դ. նախատեսելով այս ամենը, ամեն ջանք գործ էր դնում հարկադրել Կ. Պոլսոյ Կենդրոնական Վարչութեանը, որ Սսոյ խնդրում զգուշութեամբ վարուի. նա իւր խիզախ ընաւորութեամբ խնդրին շատ սուր կերպարանք տուեց՝ Սսի և Աղթամարի կաթուղիկոսութիւնները ապօրինի, հերձուած և հեստեալ համարելով և պատրիարքարանից վերին ատիճանի դժկամակ մնալով։ Դէպի պատրիարքարան ու ժամանակի պատրիարքը իւր դժգոհութիւնը յայտնում էր հանգուցեալ Դէորդ կաթուղիկոսը Տաճկաստանից եկած եպիսկոպոսացուների ձեռնադրութեան ժամանակ, որին ականատես և ականջալուր ենք եղել։ Նա պատրիարքարանի վարմունքը համարում էր դրժումն այն ուխտի, որ տրուած էր Մայր Աթոռին հաւատարիմ մնալու համար։ Այդ ժամանակ համարեա դադարեց Տաճկաստանի եպիսկոպոսների ձեռնադրութիւնը։ Երկու անձն ենք յիշում, որ եկան այդ ժամանակ ձեռնադրուելու, մէկը՝ Խորէն Աշղեան՝ Արմաշու վանահայր մինչ Մամբրէ Մամիկոնեան՝ Մշոյ ս. Կարապետի վանքի։

23. Սսի Մկրտչի ոտնձգութիւնները. — Նրանք, որոնք նպաստել էին Սսի կաթուղիկոսութեան խնդրին յօգուտ Մկրտիչ Մարաշեցու, վերջինիս ոտնձգութիւնների ժամանակ դադարած էին Կենդրոնական Վարչութեան զեկավարը լինելուց։ Դէորդ կաթուղիկոսը տեսնելով, որ իւր ազգարարական կոնդակները Կ. Պոլսոյ Կենդրոնական Վարչութեան մէջ պատշաճաւոր ուշադրութեան չեն առնուում, խնդրի ամենասուր ժամանակին ստիպուեց ձեռնադրութեան ժամանակ եպիսկոպոսացուներին հարկադրել, որ ս. Էջմիածնին ու նրա դահակալ ամենայն Հայոց հայրապետին հաւատարմութեան երդումն տալիս՝ ապօրէն, հեստեալ և հերձեալ համարեն Սսի և Աղթամարի աթոռները։ Այս կէտը երդման թղթի մէջ հետևեալ բանաձևն ունի. «Երրորդ, խոստանամ և ուխտեմ հաւատարիմ լինել սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց իմոց, և կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս, յորում ընտրութեամբ Հոգւոյն սրբոյ անդատին յառաքելոցն սրբոց ի նախկին Լուսաւորչացն Հայաստան աշխարհիս և յօրինաւոր յաջորդէ նոցին ի սրբոյն Գրիգորէ առաքելաշաւիղ հայրապետէ մերմէ անընդհատ դասաւորութեամբ և ուղիղ յաջորդութեամբ բազմեալ կայ այսօր Տ... կաթուղիկոս ամենայն հայոց և օրինաւոր յաջորդաց նորին, յարգելով և կատարելով զամենայն հրամանս, որ ի սրբոյ Աթոռոյ աստի ի վերայ իմ դնիցին. ոչ երբէք ի կողմն ելանել այլոցն կաթուղիկոսական անուանեալ անվաւեր աթոռոց, որք հեստեալ կան մինչև ցայսօր ի միոյ միայնոյ երևելի գլխոյ եկեղեցւոյս Հայաստանեայց՝ ի Սիս և յԱղթամար, այլ մանաւանդ հոգ ի մտի դնել միշտ ի մի միաբանութիւն ժողովել զհամօրէն որդիս սրբոյ Լուսաւորչին ընդ միով իշխանութեամբ յաջորդաց սրբոյ Աթոռոյս։ Տ. Դէորդ Դ. 1876 թուին տպագրել տալով եպիսկոպոսի ձեռնադրութեան Մաշտոցը, դրեց այնտեղ և երդման օրինակը մէջ բերուած հատուածով։

24. Մանուսակագոյն վեղար. — Սսոյ Մկրտիչ կաթուղի-

կոսի ոանձգութիւնները վերջ չունէին, փառասիրութիւնը անսահման էր։ Կ. Պոլսոյ Կենդ. Վարչութիւնը, որ նպաստել էր Սսի կաթուղիկոսական խնդրին, որի մէջ և Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան, փոշմանել էր, բայց արդէն ուշ էր։ Մկրտիչ կաթուղիկոսը առարկելով որ Սսի Աբրահամ կաթուղիկոսը, ընտրուած 1740 թուին, մանուշակագոյն վեղարով գնաց Հռովմ, և սրանից եղրակացնելով՝ որ Սսի կաթուղիկոսները ուրեմն մանուշակագոյն վեղար էին գործ ածում, ինքն ևս սկսեց նոյն գունով վեղար գործածել։

Մանուշակագոյն վեղարի խնդիրն ևս բաւական ժամանակ յուզեց Կ. Պոլսոյ Կենդրոնական Վարչութեանը. սակայն Մկրտիչ կաթուղիկոսը անողոք մնաց։ Աբրահամ պապական եպիսկոպոսը Սսի կաթուղիկոս կոչումն կը-ռում էր որպէս տիտղոս, որպիսին կրում են մինչև ցայսօր Կ. Պոլսոյ հայ կաթոլիկների պատրիարքները։ Աբրահամ Աթարը մի վաճառական էր. սա Լիբանանու Մառոն պատրիարքի հաճութեամբ մի վանք հաստատեց։ Հետզհետէ ընդարձակուեց այս վանքը և կարևոր դիրք ստացաւ։ Բերիայի (Հալէպ) Աբրահամ եպիսկոպոսը դուրս գալով Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի իրաւասութեան տակից՝ Բերիայի հայ կաթոլիկ ժողովրդից 1740 թ. կաթուղիկոս ընտրուեց և անձամբ գնալով Հռովմ՝ հայ կաթոլիկ միաբանութեան կաթուղիկոս հաստատուեց։ Արդ, եթէ Սսի Մկրտիչ կաթուղիկոսը գիտէր, որ Աբրահամը ծիրանի վեղարով է գնացել Հռովմ, պէտք է գիտենար, որ նա իբրև կաթոլիկ է ծիրանի վեղար դրել. ուրեմն, ինքն հայ մնալով՝ իրաւունք չունէր հայ եկեղեցու օրէնքներին և սովորութիւններին հակառակ ծիրանի վեղար դնել։

25. Մկրտիչ կաթուղիկոսի ընթացքը ընդհանուր կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ.—1882 թ. դեկտեմբերի 6-ին վախճանուեց Տ. Գէորգ Դ.։ Ս. Էջմիածնի Սիոնոյը հայրապետի մահը հաղորդեց Կ. Պոլսոյ պատրիարքարանի միջոցով Տաճկաստանի հայերին, և իւր ժամանակին էլ պաշտօնաթղթերով հրաւիրեց թեմերից մի մի

հոգևորական և աշխարհական պատգամաւորներ մասնակցելու հայրապետի ընտրութեան համար ս. Էջմիածնում 1884 թ. մայիսի 7—9 գումարուելիք համազգային ժողովին։

Կ. Պոլսոյ Ներսէս պատրիարքը 1884 թ. յունվարի 1-ին թ. 190 գրութեամբ Տաճկաստանի Հայոց վիճակայիններին հետ հրաւիրում է Սսի Մկրտիչ կաթուղիկոսին և նրա վիճակայիններին էլ մասնակցելու ս. Էջմիածնի ամենայն Հայոց հայրապետի ընտրութեանը։ Կաթուղիկոսի յանձնարարութեամբ Կիլիկիայի հոգևորականներից 4 եպիսկոպոս, 3 ծայրագոյն, 1 հասարակ վարդապետ և 4 քահանայ 1884 թուի փետրվարի 5-ին ուղղում են կաթուղիկոսին մի թուղթ (Արարատ 1884, մայիս. երես 186—87), որ այսպէս է սկսւում. «Կիլիկեան ս. Աթոռոյս հայոց միաբան սինոդական ծառայքդ...»։ Այս թղթի մէջ ասեցիք ասում են. «Ի Կիլիկեան ընդհանրական կաթուղիկոսութենէ Արարատեան ս. Աթոռոյն կաթուղիկոսութեան բաժանման թուականէն ի վեր ոչ ոք ի հոգելոյս կաթուղիկոսաց սրբոյ Աթոռոյս մասնակցած է ընտրութեանց սրբազան կաթուղիկոսաց Արարատեան ս. Աթոռոյն, և ոչ ս. կաթուղիկոսունք նոյն ս. Աթոռոյ մասնակցած են ընտրութեանց ս. կաթուղիկոսաց ս. Աթոռոյս». որ՝ 1866 թուին Գէորգ Դ. կաթուղիկոսի ընտրութեանը Սսի Աթոռը չէ մասնակցել, եթէ մասնակցած էլ լինէր, «այս անգամ պարտաւորեալ չէ մասնակցիլ ընտրութեան ս. կաթուղիկոսի Արարատեան ս. Աթոռոյ, քանի որ նոյն Աթոռն Կիլիկեան ս. Աթոռս անվաւեր, զկաթուղիկոսութիւնն հեստեալ եւ հերձեալ և զժողովուրդն մեռեալ հրատարակած է կոնդակօք վերջին դահակալին իւրոյ...», ուստի և գրում են. «Միաձայն հաւանութեամբ որոշեցինք որ ս. Աթոռս (Սսոյ) չը մասնակցի ընտրութեան ս. կաթուղիկոսի Արարատեան ս. Աթոռոյ, որպէս զի... իւր այդ ոչ-մասնակցութեամբն թէ առ ինքն առաջարկեալ նորաձևութիւնը հերքած և մերժած լինի առ ի պաշտպանութիւն իւրոյ վեցդարեան հնաւանդ դրութեան և թէ ըստ վերոյիշելոյն ապօրէն հրատարակութեամբ և արար-

քով Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ օրինաց հակառակ գործող Արարատեան Աթոռին զգուշութեան և պարտուց ու իրաւանց ճանաչման դաս մը տուած լինի, որպէս երբեմն ըրած էր հոգելոյս կաթուղիկոսն Կիլիկիոյ Տ. Սիմէօն առ հոգելոյս կաթուղիկոսն Արարատայ Տ. Փիլիպպոս ուղղելով պաշտօնական գիր մը»։ Այս թղթի մէջ Ներսէս պատրիարքը անուանուած է Սսի միաբան։

Կ. Պոլսոյ Կաթուղիկոսական Ցանձնաժողովի կողմից Ներսէս պատրիարքը մարտի 6-ին 1884 թուին Սսի կաթուղիկոսին ուղղած մի գրութեամբ (Արարատ 1884 թ. մայիս. եր. 188—95) կէտ առ կէտ հերքում է Սսեցիների պատճառաբանութիւնները և յորդորում «հաստատուն պահել զկապ միութեան սրբոյ եկեղեցւոյս և ի բաց թողուլ զամենայն հակառակաբանութիւն . . .»։

Պատրիարքի այդ թղթից մենք իմանում ենք որ, Կիլիկիայի կաթուղիկոսութեան վերաբերեալ մի ծրագիր է կազմուած, որ 1881 թուի հոկտեմբերի 26-ին Մկրտիչ կաթուղիկոսը ընդունել է և դարձրել պատրիարքարանին գրելով «ընթերցաք և հաւանելով ստորագրեցինք». իսկ այդ ծրագրի առաջին յօդուածում ասուած է. «Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ Դահակալն լինելով միմիայն ընդհանրական Հայրապետն ամենայն հայոց, որոյ ընտրութեան կը մասնակցին նաև Կիլիկիոյ թեմականք, Տանն Կիլիկիոյ կաթուղիկոսն ճանչցած է, կը ճանչնայ և պիտի ճանչնայ նորա գերագահութիւնը»։

Մի տարի առաջ Սսի Մկրտիչը ստորագրութիւն է տալիս թէ «միայն ս. Էջմիածնի Մայր Աթոռի Դահակալն է ամենայն Հայոց ընդհանրական հայրապետ». այս բանը քարոզում է եկեղեցում, և, Կ. Պոլսոյ ս. Երրորդութեան եկեղեցում պատարագելիս՝ յիշում է Գէորգ Դ..ի անունը. մի տարի յետոյ, Սիսն է անուանում ընդհանրական աթոռ իսկ Էջմիածինը հատուած։ Մի տարի առաջ ասում է ս. Էջմիածնի ընդհանրական հայրապետի ընտրութեանը կը մասնակցեն նաև Կիլիկիոյ թեմականք. մի տարի յետոյ գրում է թէ իրանք ամենևին մասնակցած չեն եղել Էջ-

միածնի կաթուղիկոսի ընտրութեանը, և 1884 թ. ընտրութեանը մասնակցելու հրաւէրը անուանում են նորաձեւութիւն։ Առ այս Ներսէս պատրիարքը գրում է. «Ցուշ ածեմ Ձեզ զի յընտրութիւն Հայրապետի ամենայն Հայոց յամի 1866, ըստ որոշման Ազգային Երեսփոխանական ժողովոյ, աթոռն Կիլիկիոյ մասնակցեցաւ, և ես ինքն էի յայնժամ, որպէս գիտէք, Փոխանորդ աթոռոյդ՝ ընտրեալ ի կաթուղիկոսական Տեղապահէ աթոռոյն, և յանուն վիճակիդ մասնակցեցայ յընտրութիւն կաթուղիկոսին ամենայն Հայոց թէ յեկեղեցական վիճակային ժողովի, և թէ յԱզգային Երեսփոխանական ընդհանուր ժողովի . . .»։

Ներսէս պատրիարքը անհերքելի ապացոյցներով հաստատելով որ սսեցիք միշտ ընդունել են ս. Էջմիածինը որպէս Մայր Աթոռ և նրա գահակալը յաջորդ Ս. Լուսաւորչի, ասում է. . . .«Նախորդն Ձեր Տէր Կիրակոս Բ.-դ կնքէ կանոն և գիր դաշնագրութեան . . . յամի Տեառն 1856 ի հնգետասան աւուր ամսեանն յուլիսի, որոյ մեսասաներորդ վերջին յօդուածն է այսպէս. «Որովհետև Միածին Որդին Բանն Աստուած էջ ի յԱրարատ ոսկի ուռամբն հարկանելով զերկիր գրեաց զտեղին լուսանկար զառաջին եկեղեցին ազգիս Հայոց՝ ուստի ստացաւ անուն Էջմիածին, վասն որոյ լրութիւն ազգիս Հայոց ըստ աստուածային յայտարարութեան զնա ճանաչէ գլուխ և Մայր Աթոռ, թէև գահակալք Նորին Լուսաւորչեան ս. Աթոռոյ ի ժամանակս թագաւորութեան Հայոց աստանդական տարշրջութեամբ երթային ընդ թագաւորի և ի տեղիս տեղիս Հայրապետանոց հաստատեցին, բայց ի բառնել իսպառնսպուռ թագաւորութեան Հայոց յամենայն տեղեաց՝ յատկացաւ ս. Էջմիածին լինել Մայր Աթոռ եւ Հայրապետանոց ազգիս լրութեան. զայս այսպէս ճանաչելով՝ հպատակիմք Դահակալի Լուսաւորչեան Մայր Աթոռոյ սրբազնակատար կաթուղիկոսի ամենայն Հայոց և մեամ ընդ կամաք և ընդ հրամանաւ Նորին Վեհապետի յամենայն ժամ և յամենայն դէպս»։—Այս հատուածին աւելցնում է հանգուցեալ պատրիարքը. «Զայս քանիցս յայտարարեալ

է ինձ նոյն [արժանայիշատակ] նախորդն Ձեր Տէր Կիրակոս, պատրաստ ցուցանելով զանձն ընդունելոյ զամենայն կարգադրութիւնս, զորս արասցէ Կենդրոնական Վարչութիւնն, և ընդունելով զնախագահութիւն Էջմիածնի։ Որպէս և մեք, յորժամ զառաջին եպիսկոպոսական պատրաստն մատուցանէաք ի ս. Տաճարին Սսոյ, սովին դաշամբ յիշեցաք նախ զանուն կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի, յամին 1862, ի ներկայութեան անդ Տեառն Կիրակոսի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»։ Այս ասելով հանգուցեալ պատրիարքը կամենում է հասկացնել՝ որ ինքն Սսում ձեռնադրուելով հանդերձ տեղւոյն կաթուղիկոսի հետ ընդունել են ս. Էջմիածնի կաթուղիկոսի նախագահութիւնը և կախումն ս. Էջմիածնից. և յիրաւի, Ներսէսը իբրև եպիսկոպոս պաշտօնավարելով ս. Էջմիածնին վիճակուած (Նիկոմիդիայի, Կ. Պոլսոյ) թեմերում, նախքան պատրիարք ընտրուելը՝ գալիս է ս. Էջմիածին և ս. Իջման սեղանի առաջ երդման ուխտով էլ հաստատում է իւր հաւատարմութիւնն ու հպատակութիւնը ս. Էջմիածնի Մայր տաճարին ու նրա Գահակալին։

Հանգուցեալ պատրիարքը ակնարկելով 1881 թուի հոկտեմբերի 26-ին յիշեալ ծրագիրն՝ գրում է Մկրտիչ կաթուղիկոսին. «Եւ ըստ այսմ յայնմհետէ և այսր բարձան ամենայն հերձեալ կամ հեստեալ բանք անախորժք, մինչդեռ բանքդ այդոքիկ ասացեալ են յառաջ քան զտոտրագրութիւն Ձեր զայս, վասն որոյ աւելորդ իմն էր յիշատակել զբանսն զայնոսիկ, իբրու թէ նոր ինչ իցեն, և թէ Ազգն հաւան գտանիցի ընդ այդ»։ Այսպէս ուրեմն հարթուած էր տարաձայնութեան մեծ կնճիռը։ Բայց Սսի Մկրտիչը, չը նայելով որ ինքն իւր ստորագրութեան մէջ միշտ գործ էր ածում ս. Էջմիածնի միաբան եպիսկոպոս տիտղոսը, ձեռնադրութեան ժամանակ ևս ուխտել էր ընդունելու Մայր Աթոռի գահակալին «Եպիսկոպոսապետ և Ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի և կաթուղիկոս ամենայն Հայոց», թէ իւր բազմամեայ եպիսկոպոսութեան և

թէ Սսում կաթուղիկոս օծուած օրը յիշատակել էր ամենայն Հայոց հայրապետին, այնու ամենայնիւ՝ յամառուած մնայ իւր հակառակասիրութեան մէջ։

Մենք Արարատի 1884 թ. մեր խմբագրութեամբ հրատարակուած մայիս ամսատետրից քաղուած օրէն մէջ բերինք Սսի միաբանների թուղթը և պատրիարքարանի պատասխանը, որովհետև դրանք շատ լաւ պարզում են մեր նպատակին ենթակայ խնդիրը։

26. Աջապահեանք. — Մկրտիչ Մարաշցու ընտրութեամբ Սսի կաթուղիկոսական աթոռը ազատուեց Աջապահեանների ձեռքից, որոնք ժառանգաբար 1734—1866 տիրում էին այդ աթոռին։ Ահա թէ ինչպէս յառաջացան Աջապահեանք։ Հէքիմ օղլի Ալի փաշան Սսի Գրիգոր կաթուղիկոսից հիւրընկալութիւն վայելելով՝ ասել էր. եթէ վեղիկոսից հիւրընկալութիւն վայելելով՝ ասել էր. եթէ վեղիկոսը դառնամ, արքունի հրովարտակ կըտամ Սսի կաթուղիկոսարանը նորոգելու համար։ Աջապահեան Ղուկասը, որ Գրիգոր կաթուղիկոսի աշակերտը լինելով ներկայ էր այդ խոստմանը, Բերիոյ առաջնորդ եղած ժամանակ երբ լսեց, թէ Հէքիմ օղլի Ալի փաշան վեղիր է դարձել՝ ընտրեց Կ. Պոլիս և 1734 թ. ստացաւ Սսի կաթուղիկոսարանի նորոգութեան և իւր ու իւր ցեղի համար ժառանգաբար կաթուղիկոսանալու հրովարտակը։ Աջապահեան կաթուղիկոսներից օրինական կարգով կաթուղիկոս ընտրուել և բնական մահով վախճանուել են շատ սակաւները։ — Աջապահեան առաջին կաթուղիկոս Ղուկասը 1734 թուին հաստատուելով 1737-ին գահընկէց եղաւ։ Նրան յաջորդեց իւր եղբայր Միքայէլը 1737—57. Ինչպէս գրում է Սիմէոն կաթուղիկոս Երևանցին Ջամբռում (գլ. ԺԲ, եր. 78—89) սա երկու անգամ գնում է Կ. Պոլիս ս. Էջմիածնին վիճակուած թեմերը գրաւելու. երկու անգամ էլ հեռացուում է այն տեղից. «Դիշերայն հալածեցին ի քաղաքէն և ի սրբոյ Էջմիածնի վիճակէն իսկ։ Արքունական հրովարտակաւ հանին զնա ի քաղաքէն և ի վիճակէն Էջմիածնի, այնպէս որ, մի ևս կոխեսցէ զվիճակս սրբոյ Էջմիածնի կաթուղիկոսն Սեբաստայ» (տես և Հայրապ. Հայաստ. եր. 464—66)։ Ղուկասի

միւս եղբայր Դաբրիէլը (1757—70 թ.) սեպտեմբերի 10-ին սպանուեց Սսի բռնաւորից, Ղուկասի եղբօրորդի Եփրեմը (1771—84 թ.) թունաւորուում է Սսի իշխողից ու վախճանուում, Թորոս Դ. Սսեցի (1784—1801) յաջողուում է թողան օղլուց, Թորոսի եղբօրորդի Կիրակոս Ա. 1801—22 թ. թունաւորուում է տեղի իշխողից։ Կիրակոսի եղբօրորդին Եփրեմ Բ. Աջապահեան 18 տարեկան հասակում (1822—33) կաթուղիկոսանում է, բայց հրաժարուելով հեռանում։ Միքայէլ Բ. (1846—58 թ.) Սսի աթոռը յետին անշքութեան է հասցնում, շատ անգամ իւր ապօրինի գործերի համար յանդիմանուում Կ. Պոլսոյ պատրիարքարանից։ Կիրակոս Բ. (1858—66) վերջին Աջապահեանն էր, որ մահից յետոյ Նիկողայոս եպիսկոպոսը 1866 թ. յունիսի 11-ին գրաւեց Սսի աթոռը գիշերային գաղտուկ օծուելով։ Կ. Պոլսոյ պատրիարքարանը կամ Կենդրոնական Վարչութիւնը գահընկէց արեց Նիկողայոսին և ուղարկեց Արմաշու վանքը։ Նիկողայոսը իւր կեանքի վերջին օրերին վերադարձաւ Կիլիկիա և 1880 թուին վախճանուեց Ադանայում (Արաքս 1894—95 թ. գիրք Ա. եր. 123)։

Աջապահեաններից արժանաւոր հանդիսանում են. Եփրեմ Ա. (1771—84 թ.) որպէս գրագէտ։ Սա գրել է Կիլիկիոյ տան կաթուղիկոսութեան, և մասնաւորի՝ Աջապահեանների պատմութիւնը. և Կիրակոս Ա. (1801—22թ.) որպէս շինարար։ Սա նորոգել է Սսի Հայրապետանոցը և պարապատ արել։ Կիրակոսը Սսեցիներից կոչւում է Կիրակոս Մեծ։

27. Սսի Մկրտչի հակազգային ընթացքը. — Ժառանգաբար իրար յաջորդող (1734—1866 թ.) Աջապահեան կաթուղիկոսներից յետոյ առաջին անգամ օրինաւոր կարգով ընտրւում է Մկրտիչ Մարաշեցին։ Սա եթէ կամենար կարող էր խաղաղասիրութեամբ, օրինական կարգերից չշեղուելով, շինարարութեան և բարեկարգութեան համար գործ դնելով իւր եռանդը՝ արդարացնել ընտրողների դէպի ինքն տածած համարումն։ Բայց նա, այս բաներից և ոչ մին արեց. Մկրտիչ Մարաշցին վախճանուեց

1894 թ. նոյեմբերի 14-ին, որի յաջող պատկերը և կենսագրութիւնը զետեղուած է «Արաքս» հանդիսում (1894—95 թ. գիրք Ա. եր. 121—137)։

Այդ կենսագրականի մէջ ի միջի այլոց կարդում ենք. «Կը յիշեմ միայն—իբրև պատմական նիւթ — նոյնիմաստ երկու թագրիներ, զորս Նորին սրբազնութիւնը ասկէ տասն տարի առաջ կուղղէր Օսմանեան մեծ եպարքոսին և դատական նախարարին։ Այդ գրութեանց մէջ հանգուցեալ կաթուղիկոսը կը յայտնէ, թէ իր աթոռին իրաւանց դէմ Կ. Պոլսոյ պատրիարքարանի կողմէն անիրաւ ձեռնմխութիւն կը լինի ի նպաստ Ռուսիոյ (իմա Էջմիածնի) կաթուղիկոսութեան, թէ «Միացեալ Ընկերութիւն» անուանեալ մի մարմնոյ կողմէ խռովարկուներ կը խրկուին Կիլիկիոյ քաղաքները, թէ ինքն Օսմանեան պետութեան ծառայելու նպատակաւ միայն ստանձնած է կաթուղիկոսական պաշտօնը և թէ իր ամսաթոշակներուն անվճար մնալէն յուսահատած՝ վանքը փակելու և բանալիները Ադանայի նահանգապետին յանձնելու պիտի հարկադրուի»։

Այս փոքրիկ հատուածի մէջ ճշդութեամբ պատկերացած է Մկրտիչ կաթուղիկոսը. նա ամենայն Հայոց հայրապետութիւնը համարում է միայն Ռուսիոյ հայրապետութիւն կամ կաթուղիկոսութիւն, նա Միացեալ Ընկերութեան Կիլիկիա ուղարկած ուսուցիչներին անուանում է խռովարկուներ։ Նա Օսմանեան տէրութեանը ծառայելու նպատակով է միայն ստանձնել կաթուղիկոսութիւնը։ Նա սպառնում է Օսմանեան նախարարներին, որ եթէ իւր ամսաթոշակները չստանայ վանքի բանալիները պէտք է յանձնի Ադանայի կուսակալին։ Օսմանեան պետութիւնը անշուշտ, նրա ծառայութիւնը գնահատելով՝ կըտար նրա ամսաթոշակները, և այդ բաւական էր Մկրտիչ կաթուղիկոսին։

Եթէ Սսի Մկրտիչ կաթուղիկոսը Դէորդ Դ. կաթուղիկոսի մահից յետոյ արդարանում էր գրելով. «Այս անգամ պարտաւորեալ չէ մասնակցել ընտրութեան ս. կաթուղիկոսին Արարատեան ս. Աթոռոյ, քանի որ նոյն ս. Աթոռն Կիլիկեան ս. աթոռս անվաւեր, զկաթուղիկոսու-

թիւնն հեստեալ և հերձեալ և զժողովուրդս մեռեալ հը-
բատարակած է կոնդակօք վերջին գահակալին իւրոյ և ըստ
այնմ ձեռնադրութեան Մաշտոց տպել տուած է, և ի նոյն
վերջին հանգուցեալ կաթուղիկոսէ ձեռնադրեալ եպիսկո-
պոսներէն ըստ այնմ երդմնագիր առած է ...»։ Եթէ արդա-
բանալու տեղիք կարծում էր թէ ունի իւր թեմականնե-
րով չը մասնակցելու Տ. Գէորգ Դ.-ի մահից յետոյ ս. Էջ-
միածնում գումարուելիք կաթուղիկոսական ընտրութեան
համազգային ժողովին, Տէր Մակար կաթուղիկոսի մահից
յետոյ նա էլ պատճառ չունէր հրաժարուելու, վասն զի
հանգուցեալ հայրապետը իւր խոհեմ և խաղաղասէր բը-
նաւորութեամբ տարաձայնութիւններին և թիւրիմացու-
թիւններին վերջ տալու համար սիրոյ կոնդակ է գրում
Սսոյ և Աղթամարի կաթուղիկոսներին, եպիսկոպոսների
ձեռնադրութեան երդմնագրի միջից եղծում է նոյն ա-
թոռների վերաբերութեամբ անվաւեր և հեստեալ բա-
ռերը և սկիզբն է դնում լաւ յարաբերութեան։ Ընդհան-
րական հայրապետի այս բարի ցանկութեանը արձագանք է
տալիս միայն Աղթամարայ Խաչատուր կաթուղիկոսը, որը
Մակար կաթուղիկոսի օծմանը իւր կողմից ներկայացու-
ցիչ էր ուղարկել Յովսէփ եպիսկոպոս Խոստեղեանին։

Մկրտիչ կաթուղիկոսը իւր փառասիրութեամբ ու
արծաթասիրութեամբ զբաղուած՝ առանց Սսի վիճակին
վոյթ ունենալու թափառում էր։ Նրա կենսագրութիւնը
առանդողը (Արաքս 1894—95 եր. 120—137) գրում է.
«Եւ մինչդեռ շաբաթներն ու ամիսները կը սահէին և
էական խնդիրը մոռացուած կը մնար, մի օր ալ յանկարծ,
Տ. Մկրտիչ կաթուղիկոս թօթափեց պատրիարքարանի
լուծը, թօթափեց իւր ոտից փոշին և հեռացաւ Պոլի-
սէն... Սուլթանին կողմէ նոր պէրաթ, մեճիտիէ շքա-
նշան և 35 ոսկի ամսական ստանալու մասին Տ. Մկրտիչ
կաթուղիկոս բարձր պաշտպանութիւն վայելեց և իր հը-
նօրեայ բարեկամ ճէվտէթ փաշան—արդարադատութեան
նախարարը—վրիժառուի մը հաճոյքով դիտեց այս առթիւ
պատրիարքարանի մէջ տիրող իրարանցումը»։

«Տարակոյս չըկայ թէ Տ. Մկրտիչ կաթուղիկոսի տե-
սակէտով մի յաղթութիւն էր այս։ Նոր պէրաթին և ա-
ռաջնակարգ շքանշանի շնորհիւ այլ ևս համարատու չէր
պատրիարքին. Մկրտիչ կաթուղիկոսի դրամասիրութիւնը
գայթակղական աստիճանի հասած էր. դրամն իրեն ոչ թէ
միջոց, այլ նպատակ էր։ ... Եւ մամնային այս գերակը-
շիռ հեղինակութեան առջև ոչ միայն մոռացուեցան ազ-
գօգուտ հիմնարկութիւնները, — ինչպէս միաբանութիւն,
մասուլ, ուսումնարան ևն.— այլ և խոնարհեցաւ կաթու-
ղիկոսին նշանակութիւնը, անզօր մնաց իր ձայնը և այս-
պէս՝ ոչինչ կամ աննշան յաջողութեամբ վերջացան իր
այլևայլ բարենպատակ ձեռնարկները»։ Կենսագիրը խօսե-
լով Մկրտիչ կաթուղիկոսի արծաթասիրութեան համար ա-
սում է. «Այսչափ միայն յիշեմ, որ իր որոշմանց և ձեռ-
նարկներուն աղդող մի հաշիւ էր այն։ Վարժարաններ
հիմնելու կամ խափանելու, հոգևորականներ ձեռնադրե-
լու կամ լուծելու և հրամաններ շնորհելու կամ չնչելու
մէջ կը նշմարուէր նոյն շարժառիթը։ Հասոյթ գանձելու
համար իր ճանապարհորդութիւնները ... վերջ չըգտան»։
Այսքան բացասական կողմերի հետ ունէր լաւ քարոզչի
համբաւ, թափանցող միտք, համոզելու շնորհ և բարձր
հասակ, եթէ այդ ևս կարելի է արժանաւորութիւն հա-
մարել։ Բակուրան վերջացնում է Սսի Մկրտիչ կաթուղի-
կոսի կենսագրութիւնը, գրելով. «Ցո՛ւ թէ Հայաստանեայց
հօտին համար մի բարեգուշակ զուգադիպութիւն լինէր
տեսանել Պէգասեան թռչնիկը թառած Սսոյ լերան գա-
գաթը, մինչ Վասպուրական Արծիւը կը հսկէ Արարատի
բարձանց վերայ»։

Մկրտիչ կաթուղիկոսը վախճանուեց 1894 թ. 14 նոյեմ-
բերի և Սսի կաթուղիկոսական խնդիրը նոր շրջանի մէջ մտաւ։

28. Երկու աթոռների յարաբերութեան բաւոնումն.
— Երկու Աթոռների հակառակասէր ախոյեանները, Գէ-
որգ Դ. Էջմիածնի և Մկրտիչ Սսի, հեռացան ասպարիզից։
Ս. Էջմիածնի գահակալ Մկրտիչ Ա. կաթուղիկոս ինքն էր
իւր պատրիարքութեան ժամանակ Սսի կաթուղիկոսի ընտ-

ղութիւնը յառաջ մղողը, ինքն էր այժմ նախանձախնդիր՝ որ Սսի թափուր գահի համար կաթուղիկոս ընտրուի, և ընտրուեց Գրիգորիս եպ. Ալէքսիանեան, որը հմբաւ էր ստացել ոչ թէ տոկուն գործունէութեան, այլ պատահական դէպքերի շնորհիւ։ Գրիգորիս Ալէքսիանեանի չընտրուելով Հայաստանեայց եկեղեցին ընդհանրապէս և Սսի աթոռը ի մասնաւորի՝ բան չկորցրին։ Մենք հետեւել ենք, այժմ հանգուցեալ, Գրիգոր եպ. Ալէքսիանեանի գործունէութեանը։ Նրա հրատարակած «Թուչնիկ Պէգասեան» տասնօրեայ հանդէսը այն ասուլներից էր, որոնք Կ. Պոլսում յաճախ երևում և անհետանում էին ամենևին հետք չթողնելով։ Նրա պաշտօնավարութիւնը երկնկայում և Մշում առաջնորդական պաշտօնով շատ տևական և լուսաւոր հետք չեն թողել։ Նոյնը լինելու էր և Սսում։ Մինչդեռ ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի լուսաբարապետ Տ. Սահակ եպիսկոպոս Խաբայեանի ընտրութիւնն ու գահակալելը ցանկալի մի դիւտ է հայ եկեղեցու համար։ Սահակ կաթուղիկոսին մենք ճանաչում ենք անձամբ. նա ուսումնասէր, անբասիր և եկեղեցու իրաւանց ու կարգերի նախանձախնդիր անձն է. նա 1903 թ. մարտի 29-ին հասել է Սիս և ս. օծումն ընդունել ապրելի 20-ին մեծ հանդիսով։ Օծումը կատարուել է դուրսը, եկեղեցու դաւթում պատրաստուած սեղանի վերայ։ Օծման րոպէին ըստ Լումայի «բազմութիւնը իւր հրճուանքը ծափահարութիւններով է յայտնում. բոլորովին աւելորդ և նոյն իսկ անպատշաճ գործողութիւն եկեղեցական արարողութեան ժամանակ» (1903. մայիս–յունիս)։ Մենք ըստ ամենայնի համակարծիք ենք Լումայի խմբագրութեան՝ յաւելցնելով միանգամայն որ Օծումն ու ս. Պատարագը եկեղեցական խորհուրդ լինելով՝ պէտք է եկեղեցում կատարուեն խորհրդաւորութեամբ։ Սակայն վերջին տարիներս եկեղեցական խորհուրդները հրապարակական հանդէսների կերպարանք են ստացել և ծափահարութիւնները այնտեղ, ուր երկիւղած լռութիւն է հարկաւոր, սովորական բան։

Սահակ կաթուղիկոսի ընտրութիւնը կատարուած էր

օրինական կարգով Սսի թեմականներից, վաւերացած Կ. Պոլսոյ Կենդ. Վարչութիւնից և հաստատուած Օսմանեան պետութիւնից։ Մենք ուրախ ենք որ Սահակ սրբազանը ընտրուեց Սսի կաթուղիկոս որովհետև Նորին սրբազնութիւնը օրինաւորութեան սահմանում վերջ տուեց ս. Էջմիածնի և Սսի բաղմայոյզ խնդրին. վերջ ստացան այն այլ ընդ այլոյ գուցէ և նենգամտութեամբ տարածուած լուրերը, թէ ջանքեր են լինում Սսի կաթուղիկոսութիւնը միացնել Կ. Պոլսոյ պատրիարքութեան հետ ու Տաճկաստանի անկախ կաթուղիկոսութիւն հրատարակել։ Սրբազան Սահակի ընտրութեամբ և օծմամբ Հայաստանեայց ս. եկեղեցու միութիւնը ամրապնդուեց։ Տայ Աստուած, որ Սահակ կաթուղիկոսի երկայնաւորը իշխանութեամբ հայ եկեղեցին վայելէ ցանկալի անդորրութիւն։ Սահակ կաթուղիկոսը իւր օծման օրը ս. պատարագին, յիշել է ամենայն Հայոց Հայրապետ Մկրտիչ Ա.-ին։

Բ.

ԹՈՒՂԹ

ՍԻՄԷՈՆԻ ՍՍՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ա Ռ

ՓԻԼԻՊՊՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՆԱԽԱԲԱՆ

1. Սսի Սիմէօն կաթուղիկոսի թուղթը. — *Հայրապետական Աթոռի մասին իմ համառօտ տեսութեան մէջ մի քանի անգամ յիշուեց Սսի Սիմէօն կաթուղիկոսի թուղթը, գրուած ս. Էջմիածնի ամենայն Հայոց կաթուղիկոս Փիլիպպոսին։ Ընթերցողներին այդ թղթի հետ ծանօթացնելու համար կցում եմ նաև այդ թուղթը, որով և կատարած կը լինեմ 1900 թուի «Արարատ»-ի ապրիլ ամսատետրում երես 210 արած խոստումս։*

1881 թուին փոխանորդ էի Աղէքսանդրապօլում. տեղւոյն Հայոց դպրոցի ուսուցիչ պ. Աղէքսանդր Մխիթարեանը բերեց ինձ մօտ մի ձեռագիր հաւաքածու, որի մէջ կային յիշատակարաններ, թղթեր, նամակներ և ն։ Հաւաքածոյի առաջին կէսը գրուած է ընտիր նօտր գրով։ Վերջին կէսը՝ շղագիր՝ յետոյ գրուած։ Այդ կարգումն էր և «Թուղթ Սիմէօնի Սսոյ կաթուղիկոսի առ Տէր Փիլիպպոս Էջմիածնի կաթուղիկոսն, որ և ընդօրինակեցի։ Ձեռագիրը թուական չունէր։

2. Էջմիածնի Փիլիպպոս եւ Սսի Սիմէօն Կաթուղիկոսներ. — *Փիլիպպոս կաթուղիկոսի մասին ընդարձակօրէն գրում է Առաքել պատմագիրը. նա մեր եկեղեցւոյ Հայրապետների լաւագոյներից մէկն է թէ իւր կրօնասիրութեամբ, թէ մաքուր ու անբասիր վարքով, թէ շինարարութեամբ և թէ եկեղեցական իրաւանց, կարգերի ու կանոնների նախանձախնդրութեամբ։ Այս մասին առաւել տեղեկութիւն ունենալ ցանկացողները կարող են դիմել Առաքել պատմագրին։ Փիլիպպոս կաթուղիկոսը թաղուած է ս. Հռիփսիմէի բուն տաճարի հիւսիսային դասում. տապանը ունի հետևեալ արձանագրութիւնը. «Հաղար հարիւր չորս թուին, մարտի քսան և հնգին վախճանեցաւ Հաղբակեցի Փիլիպպոս սքանչելագործ կաթուղիկոս ամենայն Հայոց,*

և եդաւ սուրբ նշխարք նորա յայսմ շիրմի. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»։ Հ. Յովհ. եպս. Շահխաթունեան (Ստոր. Մ. հատոր. եր. 271), ասում է որ Եփրեմ կաթուղիկոսն է կազմել տուել տապանաքարը թափանցիկ մարմարից։

Սոի Սիմէօնի մասին գիտենք, որ նա Փիլիպպոսի ժամանակակից էր. Հ. Միք. Չամչեանը միայն ժամանակագրութեան մէջ նրա մասին գրում է. «1633. Սիմէօն Բ. ի Սեբաստիոյ ԺԵ.» այսինքն 1441 թուից յետոյ Սոի 15-րդ կաթուղիկոս։ Սիմէօնին 1648-ին յաջորդեց Ներսէս Սեբաստացին, ուրեմն Սիմէօնի կաթուղիկոսութիւնը ձգուել է 1633—48 թ. մօտ 15 տարի։ Սրանից աւելի տեղեկութիւն չէ տալիս Հ. Ղ. Ալիշանը իւր «Սիսուան»-ում. Սիմէօնի իրան Թղթից տեղեկանում ենք, որ նա երկար ժամանակ Հալէպում առաջնորդ է եղել։

3. Մատենագրական տեղեկութիւններ Թղթի մասին.— Սիմէօնի Թղթի համար ոչինչ չեն յիշում Առաքել պատմագիրը, Զաքարիա սարկաւագը, Սիմէօն կաթուղիկոս Երևանցին և Հ. Չամչեանը։ Այդ Թուղթը յայտնի է Սսում և Կ. Պոլսում. Սսեցիք յիշում են ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութեան առիթով 1884 թ. փետր. 5-ի գրութեան մէջ, որի մասին յիշել եմ։ Այդ Թուղթը յիշում է Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանը, «Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցւոյ» երկասիրութեան մէջ (եր. 437—38), որի մասին և գրում է. «1633 թուականին Սսոյ կաթուղիկոս կամ վանահայր կը կարդուի Տ. Սիմոն Բ. որ ընդդէմ իրաւանց ամենայն Հայոց հայրապետին եպիսկոպոսական ձեռնադրութեան մասին մինչև այն աստիճան կը զեղծանի, որ Տ. Տ. Փիլիպպոս հոյակապ հայրապետն ամենայն Հայոց—1634—1656—յանդիմանական թղթով մը ի կարդ և յուղղութիւն կը հրաւիրէ զինքը, բայց նա փոխանակ զդաստանալու և իւր չափն ու սահմանը ճանաչելու՝ կարի յանդուգն, չեմ կամիր ըսել լրբենի, լեղուաւ գրած պատասխան մը կուղղէ առ նոյն մեծագործ Հայրապետն Հայաստանեայց, որոյ

հրատարակութիւնն ամեն բարեպաշտից և աղդասիրաց արդար զայրոյթը կը շարժէ»։

Բացի մեր ընդօրինակութիւնից այդ Թուղթը կայ նաև Վենետիկի Մխիթարեան հայրերի Մատենադարանում։ (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց հատ. Ա. գիրք Բ. պարբ. 90. հին թ. 81. ա. երես 359. ԺԹ. դար, իբրև 1850, Հաւաքածոյ գրութեանց Եփրեմ կաթուղիկոսի) 4 թղ. 34բ.—48բ. «Պաշտպանութիւն իրաւանց սրբոյ աթոռոյն տանն Կիլիկիոյ, Թուղթ Տեառն Սիմէօնի ամենայն Հայոց կաթուղիկոսի տանն Կիլիկիոյ, պատասխանի թղթոյն, զոր առաքեաց Փիլիպպոս կաթուղիկոսն Վաղարշապատու»)։ Այս օրինակի արտագրութիւնը ունինք, որ կատարել է մատենադարանապետ Հ. Բառնաբաս վարդապետ Պիլէզիկճեան Հ. Յ. վ. Տաշեանի յանձնարարութեամբ, որին և դիմել էի։ Խորին շնորհակալութիւնս յայտնում եմ յիշեալ Հարց՝ նրանց կատարած աշխատութեան համար։ Պ. Ա. Մխիթարեանի օրինակը, որից և իմը, թէև աւելի հին, բայց անհմուտ գրչի գործ լինելով, շատ բառեր աղճատուած են և միտք չեն տալիս. Վիեննայի օրինակը, ինչպէս երևում է, սրբագրութիւնների ենթարկուած, օժանդակում է մեզ՝ վերականգնելու բնագիրը, և տալիս է տարբեր ընթերցուածներ։ Թուղթը գրուած է դրաբառ, խառն աշխարհաբառի դարձուածներով և թուրքերէն բառերով։

4. Տպագրութեան հանգամանք.—Այդ Թղթի հրատարակութիւնը կատարում եմ պ. Աղէքսանդր Մխիթարեանի օրինակին համեմատ, ստորին լուսանցքում դնելով Վիեննայի օրինակի տարբեր ընթերցուածները նշանակելով իւրաքանչիւր թերթի երեսը։ Թղթի մէջ ակնարկուած դէպքերը, որոնք կարող են ընթերցողների համար մութ լինել, ըստ կարելոյն լուսաբանել աշխատեցի, կցելով Թղթին ծանօթութիւններ։ Իսկ ս. Գրքից առած դէպքերին ու հատուածներին անմիջապէս փակագծի մէջ կը դնեմ տեղը, աւելի դիւրըմբռնելի դարձնելու համար։

Բայց տեսանեմ զքեզ վառեալ և բորբոքեալ իբրև
65 զդեհեան հրոյ, որ այրէ և տոչորէ զամենայն նիւթ
իբրև զոչուր նախանձ քո։ Տեսանեմ զքո յօժարու-
թիւն՝ որ դայ առ ի սպանանել և կործանել զարև-
մտեանս 1), բայց ոչ ես ձեռնհաս. զի «եթէ Աստուած
ի մեր կոյս է, ով է ի ձէնջ մեզ հակառակ» (Հռոմ. Ը. 31).
70 զի «Տէր ամբարտաւանից հակառակ է. տայ շնորհս խո-
նարհաց» (Առակ. Գ. 34)։

Դարձեալ գրեալ ես թէ, դէտ գոլով զփրկութիւն
հոգալ պարտիմք զՀօտին Քրիստոսի ըստ առաքելոյն։
«Քանզի յունաց և բարբարոսաց պարտապան եմ» (Հռոմ.
75 Ա. 14) ասն։ Այո, ճշմարտութեամբ է ասացեալքդ, որպէս
որ քարոզեցիք յերկիրս Լեհաց, և մինչև ցայսօր հրատա-
րակի ընդ ամենայն ազգս 2)։ Իսկ զայն, որ ի վերոյ գը-
րեալ ես, թէ «օրհնութիւն ընդհանրական» և զքո ու-
նայն սէրն երևեցուցանես. որ ցուցանելով զասացեալդ՝
80 ասացեալ ես. «երկնչիմ յոմանց դիւրասայթաքաց»։ Ո՞վ է
դիւրասայթաքն, զի դու զքեզ դու սայթաքես և ընդդի-
մադիր լինիս դու քեզ, և օրինակ բերես առածնեասյեայ.
«որք յարեն զոուն ի տուն և զագարակ առ ագարակ
մերձեցուցանեն» (Եսայի Ե. 8)։ Զոր տուն յարեցաք կամ
85 զոր ագարակ մերձեցուցաք առ ագարակ։ Աւաղ յիմա-
րութեանս։ Դուք ընդհէր զԱղուանից տունն յափշտա-
կեցիք, զոր ի ձեր թուղթն գրեալ էիք, թէ ինքն գը-

զհամբաւ քո չիմք լուեալ։ 64. միայն տեսանեմք։ 66. քանզի իբրև զոչուր է։ 66—7. զյօժարութիւն քո, որ կամիս սպանանել և կորուսանել զարև։ 68. զի եթէ Տէր։ 70. հակառակ կայ։ 72. գոլով մեր։ 73 հօտին։ առաքելոյ։ 74. բարբարոսաց իմաստնոց և անմտից։ չիք պարտապան։ 75. ասացեալդ։ 76. քարոզեցեր յերկիրն։ 78. չիք և։ 79. սէրդ երևեցուցեր՝ ոչ ցուց։ 80. Ասացեալ ես։ 81. կու սայթաքես։ 82. չիք դու։ Վասն զի օրինակ առբերես յԵսայեայ։ 83. տուն առ տուն։

Թղ. 36բ։ 84. չիք մերձեցուցանեն։ 84—5. Արդ, զոր տուն յարեցաք առ տուն, և զոր ագարակ։ 87. զոր դուք ի ձեր թղթոջ։ թէ ինք-

լուսաթոռ է ի սուրբ Լուսաւորչէն կարգեալ։ Նոյնպէս և զԱղթամարայն ընդ ձեր իշխանութեամբ նուաճեցիք,
90 որ ԵՃԻԶ տարի է, որ ինքնագլուխ կաթուղիկոսք են. 3) թէպէտ դիրք կու պարսաւեն։ Տես, ՚ես եղայ յարող տուն առ տուն՝ թէ դու «ուտելով զտունս այրեաց, պատճառանօք երկարեալ զաղօթս, զի առաւել դատաստան ընդունիցին» (Մարկ. ԺԲ. 40)։

Դարձեալ գրեալ ես թէ, «իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, ի նմին կացցէ (Ա. Կորնթ. Է. 20), և իւրաքանչիւր զիւր բեռն բառնալոց է»։ Եւ գիտես՝ թէ իւրաքանչիւր զիւր բեռն բառնալոց է. իսկ ընդէր դու զայլ վիճակներն և զայլոց տունն յափշտակեցեր ըստ վերոգրելոցն թէ,
100 «Աղուանք» ասն։ Դարձեալ գրեալ ես, «և զի, թէ իցէ առագրել օրինակս, ոչ իսկ գոյ որ, որ պատասխանատրիցէ։ Քանզի անհատն և տեսակն ի սեռն տեսանի, այլ ոչ սեռն և տեսակն ի յանհատն պարունակի։ Վասն զի ամենայն տեսակ և անհատ՝ կենդանի
105 են, բայց ոչ ամենայն կենդանին մարդ է. որպէս մասունքն ի հանուրն տեսանին, բայց ոչ հանուրն ի մասունս»։

Այս բանս բազում տեսութիւնս ունի. սակայն զայս բանս այն մտօքն էք գրեալ, թէ մեք յառաջ եմք և դուք վերջին, կամ թէ մեք գլուխ՝ և դուք մա-
110 սունք։ Եւ ասացեալ ես թէ. ո՞ կարէ առագրել սմա պատասխանի. իբրև թէ զրոյցն մեր է։

Այո, այդպէս էր. վասն զի էր երբեմն, զի առաջին կաթուղիկոսութիւնն ի սրբոյն Գրիգորէ Լուսա-

նապլուխ։ 88. աթոռ է և թէ սուրբ Լուսաւորիչն է։ 91. Վիրք պարսաւեն։ Արդ, ես եղէ։ 93. երկարել։ զի աւելի։ 97. Արդ՝ եթէ գիտես որ։ 98. չիք իսկ։ ուրեմն դու զայլոց վիճակն։ 100. զԱղուանս և թէ զայլսն։ չիք Դարձեալ։ Գրեալ ես, զի եթէ իցէ։ 101. առագրելի։ 102. նատրեսցէ։ 103. և տեսակն յանհատն։ 105. այսինքն մասունքն։

Թղ. 37մ։ 106. և ոչ։ 107—8. Այո, և այս բանս։ տեսութիւն ունի, զի դուք այնու մտօք գրեցեալ էք զայս, թէ մենք առաջինք։ 109. վերջինք։ գլուխն, դուք՝ մասունք։ 110. զի ասելդ թէ։ 111. է այնպէս ասել, որպէս թէ զրոյցն ի մեզ է։ 112. այդ այդպէս էր երբեմն, վասն զի

ուրչէ՝ այսի էառ սկիզբն, և նստան երկոտասան կա-
115 թուղիկոսք մինչև ցՅովսէփ ի Վաղարշապատ և անտի
փոխեցան ի Դվին. և նստան անդ կաթուղիկոսք ԻԳ.
և փոխեցան յԱրամուս և անդ նստան կաթուղիկոսք
ԻԱ.4). և փոխեցան յԱնի, և նստան անդ կաթուղիկոսք
Գ. և եկեալ Պետրոս կաթուղիկոսն նստաւ ի Սեբաս-
120 տիա ի թուին Հայոց ԴՃՂԵ. Եւ քուերորդին Խաչիկն
նստաւ ի Կոկիսոն առ Դաղկայ Հայոց թագաւորին։ Եւ
Վկայասէրն ի Ծամնդաւ. բայց շրջագուլթեամբ, և Բար-
սեղ կաթուղիկոսն կրկին յԱնի, և եկեալ յԱղթամար առ
իշխանն Հայոց Վասիլ և վախճանեցաւ։ Իսկ ի թուական-
125 նին Հայոց ԵՃԿԲ. ձեռնադրեցաւ Գրիգորիս յաթոռ.
հայրապետութեան և եկեալ ի Հռոմկլայն ի վեց հա-
րիւր թուականիս Հայոց. և նստան ի Հռոմկլայն կա-
թուղիկոսք տասն, ի ժամանակս հարիւր քառասուն և
մէկ ամի, մինչև ի թիւն Հայոց ՉԽԱ. յոր եկեալ Մարայ
130 սուլթանն Աշրաֆն կոչեցեալ և առեալ զՀռոմկլայն քան-
գեաց և աւերեաց. և եկեալ Աղն ի Կիլիկիա, որ այժմ
ասի Սիս առ թագաւորն Հայոց երկրորդ Հեթումն։
Եւ չինեցան կաթուղիկէ տաճարքն Էջմիածին և սուրբ
Սոփի և սուրբ Սատուածածին անուանեալք ի խորհուրդ
135 այդ եկեղեցեացդ. և ձեռնադրեցին վարդապետք և
եպիսկոպոսք զԳրիգոր Անաւարզեցին կաթուղիկոս, յո-
րոց մին էր Դէորդ Լամբրոնացին։ Եւ յայնմհետէ մինչև

առաջին։ 114—5. ուրչէն անտի սկիզբն էառ։ նստան ԲԺ. կաթուղիկոսուք։ 115. չիք անտի։ 117. չիք անդ։ 119. Եւ եկեալ։ 121. հրամանաւ Դաղկայ։ 122. Ծամնդու։ Եւ Բարսեղ. 123. յԱղթամար, և առ։ 124 չիք և։ վախճանեցաւ ի թուական։ 125. Ձեռնադրեաց զԳրիգորիս։ 126—7. ի ՉՃ թուական։

Թղ. 37բ։ 128—9. Ժ. որ էանց ժամանակ ՃԽԱ։ 129. ամ. մինչև ՉԽԱ թուականին Հայոց, զոր։ 131. քանդեաց, աւերեաց և աւարեաց, և ապա եկեալ Աղ սրբոյ Լուսաւորչին ի Կիլիկիայ։ 133։ և չինեցաւ։ Էջմիածնի և սրբոյն։ 134. Սոփիայ և սուրբ Սատուածածնի անուանեալն։ 135. այդր եղեալ եկեղեցեաց։ 136. Անարզաբացին։ 136—7. որոց մինն։

ցայսօր կայ հայրապետութիւնն հաստատ ասա և սուրբ
Լուսաւորչի Աղն ասա. զի «ի սմա բնակեցաւ, զի հաճեցաւ
140 ընդ սա» (Սաղմ. ՃԼԲ. 13—14)։ Եւ եղև սա գլուխ,
որ է, անհատն՝ սեռ. և առաջինն վերջին, ըստ Աւետա-
բանին (Մատթ. ԺԹ. 30) և ըստ Սաղմոսին կցորդին (ՃԾ.
կցորդ, «Փոքր էի»), որ է մասն հանուր։

Եւ յետ ՃԻԹ տարւոյն, որ է թուին Հայոց ՉՃՂ.5)
145 անհնազանդ եղեալ ձեր արևելեան կողմիդ ի սուրբ Լուսա-
ւորչի Աթոռոյս և ձեռնադրեցին ըստ կամաց իւրեանց զՆի-
բակոս կաթուղիկոս Խորվիրապեցին զապալայով, որ-
պէս որ յայսն է ի շարադրութիւնս Գրիգորի Կեսարա-
ցւոյն 6). Ահա այս քեզ պատասխանի։ Ահա և ես ի ձե-
150 ռագրին իւրում վկայէ հոգելի հայրն, երիցս երանեալ
բաբունապետն և անյաղթ փիլիսոփայն և պայծառ
ջահն եկեղեցւոյ այսպէս.

«Ես անարժան Գրիգորս, պիտակ անուամբ կոչե-
«ցեալ վարդապետ և պատրիարգ, յորժամ ի Կոստանդ-
155 «նուպոլսոյ եկի ի Կեսարիա և հարկ եղև ինձ գնալ
«ի Բերիայ, այսինքն Հալէպ, վասն Երուսաղէմայ նուի-
«րակութեան, զոր յառաջագոյն կամաք և միաբանու-
«թեամբ Տէր Ազարիա կաթուղիկոսին և վարդապե-
«տին Հայոց Տէր Ղուկասու և Տէր Սրապիոնի և Տէր
160 «Դաւիթ եպիսկոպոսին, որ յանձնարարին զծառայու-
«թիւն նուիրակութեան սուրբ Երուսաղէմայ, զոր կա-
«տարեցի իսկ զնոյն մատակարարութիւնն. և ի գնալն
«վամեցայ անցանել ընդ երկիրն Կիլիկեցւոց վասն այս-

138. կայ հաստատ հայրապետութիւն։ 139. աղն ի սմա բնակեց։ 141. որ անհատն սեռ։ 144. թիւն Հայոց ՊԹ։ 145. արևելեանցդ սուրբ Լուս։ 146. Աթոռոյն։ 147. կաթուղիկոսն։ զապալայով։ 148. յայսն է։ 149. չիք Ահա ես և։ Եւ ի ձեռագր։

Թղ. 38ա։ 150. հոգելից հայրն մեր։ 152. չիք այսպէս։ 153. Սոյնպէս ես։ 154. յորժամ եկի։ 155. և եկի։ 156. չիք ի Բերիայ։ այսինքն։ 156—7. վասն նուիրակութեան սրբոյն Սաղիմայ։ 159. վարդապետք Հայոց Տէր Ղուկաս և Տէր Սրապիոն։ 160. եպիսկոպոսացն, որ յԵրուսաղէմ, յանձն առի։ 161. սրբոյ։ զոր և։ 163. ընդ երկրաւ։

«ջան պատճառանաց. նախ՝ երկրպագութիւն սուրբ
«Լուսաւորչի Աջոյն, երկրորդ՝ ի տեսութիւն Յովհաննէս
«կաթուղիկոսի տանս Կիլիկիոյ, վասն համոզելոյ զսա
«ի խաղաղութիւն. զի Տէր Յովհաննէս վարդապետն
«ի Սիսն է ձեռնադրեալ կաթուղիկոս և Պետրոս վար-
«դապետն ի Հալէպ, և այսպէս երկպառակութիւն ան-
«կեալ էր ի մէջ ինքեանց 7)։ Ի թուականիս Հայոց ՌԾԱ.
«մայիս ԻԹ եկեալ հասի ի Կիլիկեցւոց գաւառս, ի գը-
«ղեակն, որ կոչի Վահկայ, զի անդ էր ամարայնոց կա-
«թուղիկոսարանի, և ի տեսանել զմիմեանս ոչ սակաւ
«ուրախութիւն եղև մեզ և այլ քրիստոնէից, և եղև
«մնալ մեզ անդ ԼԱ. օր. մայիսի ԻԹ օրէն, մինչև ի յու-
«նիսի ԻԸ օրն, և ժողովեցան առ անարժանութիւնս
«իշխանազունք և ամենայն գլխաւորքն ժողովրդեան
«տանս Կիլիկեցւոց և ազաչէին՝ վասն Աստուծոյ ուղիղ
«դատաստան արա ասելով, ըստ կանոնաց և ըստ հայ-
«րենի հրամանաց և աւանդութեանց տանս Հայոց։ Եւ
«ետու ձեռագիր վկայական ի ձեռս նոցա այսպէս. զի
«ըստ առաքելական վիճակի գիտեմք վիճակեալք զտունս
«Հայոց առաքելոյն Թադէոսի, զի ինքն սուրբ առա-
«քեալն Թադէոս ձեռնադրեաց զմի յաշակերտացն իւ-
«րոց, Թէոփիլոս անուն, զոր Ղուկաս յիշէ զսա ի սկիզբն
«Աւետարանին (Ղուկ. Ա. 3) և ի պրակս առաքելոց
(Գործք Առաք. Ա. 1)։

«Զսա կարդեալ սուրբ առաքեալն Թադէոս առաջ-

164. պատճառաց։ յերկրպագութիւն սրբոյ։ 165. Տեառն Յովհաննիսի։ 166 նորընծայ կաթուղ։ և վասն։ զսոսա։ 167. Յովհաննէս կաթուղիկոսն։ 168. ի Սիս էր։ 170. չիք էր։ 171. և մայիսի ՝Թ։ ի դաւառն Կիլիկիոյ։ 172. կոչիւր։

Թղ. 38ᵃ։ 174. եղև մեզ և ամենայն քրիստ։ 175. ինձ մնալ։ ի մայիսի ԻԹ.—էն մինչև։ 175—6. ի ԻԸ. յունիսի։ 178. Կիլիկիոյ և ազաչեցին թէ վասն։ 179։ արա մեզ ըստ մերոց հայրենի։ 180. չիք հրամանաց և։ չիք տանս Հայոց։ 181. ի ձեռս սոցա։ 182. վիճակեալ։ 183. Թադէոսի, և աթոռ առաջին զԿեսարիա. զի ինքն առաքեալն։ 185. չիք զսա։ յսկիզբն։ 186. առաքելոցն։ 188. զսա կարդեաց։

«նորդ Հայաստանեայցս. յաղագս այսմ պատճառի
«սուրբ Գրիգոր Լուսաւորիչն Հայոց ի Կեսարիա ընկա-
«լաւ ձեռնադրութիւն. և այսպէս ամենայն կաթու-
«ղիկոսք լինէին մինչև ի չար ժողովն Քաղկեդոնի 8), զոր
«յոյնք կամեցան և արարին։ Յայնժամ բաժանեցան
«հայքն ի յունաց և այլ ոչ ևս ընկալան ձեռնադրու-
«թիւնն ի Կեսարիա, և եղև ինքնագլուխ կաթուղիկո-
«սութիւնն Հայոց. և վասն առաւել շփոթմանց և խռո-
«վութեանց երբեմն ի Թաթարաց և ի պարսից և եր-
«բեմն ի յունաց, վասն որոյ և այլ և այլ տեղիս նստէին
«կաթուղիկոսք Հայոց, երբեմն ի Վաղարշապատ, եր-
«բեմն ի յԱղթամար, երբեմն ի Ծովք, ի Բեսուն, ի Հը-
«ռոմկլայն և յայլ բազում տեղիս, որ ոչ երկարեմ։
«Բայց ի վերջին ժամանակս ի ձեռն թագաւորացն կի-
«լիկեցւոց հաստատեցաւ կաթուղիկոսութիւնն ի Սիս
«վասնզ և միաբանութեամբ ամենայն Հայոց, և ոչ թէ
«միով ումեք կամ երկոքումբք, որ ԳԺԹԱ. ամք են, բաց
«ի Հռոմկլայէն՝ որ տունն կիլիկեցւոց հաստատութեամբ
«ունի զաթոռ կաթուղիկոսութեան մինչև ցայժմ, և է
«այժմ նորընծայ կաթուղիկոս Տէր Յովհաննէս, որպէս
«և մեք ձեռնադրեցաք և տուաք զվկայական թուղթս
«ի ձեռն նորա, որ և հնազանդքն այսմ աթոռոյս օր-
«հնեսցին Յաստուծոյ և ամենայն սրբոց նորա և ի մէջ.
«ամէն։ Իսկ անհնազանդքն և հակառակողքն և թըշ-

190 սուրբն։ 191. զձեռնադրութիւնն։ 192. կաթուղիկոսք Հայոց ի Կեսարիա ձեռնադրեալ լինէին մինչև։ 194. հայք։ 196. Հայոց։ Բայց առ ի ոչ ունելոյ զհաստատութիւն ազգս Հայոց վասն առաւել չփո։

Թղ. 39ᵃ։ 197. այսինքն երբեմն։ 198. որոյ և յայլ և։ 200. յԱնի, երբեմն յԱղթամարի Ծովքն Բերոմն։ 201. զոր ոչ երկարեմք։ 202—3. Կիլիկիոյ։ 205. միով կամ երկոքումբ. զոր ԳԺԱ։ 206. զոր։ Կիլիկիոյ։ 207. մինչև ցայսօր։ 208. Յովհաննէսն։ 209, և մեք բերաք զհաւանութեան ձեռագիր ամենայն եպիսկոպոսաց այսմ նահանգի և աթոռոյս ապա և մեք ձեռնադրեցաք։ 210. ի ձեռս սոցա. զոր և հնազանդեալքն։ 210—1. օրհնին։ 211. յամենայն։ 212. անհնազան-

«նամիքն այամ սրբոյ աթոռոյս դատապարտեսցին յԱ-
«ստուծոյ և յամենայն սրբոց նորա և անիծեալք լիցին
«ի կեանս և ի մահ. և չունի որ իշխանութիւն այլ և
«այլ ասելոյ այս սրբոյ Լուսաւորչի աթոռոյս, ոչ ի մե-
«րոց և յօտարաց։ Իսկ եթէ ընդդիմանան բանիւք կամ
«թղթով կամ այլով իւիք, անիծեալ լիցին կրկին ան-
«գամ յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա. իսկ ըն-
«դունողքն սորա օրհնեալ լիցին յԱստուծոյ և յամե-
«նայն սրբոց նորա և ի մէնջ»։

Դարձեալ ըստ պատմութեանց գրոց, յորժամ ի Հռոմկլայ և ի Սիս էին կաթուղիկոսութիւնք Հայոց կամակցութեամբ մերոց թագաւորաց, յայնժամ էին յարևելս Մխիթար մականուամբ Գոշ կոչեցեալն, որ զարևելեան Զաքարէ իշխանին խնդիրքն յղեաց ի Սիս առ առաջին օծեալն Լևոն, և առ կաթուղիկոսն Հայոց Յովհաննէս, զոր նոցա ժողով արարեալ կատարեցին զինդիրն 9)։

Եւ աշակերտ նորին Վանական և նորայն մեծ Վարդան, որ եկն յերկրպագութիւն սուրբ Աջոյն և ի տեսութիւն առաջին Հեթմայ թագաւորին, զոր ժողով արարեալ նոցա կաթուղիկոսաւն Կոստանդեաւ ի ՈՂԵ թուին մերոյ ի մայրաքաղաքս Սիս ի սուրբն Սոփիայ և գրեցին կանոնս, որ է գլուխ ԻԵ. և եռուն ի մեծ վարդապետն Վարդան, զոր տարեալ յարևելս և յղեալ հաւանութեան ձեռագիր։ Զայսոսիկ Կիրակոս պատմագիրն գրէ. և աշակերտն Վարդանայ Ներսէս և նորայն

գողքն։ 213. այս։ 214. անիծեալ եղիցին։ 215. ի կեանք։ 216. աթոռոյս Լուսաւորչի։ 217. և ոչ յօտարաց։

Թղ. 39՝։ 218. իւիք իրօք, անիծեալ եղիցին։ 220. օրհնին։ 221. չիք ի մէնջ։ ամէն։ 222. Եւ գարձեալ։ 224. յայնժամ գոյր։ 225. անուանի վարդապետ Մխիթար։ 226. զինդիրսն։ 227. Լէօն։ չիք Հայոց։ 228. Յովհաննէս։ 229. զինդիրսն։ 230, և նորին մեծն։ 231. զոր եկեալ։ սրբոյ։ 232. ժողովք։ 233. Կոստանդնիւ կաթուղիկոսիւ։ 234. թուին մերում։ 235. գլուխս 25։ 237. զհաւանութեան ձեռագիր

Եսայի, և նորայն Օհան Որոտնեցին և նորայն Գրիգոր
240 Տաթևացին, որ յղեաց ԸՃԾԶ թուին Հայոց զԱղթա-
մարցիք ի Սիս առ կաթուղիկոսն Յակոբ և եղեն հնա-
զանդ սուրբ Լուսաւորչի աթոռոյն, որ եղեն մի հօտ
և մի հովիւ. զայս Գրիգոր Տաթևացւոյ Վարուց գիրքն
գրէ, և նորին աշակերտք Պօղոս և Մատթէոս, որ եկեալ են
245 սոքա ի Սիս, և նստաւ կաթուղիկոս Պօղոս, որ կայ
այժմ գերեզմանն ի վանքս մեր. զոր ինքն շինեաց ԸՃԿԲ
թուին Հայոց, զի կայ գրուած ի փորուած քարի,
ի վերայ դրան վանիցս, և ի յիշատակարան Ճաշոցին,
զոր ինքն եհ գրել, և ի սորա ժամանակն Էջմիածին
250 կաթուղիկոս չիկայր, և ի Սիս կայր կաթուղիկոս։

Արդ սոքա ընդէր կամակից և հնազանդ էին կա-
թուղիկոսացն, որ ի Սիս, որ և ինքն Պօղոս կաթուղի-
կոս եղև։ Մինթէ կաթուղիկոսին ժողովոյն վարդապետքն
քան զնոսա վեհագոյնք էին և իմաստունք, գիտեմ որ
255 չէք կարող ասելոյ։ Եւ թէ այլ գրոց և կամ սրբ-
բոց վկայիցն չպատկառեցար, գոնեա պատկառեա ի ձե-
բոց հարցդ, այսինքն ի Գրիգոր վարդապետէ Կեսարա-
ցւոյ, որ նորին իշխանութեամբն պարծիք. այլ լսելով
զրախօս չարախօսացն, որք ապականեն զլսելիս որպէս
260 Յուդայն՝ որ առեալ էր զպատիւն և զասաքիճան և զիշ-
խանութիւն, բայց յետոյ ուրացեալ մատնեաց զՏէրն

ի մերոց։ Զայս։ 239. նորին Յօհան։ և նորին Գրիգոր։ 240. զոր յղեաց ի ՊԾԶ։

Թղ. 40՝։ 243-4. Այս ի Գրիգորի Տաթևացւոյն վարն գրի։ 244—5. զոր եկեալ ի Սիս նստան կաթուղիկոսք, Պօղոս։ 246. գերեզմանն ի յաթոռս մեր։ ի ՊԿԲ։ 247. չիք Հայոց։ զոր կայ գրեալ ի փորուածս։ 248. դրան աթոռոյս։ Յիշատակարան։ 249. Արդ՝ ի ժամանակի սոցա Էջմիածին։ 250. ոչ գոյր և ի Սիս գոյր։ չիք կաթուղիկոս։ 251. չիք Արդ։ հնազանդք։ 253. կաթուղիկոսական։ վարդապետք։ 254. քան զսոսա վեհագոյնք և իմաստունք էին։ 255 յայլ գրոց։ յայս սրբոց։ 257. հարց։ ի Գրիգորէ։ 259. զրարան։ որ։ 260. զՅուդայն, որ էառ պատիւ, աստիճան և իշխանութիւն։ 261. չիք

նախանձելով ընդ իւրն Նարդոսեան (Յովհ. աւետ. ԺԲ. 3—7)։ Եւն։

Դարձեալ անուանեալ կաթուղիկոս ես դրեալ ըզ-
265 մեզ. ոչ երկնչիս յԱստուծոյ և ի տէրունական հրամանէ՝
զի «որ ասէ ցեղբայր իւր մորոս և յիմար պարտաւոր լիցի
գեհենոյն (Մատթ. Ե. 22), որպէս և հրէայքն զՔրիստոս
Սամարացի ասէին (Յովհ. աւ. Ը. 48). ուրեմն պա-
տուէր ունիցիս ի նոցանէ որպէս պատուիրեցին առաքե-
270 լոցն, մի յիշել զանունն զայն (Գործք Առաք. Դ. 40)։
Նոյնպէս և Ռափսակ հրատարակելով հպարտանայր
ի վերայ բարեպաշտին Եզեկիայ թէ. «Ասացէք ցեղե-
կիա» (Դ. Թագ. ԺԸ. 19) Եւն։ Ո՞չ նոյն գիրքն, որ զքեզ
ձեռնադրեաց՝ նոյն և զմեզ. ոչ նոյն կարգ է առաքելոցն՝
275 որ քեզ նոյն և մեզ. լինի՝ թէ մերն աւելի է բանիւ մի, զի
Գրիգոր վարդապետն աջովն իւր եռ ձեզ դաւազան,
նոյն աջովն և եռ մեզ դաւազան հայրապետական, և
աւելին այս է, որ իւր աջովն զսուրբ Լուսաւորչի Աջն
եդ ի վերայ գլխոյ մերոյ, թողուցեալ զՍեղբեսարոսին Եւն։
280 Այսուհետև անուանեալն ով եղև, Փելիքս (Գործք
Առաք. ԻԴ) և Փելիտէս (Տիմոթէոս. Բ. 14 — 19)
10). և ոչ թէ պարծելով է այս վերոգրեալքս, քաւ
և մի լիցի։ Բայց թէ պարծենամք ունիմք և տեղիք,
վասն զի սուրբ Լուսաւորչի Աջն ի մեզ, սուրբ Երուսա-
285 ղէմն՝ թէմ։ Եւ ևս երկու աղնուական և գերադրական

ուրացեալ։ զՏէրն իւր։ 262 իւղոյն։

Թղ. 40ᵇ։ 264. Եւ դարձեալ։ 265 մէնջ. չերկնչիս։ հրամանէն։ 266. չիք զի։ կամ յիմար։ 267. (ասէ) գեհեան հրոյն։ չիք և։ 268. Սամարացի կոչէին։ 269. պատուիրեսցես ըստ նոցա։ նոքա առաքելոցն։ 271—2. Ռափսակ հպարտանալով ի վերայ բարեպաշտին Եզեկիայ մեծարանէր յասելն. ասացէք։ 273. գիրք է։ 275. որ ի քեզ նոյն և ի մեզ։ բանիւ միով։ 276. աջիւն իւրով եռ մեզ։ 277. աջիւն եռ մեզ և։ 278. իւր աջիւն զսրբոյ։ 279 գլխոյ իմոյ։ և զՍեղբեսարոսին և զՆիկողայոսին, և զԲարսումայն։ 280. Արդ՝ այսուհետև։ ո՞րն եղև, ե՞ Փելիքս։ 281. և Փիլիդէս։ 282. ոչ եթէ պարծիմք ինչ վերադրեցեալքս։ 283. չիք և մի։ պարծիմք ունիմք զտեղի պարծանաց։ 284. Աջն, պարծանքն պարծանաց առ մեզ է և սուրբ։

իմաստութիւն կայ Հայոց ազգիս, նախ՝ գրչութեան
արհեստն և երկրորդ՝ երաժշտութեան. ահա գրչու-
թիւն յայտնի է ընդ ամենայն տեղիս. մանաւանդ որ
բազում գրեանք առ ձեզ են, և երաժշտութիւն յայտնի
290 է, զի ցրուեալ է ընդ ամենայն աշխարհս, որպէս Աղ-
բահանու Խաչատուր վարդապետն 11), որ ի Վասիլ եպիս-
կոպոսէն առեր է զպաշտեցմունս և զկարգ քահանա-
յութեան, որպէս ասեն. «Սաղմոսն ի Մշայ և Խաչն ի
Սսայ». զինչ երկարեցից, որ ձեզ ամենեցուն յայտնի է։
295 Դարձեալ գրեալ է քո Մովսէս վարդապետ և կա-
թուղիկոսն մեծ վարդապետին Տէր Գրիգորի Կեսա-
րացւոյն, զի. «Խնդրէ մայրս մեր սուրբ եկեղեցի զմիա-
բանութիւն և միոյ հարսին մի փեսայ, երկու և երեքն
ընդդէմ կանոնաց է. և գրեալ էր, եթէ ոչ վասն իմոյ
300 հաստատութեան ճառին, քանզի ես կամաւ իմով կա-
միմ հրաժարիլ յիմոյս բաժնէս, բայց զոր դուք կամիք,
և ուր հաճիք, անդ հաստատեցէք» Եւն։

Բայց զերկրորդն դուք արարէք, որ ի սրբոյ Գրի-
գորէ մինչև ցՅովսէփ կաթուղիկոսն Դ-րդ 12) կաթուղի-
305 կոս է. սոքա ամենեքեան մի հարսին մի փեսայ էին,
երկրորդոյն պատճառն դուք եղաք. ո՞վ եղև ըստ կա-
նոնաց, մեք թէ դուք, որպէս որ ի բազում տեղիս
Գրիգոր վարդապետն ապստամբ կոչէր զձեզ, որպէս

Թղ. 41ᵃ։ և ևս՝ որ աղնուական։ 286. կայ այդ ի պարծանս Հայոց. 287. երկրորդն՝ երաժշտականութիւն։ 288 չիք որ։ 289. գրեանք որ առ։ 290. զի ընդ ամենայն աշխարհս ցրուեալ է։ 290—1. յԱսպահան։ 292. էառ զպաշտամունս և ևս զկարգ։ 293 չիք և։ 294. երկարեմք, որ ձեզ և։ 295. Եւ դարձեալ։ վարդապետն քո Մովսէս կաթուղիկոսն։ 296. չիք Տէր։ 297. թէ խնդրէ մեր մայր։ 298. ը. կամ գ.։ 299—300. թէ ոչ թէ վասն հաստատութեան իմոյ ճառեմ։ չիք կամիմ։ 301. հրաժարեալ յիմում բաժնէս։ 303. Այս, ճշմարիտ է ասացեալդ. միոյ հարսին մի փեսայ և աւելին ընդդէմ կանոնաց է, ստոյգն և ճշմարիտն այս է. բայց զերկրորդն։ զի ի սրբոյն։

Թղ. 41ᵇ։ 304. Զ.-երորդ։ 305. միոյ հարսին։ 306. այլ երկ-

որ այդ Յակոբ աբեղայդ ինքնին լուաւ ի Դրիդոր վար-
310 դապետէն և այժմոյս վարդապետ անուանեալ է։

Որ և Մովսէս կաթուղիկոսն գրեալ էր ի Թղթի իւ-
րում. թէ «տէր վարդապետ, իմոյ զօրութիւն ի ձեռն
քում է», և թուղթն այժմոյս առ մեզ է։ Ասացեալ ես
թէ ընդէր ձեռնադրութիւն առնես ի մերում վիճակի,
315 ուստի հանդերձեալ եմ որոշել ելն։ Ահա սմա պա-
տասխանի. Որպէս հրամայէ Տէրն մեր Յիսուս Քրիս-
տոս. «Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ» (Յովհ.
աւ. Ե. 17). զոր և նախնի վեհագոյն կաթուղիկոսքն
մեր, որ գլուխ վարդապետք էին և կանոնաց հմուտ
320 և ձեռնադրեալքն այսոքիկ են.

Նախ Խաչատուր կաթուղիկոսն ձեռնադրեաց զԱկ-
նայ Մկրտիչ եպիսկոպոսն. Տիրատուր, որ կաթուղիկոս
անուանեցաւ՝ Անկիւրիոյ եպիսկոպոս ձեռնադրեաց
զՍարգիս եպիսկոպոսն Կ. Պոլսոյ պատրիարգ։ Եւ յետ
325 այնորիկ Ազարիա կաթուղիկոսն՝ զՄինաս վարդա-
պետն Էջրումայ, զՅակոբն Թոխատեցի, զՎասիլ եպիս-
կոպոսն Սամսիոյ, զԽաչատուր եպիսկոպոսն Մարաղա-
նու, զԽաչատուր եպիսկոպոսն Կաֆայու, զՄկրտիչ վար-
դապետն Խարբերդու, զմիւս երկայն Մկրտիչն Բաղի-
330 շու, զՊօղոս վարդապետն Մշու։ Եւ յետ նորա Յոհան-
նէս կաթուղիկոս զԴաւուստ եպիսկոպոսն Մերտինոյ,
զՄինաս վարդապետն Երզնկու, զԱլէքսան եպիսկոպոսն
Մարսվանու. զԲ. Յակոբն Անկիւրիոյ, զԴրիդոր վարդա-
պետն Կեսարացի ի վերայ Ստամբօլու պատրիարգ,

բորդելոյն։ դուք եղէք։ Արդ՝ ով եղև ընդդէմ։ 309. Յակոբ, որ ինքնին։ 310. որ և այժմ։ 311. զոր։ յիւր Թղթոջն։ 312. ի ձեռին։ 313. այժմ։ 319. որ գլխաւոր վարդապետ։ 320. այսոքիկ էին։ 321. չիք ձեռնադրեաց։ 323. Անկուրիոյ։

Թղ. 42ա։ 328. զմիւս Խաչատուր եպիսկոպոս Ռաղայու։ 329. Բաղեշու։ 330. Յոհաննէս։ 331. կաթուղիկոսն։ 332. Երզնկայ, զԱլէքսիանոս։ 333. Մարսուանու։ զերկու Յակոբն Անկուրիոյ։ 333—4 զԴրիդոր Կեսարացի վարդապետն ի վերայ Կոստանդնուպօլսոյ։

335 զՈրոգայթ վարդապետն Էտէրնէու, զՂազար վարդա-
պետն Պուղտանու, զՄեսրոպ վարդապետն Լեհաց, զԹո-
րոսն Կաֆայու, զՂուկաս եպիսկոպոսն Ղօնիայու, զԴա-
ւիթ եպիսկոպոսն Կեսարու այժմ առաջնորդ է։

Եւ յետ նորա Պետրոս կաթուղիկոսն զՍարգիս
340 եպիսկոպոսն, զՄարտիրոս վարդապետն Ջնքուշայ, զմիւս
Մարտիրոս վարդապետն Մշոյ, զՄաղաքիա վարդա-
պետն Թոխատեցի։

Եւ յետ նորա Մինաս վարդապետն և կաթուղի-
կոսն զՍարգիս եպիսկոպոսն Մերտինոյ, զՂուկաս եպիս-
345 կոպոսն Երզնկու, զՆերսէս վարդապետն Սեբաստիոյ,
զՄարգար եպիսկոպոսն Թոխատեցի, զԴանիէլ եպիսկո-
պոսն Սուլումանասարու։ Ահա սոքա մեզ յայտնի են,
զոր և ականատես եղաք։

Բայց Ազարիա կաթուղիկոսն և Պետրոս կաթուղիկոսն
350 որ վասն Երուսաղէմայ պատրաստեցն մինչև ի Հին-
Զուղայ, որքան եպիսկոպոս օրհնեցին, յանուանէ ոչ գի-
տեմ. ապա և մեք ընդէր ոչ ունիմք իշխանութիւն ձեռ-
նադրելոյ ըստ վերոգրելոցս։ Երկրորդ Ներսէս Լամբրո-
նացին, զոր գրեալ է ասորիճանաց ճառն, ասէ թէ,
355 «կաթուղիկոսն թարգմանի ընդհանրական, բայց ունի
զառաւելութիւն պատուոյ քան զայլ եպիսկոպոսն, զի
ոչ թէ իւրում վիճակի միայն այլ ընդ ամենայն տե-
ղիս, ուր ազգն իւր համասեռք են, ունի իշխանութիւն

335. զՈրոգայթ («ոչ կարացաք գուշակել թէ զինչ անուն է այս» այսպէս ի լուսանցս)։ Արնէու։ 336. չիք Պուղտանու։ չիք զՄեսրոպ վարդապետն։ 338, Կեսարիոյ, որ այժմ։ 340. Շէնքուշայ։ 342. Թոխատու։ 343. չիք. վարդապետն և։ 345. Երզնկայ։ 346. զՄարգարէ։ Թոխատու։ 347, Սուլու մանասդրու։ 349. բայց զայս Ազարիա։ 350. վասն սուրբ Ելուս.։ 351. զորքան եպիսկոպոսս։

Թղ. 42բ։ 351—2. ոչ գիտեմք։ 352. չիք և մեք։ 353—4. այս, ունիմք իշխանութիւն ըստ վերոգ։ Եւ երկրորդ ըստ Ներսէսի Լամբրոնացւոյն զոր և գրեաց յասորիճանաց։ չիք ասէ։ 355. կաթուղիկոս անուն։ ունին։ 357. յիւր վիճակն։ 358. և համասեռքն։ 358. ունին։

ձեռնադրելոյ նոցա եպիսկոպոս և տալ զմիւռոնն, վասն
360 որոյ և Թարգմանին կաթուղիկոսք»։ Դուք, որ զմեզ դա-
տէք, ընդ էր չէք հետևեր ասացելոցդ ձերոց. դուք,
որ զՀալէպցի Մարգար երիցու որդին զՍիմէոնն էր
օրհնեցիք. ևս առաւել սրբոյ Երուսաղէմայ հայրա-
պետն, որ պարծանք է մեզ. բոլոր թեմդ չարժէ զնա
365 ըստ առաքելոյն (Եբր. ԺԱ. 38), այլ զի ըստ աւետարանին.
«Հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայես-
ջիր զչիւղն» (Մատթ. Է. 5) ևն։

Ասայեալ ես թէ զինչ օգուտ եղև քո օրհնելն և
մեր բանադրելն. իսկ զսոսա բանադրես, թէ Սոոյ էք
370 օրհնեալ, մինչ Սոոյ ձեռնադրողքն ամենեքեան բանա-
դրեալք են, ուրեմն այս վերոգրեալքն ամենեքեանքն
բանադրեալք կու լինին ըստ քո. իսկ թէ այսպէս է,
վախճանեալքն ի հող, և կենդանիքն ի մէջ աշխարհի
բանադրէ, որ սիրոդ պաղի. ահա լցաւ աշխարհս նը-
375 զովիւք, ըստ ժամանակին Վահանայ և Ստեփանեայ 13)
կաթուղիկոսաց եղև. որ նմանեցար չորրորդ գաղանին,
որ ուտէր և մանրէր (Դանիէլ Է. 7) ևն։ Զի վեհագոյն
դատար քան զնախնիսն քո։ Դարձեալ գրեալ ես սուրբ
Երուսաղէմայ հայրապետին, թէ մեզ դատաստան առ-
380 նես. մեր մեղքն այն է, որ եպիսկոպոսք եմք օրհներ.

359. ձեռնադրել։ 360—61. դուք զոր մեզ ասէք, ընդէր ոչ հետևիք ասա-
ցելոցն ձեր։ 361. չիք դուք։ 362. զԲերիացի Մարգար։ չիք էր։ 363. Եւ
ևս առաւել զՍրուսաղէմայ։ 364. զոր բոլոր։ 365. ուստի ասեմ ըստ
աւետարանին։ 367. հանել զչիւղն յականէ եղբօր քոյ։ 369—74. Արդ՝
եթէ բանադրես զսոսա՝ եթէ ի Սիս էք օրհնեցեալ, և ի Սիս օրհնե-
ցեալքն եթէ ընդ բանադրանօք լինին, ուրեմն բազումք և ի ձէնջ (թէ
ի կենդանեաց և թէ ի մեռելոց) ընդ բանադրանօք գրաւին. որ ի
Սիս են օրհնեցեալ։

Թղ. 43ա։ Բանադրես ուրեմն զվախճանեալքն ի հող և զկենդանիքն
ի վերայ երկրի, զի թերևս առ ի նախանձուէ տոչորեալ սիրտ քո պա-
ղիցի։ 374. չիք աշխարհս։ 376. չիք կաթուղիկոսաց եղև։ Եւ դու
նմանեցար։ 377—8. Եւ դատար կարծեմ վեհագոյն քան։ 379. Երուսաղէ-
մայ պատրիարքին։ 379—80. արա։ 380. օրհնեալ։

մեր օրհնելոյն պիտի դատաստան, ապա ձեր արարեալ
բանից դատաստան չպիտի։

Վասն Համազասպ եպիսկոպոսին, որպիսի զանա-
զան տանջանօք սպանել տուիք. և Ճանճի եպիսկո-
385 պոսն Մարդակերաց, որոյ ականջն հատանել տուիք, և
զՍերկևլեցի աբեղային զծածուկ անդամն կորել տուիք,
և զԴառնեցի աբեղայն հաւատոցն ուրացուցիք, զՋա-
քէոս աբեղայն ֆռանկ առնել տուիք, նոյնպէս զՍահակ
կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն տաճկցնել տուիք
390 և աղդի աղդի տանջանօք հաւատոցն ուրացուցիք 15), և
ի Լեհու երկիրն անհաղորդ, անմասն, անթաղում եղան
այնքան քրիստոնեայք, դեռ ևս այնպէս կան ևն։
Այս բանիցս դատաստան չիկայ միայն մեզ կայ։

Դարձեալ գրեալ ես թէ յաղթահարեցաւ սիմո-
395 նական ախտիւ 16) ըստ անուանակոչութեան իւրոյ։ Արդ
ես ի նոցանէ կաշառս առի, զայն թող Աստուած քննէ
և դատէ. իսկ եթէ զմեզ իզուր զրպարտես, Տէր ա-
բասցէ ընդ մեզ և ընդ ձեզ դատաստան։ Քո աբեղայքն
յորժամ հրաւիրակ եկին ի Կ. Պոլիս և մեք անդ էաք,
400 զոր փոքրիկ աւետարան մի առին հարիւր ղուրուշի,
զդինն ստամբոլցոց վճարել տուին, թէ մեզ խըզմէտ և
վարձ է։ Նոյնպէս և մեք զԱնտոն երէցն առաքեցաք
ի Հալէպ հրաւիրակ, ապա ընդէր ստակ մի ոչ պահան-
ջեաց ի նոցանէ։ Ահա, ով եղև սիմոնականն։

381—2. արդ՝ մեր օրհնելոյն դատաստան պիտոյ է, և ձեր
անդատաստան բանից դատաստան չէ պիտոյ։ 383. որ զանա-
զան։ 384. սպանանել։ Ճանճի («անուն անծանօթ». այսպէս ի
լուսանցսն)։ 385. մարդակերաց երկրին, ականջահատ անել տուիք։
387. ի հաւատոց։ 388. զԻսահակ։ 389, Պօղոս։ տաճկացընել։
390. աղդի աղդի չարչարանօք ի։ 391—2. զԼեհու երկրի զայնքան
քրիստոնեայն անհաղորդ, անմասն և անթաղում թողիք և գնեա։ 392. չիք
ևն։ 393 Այսպիսի բանից։ չկայ, այլ մեզ միայն կայ։

Թղ. 43բ։ 395. ախտիւն։ իւրում։ 396. եթէ ևս։ Աստուած թող։
398—9. Յորժամ եկին քո աբեղայքն հրաւիրակ ի Կոստանդնուպոլիս։
400. ձ. ղչ. և։ 401. ստամպոլցոց։ 403. չիք ապա։ 404. Արդ՝ ո՞ եղև
սիմոնական. ա՞ղէ, ասա ինձ։

405 Գրեալ ես անուանակցին քում. մեր անունն Սի-
մոն չէ, այլ Սիմէոն. եթէ լիցի Սիմոն, զինչ վնաս է
անուանակից լինելն. ահա, առաքելոյն Պետրոսի ասաց
Տէրն. «Սիմոն որդի Յովնանու» (Յովհ. աւ. Ա. 42). ահա և
դու անուանակից ես Փիլիպպոսի առաքելոյն. անուանա-
410 կից լինելն զինչ չահ է առանց գործոց, ըստ հօրն Անտո-
նի. վա՜յ այնոցիկ, որոց անունն մեծ է քան զգործն։

Դարձեալ գրեալ ես ըստ կանոնաց, թէ. եպիսկո-
պոս կամ՝ այլ ոք միմեանց վիճակի մի իշխեսցէ։ Այո՛,
այդպէս։ Ապա դա եպիսկոպոսաց է, իսկ կաթուղիկո-
415 սաց համարձակութիւնս տայ սուրբն Ներսէս Լամբրո-
նացին ըստ վերոգրելոց։ Բայց վասն Թորոսին, որ ա-
սացեալ ես, մեք այն ժամանակին՝ որ ընդ Գրիգոր վար-
դապետին ի Ստամբօլ կու գնայաք, հանդիպեցաք յԱն-
կիւրիա, վախճանեցաւ Ղուկաս եպիսկոպոսն. միաբան
420 ժողովուրդն աղաչեցին զվարդապետն և զմեզ թէ զԹո-
րոսն արարէք առաջնորդ, զի սա կարող է կառավա-
րել զվանքն և զայսչափ պարտքն. յետ այնորիկ, զինչ
և իցէ, վարդապետն վանից հայր եղ զսա. մեք գնա-
ցաք ի Կ. Պոլիս. ի դառնալն մեր կրկին հանդիպեցաք
425 անդ. միաբան քահանայք և ժողովուրդք եկին առ մեզ.
զաղաչանս, զպաղատանս զաղերս առնելով խնդրեցին
թէ եպիսկոպոս ձեռնադրէ. ոչ թէ միայն իւրեանք,

405. թէ ըստ անուանակցոյն իւրում։ 406. այլ Սիմէոն է, և եթէ լիներ։ վնաս էր։ 407. ես ասաց։ 408. Տէրն մեր։ Եւ ահա դու. 409—410. առաքելոյն Փիլիպպոսի։ Արդ՝ ինչ չահ է քեզ անուանակից լինելն առանց։ 412. գրեալ ես թէ, ի կանոնաց գրեալ է. եպիսկոպոս։ 413. վիճակն մի իշխեսցեն։ 414. այդպէս է։

Թղ. 44ա։ 414. սակայն այդ կանոն եպիսկոպոսաց վասն է։ 415—16. Լամբրոնացի ըստ վերոգրեցելոյն։ 417. չիք որ։ 418. Ստամպօլ չիք կու։ 418—9. ի քաղաքն Անկիւրիա և անդ վախճան եղև։ եպսին. 419—20. և միաձայն ժողովուրդն աղաղակեցին առ վարդապետն և առ մեզ։ 422. զվանքն մեր։ 422—23. չիք զինչ և իցէ։ 423 հայր վանից։ և մեք։ 424. գնացաք Ստամպօլ։ Եւ ի։ 425—6. անդ վերստին քահանայք և ժողովուրդ եկին միաբան առ մեզ, աղաչանս, պաղատանս առնելով։ 427. ի մէջն, թէ եպիսկոպոս ձեռնադրեա զսա։ ինքեանք միայն։

այլ և այլազգիքն, որ պարատաէր էին, նոքա ևս եկեալ
աղաչեցին, և երբեմն ահ և երկիւղ տալով նեղացու-
430 ցանէին զմեզ։ Մեք զայս ևս ասացաք՝ թէ Էջմիածնի
թեմն է Էնկիւրի քաղաքն, և վարդապետն այլ լինի
թէ նեղանայ, իսկ քահանայքն և ժողովուրդքն ամե-
նեքեան ասացին. մեք դիտեմք և Էջմիածին, մեք դիտեմք
և վարդապետն. նոցա խօսքն ի վերայ մեր։ Մեք ևս
435 վասն այսպէս ասելոյն ձեռնադրեցաք զինքն եպիսկո-
պոս։ Եթէ ուղիղ դատաստան ունիս, Էնկիւրիացի
քահանայքն և ժողովուրդքն են բանադրելոյ արժանի.
իւրեանք իսկ յանձն առին զպատասխան տալն։ Յետ
այնորիկ Գրիգոր վարդապետն նեղացեր է իւրեանց,
440 թէ առանց հրամանի բան արարիք. Ես Էջմիածնի վէ-
քիլ և երէցփոխան եմ։ Յետ քանի ամսոյ Շահին
չէլէպին և խօճայ Երեմիայն կու հանդիպին ի յԱնկիւ-
րիա. կառնեն զԹորոսն և կու տանեն առ վարդապետն
և անդէն կու հաշտեցնեն. զինչ և իցէ, աթոռին հախն
445 և Էջմիածնի բաժինն կառնէ ի Թորոսէն, յետ հաշ-
տութեան և օրհնելոյն զինքն՝ նուիրակ է արեր իւրեան
և վէքիլ, և տուեր է Գրիգոր վարդապետն ի ձեռն Թո-
րոսին նամակ և իշխանութեան թուխտ և առաքեր է

428. այլազգիք ևս որ պարատաեարք էին, չիք նոքա ևս եկեալ։ 429—30. տալով ձանձրացուցին. բայց այնու ամենայնիւ ոչ առի յանձն, այլ ասացի թէ Էջմ։ 431. է թեմս։ չիք Էնկիւրի քաղաքն։ չիք այլ։ 432. չիք իսկ։ Քահանայք և իշխանք և ժողովուրդքն միաբերան։ 433—4. ասացին թէ մեք զնոյն գիտեմք և զէջմիածին գիտեմք, և վարդապետին խօսքն ի վերայ մեր։

Թղ. 44բ։ 434—5. Յետ այսպիսի բանից նոցա ձեռնադրեցաք և մեք զնա եպիս։ 436—9. Արդ՝ եթէ ուղղադատ ոք էիր, զանկիւ-բիայ բանադրեիր ըստ արժանւոյն. որք յանձն առին զպա-տասխանատուութիւնն, որոց և Գրիգոր։ չիք իւրեանց։ 440. իմոյ հրամանի։ 441. և երեսփոխան եմ։ քանի մի ամսոյ։ 442. չիք ի։ յԱնկիւրիայ։ 443. և տանիլ։ և տանին։ 444. չիք և անդէն կու։ հաշտեցուցանեն։ չիք զինչ և իցէ աթոռին։ հախ։ 445—9. և բաժին առնեն ի նմանէ Էջմիածնի. և ապա նուիրակ և վէքիլ ա-րարեալ է իւր. ևս և թուղթ իշխանութեան ի ձեռս նորա տուեալ և

ի կողմանս Ուռումելու և Անատոլու, որ տարի և կէս,
450 այլ աւելի և ոչ պակաս, յետոյ բերեր է առ ինքն.
այս բանիս գիտակ են նուիրակն քո Մինաս վարդա-
պետն և այլք, որք հանդիպեալք են միմեանց, և ապա
յետ այնորիկ օրհնութեան նամակաւ ուղարկեալ է
յԱնկիւրիա առաջնորդ, թէ ես Էջմիածնի վէքիլ եմ,
455 այսուհետև չունի ոք իշխանութիւն այլ և այլ ասել
դմա, թէ ժողովուրդ և թէ իշխան. յայնժամ գայ
յԱնկիւրիա, իսկ յորժամ կուգայ՝ տեսանէ զժողո-
վուրդն այլ և այլ։

Եւ ես մեք ես թուխտ յղեցաք իւրեան, թէ որք
460 աղաչանօք օրհնել տուին զքեզ և ուխտ արարին թէ
վարդապետին և թէ Էջմիածնի խօսքն ի վերայ մեր,
և այժմ զքեզ այդպէս արարին, ել և եկ առ մեզ և
ի մեր թեմն. իմ երկիրն առաջի քո է. և սա եկն առ
մեզ և ճնաց ասա ի սուրբ աթոռս։ Այլ քեզ ինչ
465 իլախայ ճնաց, որ թուխտ ուղարկես և բանադրես ըզ-
մեզ թէ եպիսկոպոս է օրհներ։ Թէ օրհնեմք ամօթ է։
Զի ահա այս իմ թեմն է, հայրենիք իւր ի Գամրան
երկրին է, այսինքն ի չափոյ. և մայրաքաղաքն ի Մելի-
տենոյ։ Ահա եղև, որ հարք և մարք իւրով ի թեմէս
470 և ի վիճակէս մերմէ. քեզ զինչ փոյթ, որ մեզադրանք և

առաքեալ ի կողմանս։ 450 և աւելի ես նուիրակ լեալ և առ ինքն բերեալ։ 451. որպէս այսմ բանիս գիտակ է։ 552. չիք և այլք։ զոր հանդիպեալ է։ չիք միմեանց և ապա։ 453—54. յղեալ է յԱնկուրիայ։ 456. չիք թէ ժողովուրդ և թէ իշխան։ 456—58. և յորժամ գայ յԱնկիւրիա, տեսանէ այլ և այլ զվարդապետն։

Թղ. 45ª։ 459. Ցետ որոյ և մեք ես թուղթս առաքեցաք նմա, թէ զքեզ։ 460—1. եռուն, զվարդապետին և զէջմիածնի խօսքն ի վերայ իւրեանց առին։ 462. մինչ այսպէս արարին քեզ։ 463. և ի թեմս մեր, զի առաջի քո է վիճակն մեր յորն և հաճիս։ Ուստի եկն նա։ 444. չիք ասա աթոռս մեր։ Արդ՝ այսուհետև։ 465. յոխայ մնաց քեզ, որ թուղթ յղես մեզ վասն նորա, և մեզադրես զմեզ թէ։ 466—70. ես օրհներ։ Զի թէ օրհնեմ, զինչ վնաս ի նմանէ. ոչ ապաքէն ի մեր թեմէն է, զի ի հօր կողմանէ ի Գամրաց երկրէն է և ի մօր կողմանէ՝ ի Մելիտենոյ, զի հարք և մարք ի թեմէս և ի վիճակէս մերմէ է։ 470—71. զի փոյթ, որ

թուղթ ուղարկես յայս երկիրս, զի հրամայէ Քրիստոս
ի սուրբ աւետարանին. «օրհնեցէք և մի անիծանէք»
(Հռոմ. ԺԲ. 14)։ Մեք զՔրիստոսի հրամանն կատարեցաք
և օրհնեցաք և դուք հակառակն գործեցիք, մանաւանդ
475 որ անպատեհ, յանդուգն և ամբարտաւան խօսք կու-
գրես ի տոմսիդ քո։ Ըստ Սենեքերիմայ արքային Ասո-
ւրեստանեայց որ առաքեաց զՌափսակ ի Լաքիսայ առ
արքայն Եզեկիա և ասէ. «Այսպէս ասէ, ասացէք ցե-
զեկիա, արքայն Ասորեստանեայց, զի՞նչ ելցէ յոյսն, յոր
480 դու յուսացեալ ես. և արդ, յո՞ յուսացեալ նշանակե-
ցեր զիս. ահա յուսացեալ ելցես ի ցուպն եղեգնեայ,
ՀԱԼԽՀԱԼԵԱԼ ԵԳԻՊՏՈՍ, յոր եթէ յենուցու այր՝ ման-
րիցէ ի ձեռս նորա և խոցիցէ զնա (Եսայի ԼԶ. 8) ելն։ Զայս
իբր զմեզ ես նմանեցուցեալ. այո՛, և ոչ բնաւին, թէպէտ
485 Ռափսակ խրոխտանալով եկն ի վերայ Եզեկիայ ար-
քայի, ասելով զհպարտութեան բանս, թէ «Ո՞ւր է աս-
տուածն Եմաթայ և Արփաթայ և ո՞ւր է աստուածն
Սեփարուիմայ քաղաքին Անա և Աւա, միթէ փրկեցի՞ն
զՍամարիա ի ձեռաց իմոց. նոյնպէս զի՞արդ փրկեսցէ
490 Տէր Աստուածն ձեր զԵրուսաղէմ ի ձեռաց իմոց» (Դ.
Թագ. ԺԸ. 34—35)։

Եւ եղև, իբրև լուաւ Եզեկիա արքայ, պատառեաց
թուղթ և մեզադրանք յղես ի կողմանս յայս։ Արդ հրամայէ։ 472.
չիք ի սուրբ։ օրհնեցէք զանիծիչս ձեր, և առաքեալն ասէ։ 473—6.
կատարեցաք՝ յօրհնելն մեր զնա և դու զհակառակն նորին գործե-
ցեր յանիծելն քո. և ոչ այսչափ միայն, այլ և անպատեհ անդուք և
անբարտաւախօսք գրել ժպրհիս ի քարտիզի քում։ 477. ի Լաքի-
սայէ։ 478. Եզեկիա, ասել թէ։ չիք ասացէք ցԵզեկիա։ 479—480.
Ասորեստանեայց. թէ յո՞ յուսացեալ

Թղ. 45ᵇ։ իցես։ Ըստ սմա և դու ասես. յո՞ յուսաց։ 481. թերևս յու-
սաց։ 482—4. ի ՀԱԼԽՀԱԼԵԱԼ ԵԳԻՊՏԱՑԻՆ, յոր թէ ոք յենուցու՝ ընդ
ձեռն ելանէ։ Այսմ ասացելոյդ իբր թէ զմեզ նմանեցուցեալ ես. որ
անդէպ է բնաւին. զի թէպէտ։ 485. Ռափսակ հպարտանալով եկն
առ Եզեկ։ 486. բանս ըստ քեզ։ 488. քաղաքին Սեփարուիմ։
489—91. չիք նոյնպէս զիարդ . . . ի ձեռաց իմոց։ 492—6.
իբրև զայս այսպէս լուաւ Եզեկիա, պատառեաց զհանդերձս իւր
և եկաց յաղօթս ի տան Տեառն։ Լուաւ ամենալուր ունկն Աստու-

զՀանդերձս իւր, և ել ի առն Տեառն Աստուծոյ և
ասէ. «Տէր Աստուած Իսրայէլի, որ նստիս ի քրովբէս»
495 ելն։ Եւ հասանել գիշերոյն էջ՝ հրեշտակ Տեառն և եհար ի
բանակէ նոցա ՃՁԵՌ» (Դ. Թագ. ԺԹ) ելն։ Դիտացիր թէ
յաղագս ոյր է պատճառն. ըստ այնմ սարսափ և դու իբրև
զՌափիսակ հպարտացեալ ես ամբարտաւանութեամբ ի
վերայ մեր ասելով ի քարտիզիդ. «ահա զԱղուան,
500 զԱղթամար, զկ. Պոլիս, զԵրուսաղէմ հնազանդեցուցեալ
եմ, և դու ո՞ւ ես, որ ոչ հնազանդիս. յո՛ յուսացեալ ես,
որ մեզ չես հնազանդեր։ Տես թէ նա ի գիշերին յայնմիկ զի՞նչ կրեաց ի հրեշտակէն. չերկնչի՞ս յԱստուծոյ.
լինի թէ այդպիսի մեծաբանութեամբդ նմին նման լինի-
505 ցիս։ Լաւ և ունկնդիր խրատուն Գամաղիէլի օրէնս ուսուցչին, որ առ հրէայսն վասն առաքելոյն, «եթէ ի մարդկանէ
կործանելոց են, որպէս Թեւդաս և Յուդաս. եթէ յԱստուծոյ է, ասէ, դուցէ աստուածամարտ գտանիցիք» (Գործք
առաք. Ե. 33—40)։ Նոյն և դու զդոյշ լեր և զահմէթ մի
510 քաշեր. չբաւականացա՞ր, չկշտացա՞ր ի հակառակութենէ,
որպէս որ հաւատեաւ տեսեր եմք զարարեալ խռովութիւնն ի Բաղէշ առ Ե. վարդապետաւքն, որ ազգի
ազգի նեղութիւն հասուցեր ժողովրդեանն այնմիկ, հաղիւ մաղապուրծ զերծար և փախեար ի նոցանէ և ան-
515 կար ի Վան։ Եւ անդ ևս բաղում խռովութիւնս արարեր ընդ Մոկացի Յովսէփ վարդապետին և անտի ևս

ծոյ և առաքեաց հրեշտակս ի բանակն հսկարին Սենեքերիմայ, և եհար ի բանակէ նոցա ՃՁԵՌ և զայլն որում գիտակ էք, թէ։ 498. չի՞ ես։ 501—3. չի՞ ո՞ ես։ յո՛ յուսացեալ ես, որ ոչ հնազանդիս մեզ։ Արդ՝ յառեա՛ զակն քո և տես թէ նա զի՞նչ կրեաց ի

Թղ. 46ա։ գիշերին յայնմիկ ի հրեշտակէ անտի։ Զերկնչիս արդեօք դու։ 504. չի՞ լինի թէ այդպիսի։ դուցէ մեծաբանութեամբդ այդուիկ։ 505. Լաւ թերևս և ունկն դիր դու։ 507. է (ասէ), կործանեսցին։ զԹեւդաս և զՅուդայ, իսկ։ 508. իցէ, դուցէ։ դատանիցիք։ 509—10. զդոյշ լեր և յընդունայն մի աշխատիր. չբաւակ. 511. չի՞ որ։ հաւատեաւ լսեմք զարարեալ աղմուկդ և խռովութիւնդ։ 512. վարդապետաւն։ 513. ժողովրդեան, որ ինմա, որ։

փախստական ի Էիմ գնացեր, և անտի յԱրճէշ և ի նոյնն
ևս անչափ կռիւ ընդ տեղացի եպիսկոպոսացն նոցա,
որ և ըմբռնել կամեցան տալ զքեզ, և անտի ևս փա-
520 խեալ հաղիւ զերծար. թողում, որ ընդ Մինաս վար-
դապետին ի յԵրզէրում։ Զի՞նչ եղև քեզ. այս ի՞նչ աղ-
մուկ և խռովութիւն է. երկնչիր յԱստուծոյ. զի՞նչ շահ
և օգուտ է քեզ այսչափ աղմկաց և խռովութեանց.
զայսչափ ասացեալ երկիրս, որ աղմկով և խռովու-
525 թեամբ լցեալ ես չկշտացար, մեր երկիրն մնաց։ Ապա
մեր երկիրն կարող չես ինչ առնել, հալոմդ կացիր, զի
այս երկիրս օսմանցւոց երկիրն է, սոցա գատաստանն
ուղիղ է. Աստուած զսոցա թագաւորութիւնն հաստատ
պահեսցէ և զսուլթան Մուրատին մէկ օրն Ռ արասցէ.
530 զիւրն թագաւորութիւն օրհնեսցէ մեծամեծօք, իշխանօք
և զօրօք իւրովք։ Ըստ առաքելոյն «մանաւանդ աղօթս
արարէք ի վերայ թագաւորաց» (Ա. Տիմ. Բ. 2) ելն։ Ապա
չէ, և դու այժմ նոր Փելիքսէս և Փելիքս յայտնեցար,
պիտի որ աշխարհս կրկին լուսաւորես. եթէ դու, եթէ
535 մեք՝ որ նոր կաթուղիկոս անուանեցաք և յաթոռ հայրա-
պետութեան նստաք։ Աշխարհս խռովութեամբ և հար-
կապահանջութեամբ լցաւ, մանաւանդ որ երկու թա-
գաւորք ի վերայ միմեանց պատերազմ կան և ևս ժո-

518 չի՞ նոցա։ 519—26. ըմբռնել տալ կամեցեալ են զքեզ, յորոց ևս ձեռաց փախուցեալ հաղիւ հազ զերծար։ Թողում զկռվն որ ընդ Կարնոյ Մինաս վարդապետին արարեր երկարապէս։ Արդ զի՞նչ եղև քեզ, և էր վասն այսքան աղմուկք և խռովութիւնք

Թղ. 46բ։ ի քէն յառաջ դան. եթէ չերկնչիս յԱստուծոյ, պատկառեա՛ թերևս ի մարդկանէ։ Զի՞նչ շահ և օգուտ եղև քեզ յայսցանէ, և յետ այսչափ աղմկաձգութեանց և խռովութեանց ընդ ամենայն տեղիս, չկշտացար այնու ամենայնիւ, այլ կամիս և յաշխարհս մեր ձգել զնոյն աղմուկ և խռովութիւն, սակայն երկրի մերում չես կարող առնել ինչ. հալոմդ կաց։ 530. չի՞ իշխանօք։ 532—5. թագաւորաց։ Թուի ինձ, զի դու այժմ նոր Փելիքս և Փելիքդէս յայտնեցար, զոր հանդերձեալ ես կրկին զաշխարհս լուսաւորել, զի եթէ դուք և եթէ մեք, նոր կաթուղիկոս յայտնեցաք։ 536. նստաք, վասն այն և աշխ։ 538—42. կան և զասք ժողովրդականաց ի ներքոյ հարկի

զովուրդքն զցայդ և զցերեկ անդադար ի ներքոյ հարկի
340 կան, զինչ առնելն իւրեանց ոչ գիտեն, դեռ հանգիստ
չես կենար ի տեղդ. աւելի պակաս թղտեր ևս կու դը-
րես և կու յղես այս երկիրս։ Երևան չինեցեր կա-
ռավարեցեր այս երկիրս ինաց, կամ թէ քեզի պէս
կաթուղիկոս չէր եղեր, դու միայն խելօք, ճարտար և
345 իմաստուն յայտնեցար որ այդ կողմդ ի հաշտ չես կենար։
Ապա զինչ զարմանամք զքո գրելդ, ահա քո վար-
դապետն Մովսէս կաթուղիկոսն մինչև ի Հռոմ փա-
փին հնազանդութեան թուղթ է առաքեր և բաղում
երանութեամբ երաններ է, որ նոցա աղօթքն ձեզ օդ-
550 նական լիցի, որոյ տեսեալ Յովհաննէս վարդապետն
պատրիարգ Կ. Պոլսոյ ի Հռոմ զթուղթն և գրեալ զօ-
րինակն ի Սամբօլ էր յղեալ, որ ես անդ հանդիպե-
ցայ, և զօրինակն առի, ահա այժմուս մօտ լինձ կայ։
Այսքան ժամանակ է եղեալ կաթուղիկոսքն ձեռնա-
555 գրեր են մինչև ցայժմ և ոչ են խորեր, նոյնպէս և
մեք կու ձեռնադրեմք և ոչ խորեմք, ըստ այնմ. «զե-
կեալն առ իս ոչ հանից արտաքս» (Յովհ. աւ. ԼԶ. 37)։
Զի յայնմ ոչ ձեր կաթուղիկոսքն թուխտ են առաքեր

անդադար հեծեն և զելս իրացն դատանել ոչ գիտեն։ Բայց դու այ-
սու ամենայնիւ տակաւին հանգիստ ոչ առնուս ի տեղդ. աւելի և
պակաս թուղթ գրել և յղել ձեռնամխիս ի կողմանս յայս։ Զերևան։

Թղ. 47ա։ 543—4. այս կողմանքս մնացին. կամ թէ քեզ նման
կաթուղիկոս չէր եկեալ յառաջագոյն։ 545—51. ճարտար և հանճարեղ
յայտնեցար ի կողմանդ որ ի հաշտ չես կենար։ Ցիշեմ և զվարդապետին
քո զրարեմտութիւն, որոյ չառաւիղէ և դու ի վեր ընծայեցար. զՄովսէս
կաթուղիկոսն ասեմ, որ մինչև ի Հռոմայ պապն զթուղթ հնազան-
դութեան առաքեաց և բաղում երանութեամբ երանեալ է զնա, զոր
նոցա աղօթքն ձեզ օդնական լիցի։ Եւ զայն տեսեալ Յոհաննէս վար-
դապետին պատրիարգին Կոստանդնուպօլսի ի Հռոմ զթուղթն։ 552.
առաքեալ էր ի Յամբոլ, որ և ես։ 553—56. յայնժամ և առի
զօրինակն, զոր այժմ առ իս կայ։ Եւ արդ՝ առ քեզ դառնամ բա-
նիւք. զի յայսքան ամաց հետէ եղեալ կաթուղիկոսքն ձեռնագրեն
մինչև ցայսօր և խորութիւն ինչ ոչ են արարեալ. նմանապէս և մեք
ձեռնագրեմք զարժանաւորսն և ոչ խորեմք ինչ։ 558—61. Վասն
զի ոչ ձեր կաթուղիկոսքն թուղթ են առաքեալ սոցա սակս այս-

սոցա և սոքա ձեզ, այլ սիրով են կացեալ և ի միմեանց
560 ձեռնադրեալքն ընդուներ են։

Զես ամաչեր և վախեր՝ թէ ինչաս մի կու լինի.
սոքա օսմանցի են. թէպէտ այլազգի են, բայց ուղիղ
դատաստան ունին։ Եւ դարձեալ գրեալ ես ի թղտիդ.
թէ զայս թուղթս իմ ձեռամբ գրեցի, իբր թէ հաթ-
565 թի շերիֆ է, վասն որոյ զպատիւ անուանն Աստուծոյ յա-
փշտակեալ ես, որ ոչ կամի զփառսն այլոց տալ, ըստ մար-
գարէին (Եսայի Խբ. 8), այլ և կամար գմբէթ ես ձեւացու-
ցեալ ի վերայ անուանդ և խաչ ի գլուխն 16). ամդ է քո
իմաստութիւնդ. որ պատուոյն Աստուծոյ վայել է, դու քո
570 անունն ի վերայ ես եդեալ։ Այդ բանիւդ կու մեծա-
բանես ի վերայ մեր, թուղտ կուղարկես. այս երկիրս
գիտես թէ Լեհաց երկիր է, որ թուղտ ուղարկելով,
այլ և այլ խօսք ասելով նոցա և Նիկոլ եպիսկոպոսին,
խռովեցուցիք և վրդովեցուցիք զայն քաղաքն, որ զմիա-
575 բան Լուսաւորչի ազգն և զեպիսկոպոսն իւրեանց ֆռանկ
առնել տուիք. մանաւանդ Էջմիածնի զվաղուց հետէ
կարգեալ գերեզմանատունն, որ սրբոց հայրապետաց,
վարդապետաց և օծեալ թագաւորաց և իշխանաց, ար-
գարոց և մարտիրոսաց և սրբոց բազմաց նշխարս կա-
580 յին անդ, զոր փորեալ՝ զգետն ի վերայ կապեցիք, որ

պիսի իրաց, և ոչ մերքն ձեզ, այլ սիրով են կացեալք եղբայրաբար
և առ ի միմեանց զձեռնադրեալսն ընդուներ են։ Իսկ դու չամաչես
և չզանգիտես թէ վնաս ինչ յառաջանայ ի հակառակութենէ աստի։
562. սակայն ուղիղ։

Թղ. 47բ։ 563. ի թղթոջ քում։ 564—5. գրեցի. որով կամիս
ցուցանել թէ՝ իբր հէթթի շերիֆ իմն է և զպատիւ։ 566. տալ զփառս
իւր այլոց։ 567. չիք այլ և։ զի կամար։ 568 — 73. արդեօք ամդ է
քո իմաստութիւնդ, զպատիւն, որ միոյն Աստուծոյ վայելէ, դու ի
վերայ անուանդ եդեալ ես որով մեծաբանես ի վերայ մեր, կարծե-
լով քեզ թէ Լեհաց երկիրն է այս, որ թուղթ առաքելով և այլևայլ
խօսս և պրոյցս ասելով։ 574. զքաղաքն զայն։ 676—8. տուիք։ Եւ
ոչ այսչափ միայն, այլ և զէջմիածնի զվաղուց հետէ զկարգեալ տունն,
որ ի սրբոց վարդապետաց և հայրապետաց և յօծեալ թագաւորաց և
իշխանաց։ 579. նշխարք եդեալ կա։ 580—1. կապեցիք. զնշխար և

նչխարք սրբոցն էին գետատար արարիք 17). և ուր եդիք «զանշարժ եղիցին», որ համարս տալոց էք առաջի Աստուծոյ։

Դարձեալ զՄելքիսեթ կաթուղիկոսի օրհնեալ մեռանն ի Մշոյ դաշտն արհամարեալ թափեցիք, և առ ի դուրս արարիք. որ այն մեռոնաւն Մելքիսեթ կաթուղիկոսն զՄովսէսն եպիսկոպոս ձեռնադրեաց. և այն թէ մեռոն էր, զիարդ յանդգնաբար արհամարհեցիք, և թէ մեռոն չէր, զիարդ եղև Մովսէս եպիսկոպոս, և թէ եպիսկոպոս չէր, որպէս եղև կաթուղիկոս, և թէ կաթուղիկոս չէր, զիարդ զքեզ յաստիճան եպիսկոպոսութեան հրաւիրեաց, և թէ դու կաթուղիկոս չես, զիարդ համարձակիս եպիսկոպոս ձեռնադրել։

Դարձեալ ձեր իմաստութիւն այսչափ է. որ նուիրակքն ձեր աղուհացից պահոցն ի Պուրսայ, Մանիսայ, Իզմիրու երկիրն վասն զանկի զոնկի և տընկտընկոցի համար զպատարագն յայտնի կու առնեն. որ ամենեին փակեալ են ի սրբոց հայրապետաց, այլ և այլ պատճառս դնելով. ոչ այնպէս, այլ վասն փառասիրութեան և ագահութեան։ Եւ ես, որ յաչս մարդկան կեղծաւոր պահեցող երևելով ահացուցանէք զքրիստոնեայս, պատճառ վասն արծաթոյ, թէ աւելի առնիցեն քան զառուեալն իւրեանց, որպէս որ յայտնի ի մէջ ամբոխին ասէին նուիրակք քո, թէ այսչափ դրամ կուտայք նա՝ ձեզ մեռոն կուտամք, և թէ ոչ,

զոսկերս սրբոցն որք էին անդ՝ գետատ։ 582. որում համարս։ 584. Եւ դարձեալ։ կաթուղիկոսին։ 585. ի Մշու։ 585—86. առաթուրս։ 586. որ միայն այնու մեռոս Մելքիսէթ։

Թղ. 48ա։ 587. Եւ եթէ այն։ 589. եթէ մեռոն։ 590. եթէ եպիս։ և եթէ։ 591. զիարդ զնեզ։ 592. և եթէ։ 595—6. նուիրակն։ պահուցն ի Պուրսայ, Մանիսու։ 596. զանչիզունչի և գնկակոցի։ 597. յայտնի առնել ետ։ 598—9։ ըստ ամենայնի փակեալ է ի կանոնաց սրբոց հայրապետաց. թէպէտ այլ և այլ պատճառս յօդին, սակայն ոչ է այնպէս։ 600. որ առ աչս։ 601. կեղծաւորարար։ 602—3. որոյ պատճառն վասն արծաթոյ,զի զէթ աւելի առնուցուք քան զառուեալսն

դուք գիտէք։ Որպէս որ Մարտիրոս եպիսկոպոսն և Մինաս վարդապետն քո ի Պուրսայ ԵՃ զուռուշ են ուզեր. թէ որչափ աղմուկ է եղեր ի մէջ նոցա, և այլ բազում տեղիս, որքան անպատեհ և անդատաստան բանք արարեալ են, մի ըստ միոջէ գրել մեզ ձանձրութիւն է, որ չես ամաչեր սիմոնական զմեզ կոչելով։ Իմ Սիմոնական լինելն թէ չլինելն յայտնի է ի մէջ քրիստոնէից, մանաւանդ ի մէջ Հալպայ, որ այնքան տարի առաջնորդ կացի ի մէջ իւրեանց, նոքա զիտեն զիս թէ փառասէր եմ կամ ագահ, կամ յափշտակող, կամ արծաթասէր կամ կաշառառու. զինչ և իցէ, սոցա յայտնի եմք. հարցջիր սոցա։ Բայց դուք, որ զՀոռոմոց տունն աւերեցիք վասն ագահութեան, զոր և եթէ գրեմք, երկարումն լինի բանիս։ Բայց հուսկ յետոյ գիտութիւն լիցի քեզ, որ գրեալ էիր, թէ այժմ պատիւ տարարէք։ Քրիստոս Աստուած մեր հրամայէ ի սուրբ աւետարանին թէ «մի դատէք, զի մի դատիցիք» (Մատթ. Է. 1). «մի պատժէք, զի մի պատժիցիք» (Ղուկ. Զ. 37). որով դատաստանաւ դատէք, դատելոց էք. նոյնպէս և դու. պատուես՝ պատուիս, եթէ փառաւորես՝ փառաւորիս, եթէ պատժես՝ պատժիս և այլն ըստ կարգի, այդքան առ այս։

ի նոցանէ, որպէս յայտնապէս։ 607. ի Պուրսայ։ 608 — 11. որոյ պատճառաւ թէ որչափ աղմուկ է եղեր՝ թողումք ի գրել, և զայլ բազում տեղիս արարեալ զանպատեհ և զանդատաստան բանս ձեր մի ըստ միոջէ գրել ինձ ձանձրութիւն համարիմ։ Ո՞չ պատկառիս

Թղ. 48բ։ բնաւ և ոչ ամաչես երբէք սիմոնա։ 612. չիք թէ։ 613. բնակչաց Հալապայ։ 614. ի մէջ նոցա։ 615. զիս լաւապէս թէ փառաս։ 616. և կամ զինչ և իցէ, նոցա։ 617. յայտնի է, հարց առ նոսա։ 618. չիք և։ 621. արարաք։ չիք մեր։ 622. չիք թէ։ 624. զի որով։ 625. Եթէ պատուես։ 625—26. չիք եթէ փառաւորես փառաւորիս։ 627. կարգին։ առ այս բաւ է։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հնումն Մեծ Հայաստանը կոչւում էր Արևելեան Հայք, իսկ Փոքր Հայքը՝ Արևմտեան, որոնք բաժանւում էին իրարից Եփրատ գետով։ Դ. դարում, երբ Հայաստանը բաժանուեց Ցունաց և Պարսից մէջ, Ցունաց բաժինը կոչւում էր Արևմուտք, իսկ Պարսիցը՝ Արևելք։ Այս տեսակ բաժանումն յայտնի է Խորենացուն էլ (Գիրք Գ. գլ. ԾԸ). «Վասն որոյ թողու (Սահակ) զՄեսրոպ ի վերայ վարդապետութեան կողմանն արեւմտից ... Եւ ինքն եկեալ անցանէ յայրարատեան գաւառ»։ ԺԲ. դարում, երբ Կիլիկիան Հայոց քաղաքական և կրօնական կենդրօն դարձաւ թագաւորական և Հայրապետական աթոռների այնտեղ հաստատուելով՝ կիլիկեցիք իրանց անուանում էին Արևմտեանք, իսկ բուն Հայաստանցիներին՝ Արեւելեանք։ Այնուհետև մինչև ցայսօր Տաճկաց իշխանութեան տակ եղող Հայոց գաղթավայրերը կոչուել սկսեցին Արևմտեան, իսկ Ռուսաց և Պարսից իշխանութեան տակ եղողները՝ Արևելեան։ Այժմ Արևելեան և Արևմտեան յորջորջումները միայն գրական բարբառների վերաբերութեամբ են գործ ածւում — Արևելեան կամ Արարատեան բարբառ և Արևմտեան կամ Տաճկահայոց բարբառ։

2. Ակնարկութիւնը Լեհաստանի հայերի կրօնափոխութեան մասին է։

ԺԷ. դարի առաջին քառորդին Շահ-Աբաս Մեծ՝ աւերելով Արարատեան աշխարհը և հայերին գաղթեցնելով դէպի Սպահան՝ ս. Էջմիածինը աւերակ էր դարձրել։ Դաւիթ Ե. մենակ չկարողանալով հոգալ ծանր հարկապահանջութեան և պարաքերի տակ ընկած Էջմիածնի պէտքերը, իրան աթոռակից կաթուղիկոս օծեց Մելքիսէթին։ Սա ևս ոչինչ չկարողացաւ անել. հրաւիրուեց հարստութեամբ և բարի վարքով համբաւաւոր Սրապիոն վարդապետը, որ կաթուղիկոսական օծումն ընդունեց Գրիգոր ԺԳ. անուամբ։ Սրապիոն-Գրիգոր ԺԳ. մեծ նեղութիւններ կրելուց յետոյ շուտով վախճանուեց Տիգրանակերտում 1606 թ.։

Մելքիսէթը իւր եղբօրորդի Սահակին կաթուղիկոս օծեց, հար-

կապահանջների ու պարտատէրների առաջ պատասխանատու կարգելուց յետոյ, գնաց Կ. Պոլիս և Լեհաստան՝ ժողովարարութեան։ Լեհաստանում ժողովրդից թաքուն Նիկոլ Թորոսովիչ աբեղային եպիսկոպոս ձեռնադրեց։ Նիկոլ Թորոսովիչը լատին կրօնաւորների ձեռքին գործիք դարձաւ. նա միանգամայն հակառակ ուղղութիւն բռնեց թէ Էջմիածնի վերաբերութեամբ՝ արհամարհելով հայրապետի ազգարարութիւնները և անարգելով հայրապետական նուիրակներին և թէ ժողովրդի վերաբերութեամբ՝ բռնանալով նրանց վերայ, և մեղանչելով եկեղեցու աւանդութիւնների և կարգերի դէմ։ Լատին կրօնաւորներն իրանց պաշտպանութեան տակ առան Նիկոլին, որ ընդունելով պապի գերիշխանութիւնը՝ սկսեց աւելի ևս նեղել ժողովրդին. յուսահատ ժողովուրդն էլ պապական եղաւ, պապի միջոցով Նիկոլից ազատուելու համար։ Լատին կրօնաւորները հասան իրանց նպատակին տիրելով հայ եկեղեցիներին։ Լեհաստանի հայերի վիճակը թեթևացնելու և նրանց գործերին վերահսկութիւն անելու համար՝ Էջմիածնի հայրապետանոցի կողմից այնտեղ ուղարկուեցին ժամանակի ամենանշանաւոր հոգևորականները — Գրիգոր և Խաչատուր Կեսարացիները. սակայն սրանք եկեղեցական սաստիկ նախանձախնդրութիւն ցոյց տալ կամենալով՝ աւելի ևս բորբոքեցին խռովութիւնը ժողովրդի և Նիկոլի մէջ («Առաքել պատմագիր»։ «Նիկոլ եպիսկոպոս» Գաբրիել արքեպս. Այվազեանի և «Բռնի միութիւն» Կ. Եղեանց)։

3. Աղուանից կաթուղիկոսութիւնը, ըստ ազգային պատմչաց, սկսուեց 340 թ. և առաջին կաթուղիկոսն էր ս. Լուսաւորչի թոռն Գրիգորիս։ Աղուանից կաթուղիկոսութեան յաջորդութիւնը չարունակուեց Փոքր-Սիւնիքում կամ Արցախում։ Դ պատիւ ս. Գրիգորիսի նշխարաց՝ որ թաղուած է Ամարասում, այդտեղը համարւում է աթոռ Աղուանից կաթուղիկոսութեան, բայց կաթուղիկոսները կենում էին Պարտաւում, յետոյ Գանձասարում ևն։ Աղուանից կաթուղիկոսների իշխանութեան ենթարկուեցին մի ժամանակ և Գուգարք կամ այժմեան Ղազախ, Բօրչալուն. բայց սխալ է այդ դաւառը, ինչպէս և Արցախը կոչել Աղուանք։ Աղուանից աշխարհն ընդգրկում էր այժմեան Բաքուի նահանգի մի մասը։ Խորենացուն վերագրուած աշխարհագրութեան մէջ (հրատ. Բ. Պատկանեանի, Ս. Պ. Բ. 1877) ասուած է. «Աղբանիա, այսինքն է Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչև ցԿասբից ծովն և ցՀայոց սահմանս առ Կուր գետով» (եր. 17)։ Խորենացին (Գիրք Դ. գլ. Գ.) ս. Գրիգորիսի նահատակութիւնը դնելով Վասնեան դաշտում «մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով», աւելացնում է. «զոր (զմարմինն), բարձեալ սարկաւագաց նորուն, բերելով ի Փոքր-Սիւնիս, թաղեցին

«Ամարաս առանի»։ Ուրեմն Փոքր-Սիւնիք, որով և Ամարասը, Աղուանքից դուրս էր։

Մենք հարկ համարեցինք այս կէտի վերայ կանգնել, որովհետև Դեր. Տ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեան, իւր բոլոր տեղագրական երկասիրութիւնների մէջ Աղուանից աշխարհի սահմանները չատ է ընդարձակում, հասցնելով մինչև Զորոյ գետ և Սևանայ լճի հիւսիսային ու արևելեան ափերը, չփոթելով Աղուանից անունը կրող կաթուղիկոսների իշխանութեան սահմանը Աղուանից երկրի սահմանի հետ։

Աղուանից կաթուղիկոսութիւնը միշտ եղել է ամենայն Հայոց հայրապետութեան դերիշխանութեան տակ. ժամանակաւոր ընդվզումները չատ կարճատև են եղել։ Աղուանից կաթուղիկոսութիւնը վերջացաւ իսկապէս 1786 թուին, և վերջին կաթուղիկոսն էր Յովհաննէս Ջալալեան։ Իսրայէլը իբրև հակաթոռ և Յովհաննէսի եղբայր Սարգիսը թէև կաթուղիկոսական օծումն ստացան, բայց վերջինս 1798 թ. Վրաց Գէորգ թագաւորի հանութեամբ և ամենայն Հայոց Ղուկաս կաթուղիկոսի հրամանով նշանակուեց Հաղբատի վանահայր արքեպիսկոպոս տիտղոսով։ Երբ ռուսները տիրեցին Ղարաբաղին, Սարգիսը վերադարձաւ Գանձասար և 1815 թուին Եփրեմ կթղ. յատկացրեց նրան միտրոպոլիտ տիտղոսը։ Սարգսին յաջորդեց նրա եղբորորդի Բաղդասար արքեպիսկոպոսը, դարձեալ միտրոպոլիտ տիտղոսով։ Աղուանից կաթուղիկոսական տոհմի այս վերջին բարձրաստիճան հոգևորականը վախճանուեց 1854 թուին յունիսի 27-ին։ 1836 թուից պոլսաբնակ լինելու հաստատութեամբ Աղուանից անունը կրող կաթուղիկոսութեան վիճակը դարձաւ Ռուսաստանի հայերի վեց թեմերից մէկը Ղարաբաղու թեմ կոչմամբ։

Աղթամարայ կաթուղիկոսութիւնը սկսուեց ԺԲ. դարի համարեա սկզբում։ Երբ Գրիգոր Դ. քսանամեայ հասակում կաթուղիկոս ընտրուեց, Աղթամարի Դաւիթ արքեպիսկոպոսը իւր կուսակիցների ձեռքով Վասպուրականի Զորոյ վանքում օծուեց և փոխադրուեց Աղթամար։ Գրիգոր Դ. 1114 թ. Սեաւ լեռան Բ. ժողովով նզովեց և հակաթոռ հրատարակեց Աղթամարայ կաթուղիկոսութիւնը. բայց ցարդ չարունակւում է։ Այս երկու—Աղուանից և Աղթամարայ—կաթուղիկոսական աթոռներն էլ, որ ս. Էջմիածնի թշուառութեան օրերին վարանջել էին, երբ Մովսէս և Փիլիպպոս կաթուղիկոսների օրով սկսեց Էջմիածինը բարեկարգուել ու պայծառանալ՝ կամովին հպատակուեցին, ընդունելով ս. Էջմիածնի ամենայն Հայոց հայրապետական Աթոռի գերիշխանութիւնը։

4. Կաթուղիկոսական բնակավայրերի ցանկը, և այդ տեղերում յարատևութեան թուերը ճիշդ չեն։ Մի առ մի ճշդել աւելորդ

ենք համարում։ Արամուս ամենեին կաթուղիկոսարան չէ եղել. միայն Դաւիթ Ա. որ 729 թ. կաթուղիկոս ընտրուեց, իւր հայրենի Արամանս գիւղում եկեղեցի չինեց և այդ եկեղեցու մօտ ութ տարի ապրեց։ Դուլինը 452—924 հանդիսանալով հայրապետական աթոռ՝ այնտեղ դահակալեցին 40 կաթուղիկոս, երկու տեղակալ և մի հակաթոռ՝ 600—617 թ. Ցունաց բաժնի Աւան գիւղաքաղաքում։

5. Ընդունուած է կարծել, որ Հայրապետական աթոռը Վաղարշապատ տեղափոխուեց 1441 թ. սակայն Կիրակոսի յաջորդ Գրիգոր Մակուեցու մի կոնդակը, որի գլխաւոր կէտերը տպուեցին «Արարատ»-ի 1904 թ. յունվար ամսում՝ (եր. 37, 38) այդ թիւը տարակուսելի է դարձնում։ Կոնդակը գրուած է 1441 թուին, Մակուեցու կաթուղիկոսութեան 11-րդ ամսում. իսկ ինքն կաթուղիկոս է օծուել եչ. յունվարի Է.-ին. ուրեմն կոնդակը գրուած է 1441 թ. դեկտեմբեր ամսին։ Կիրակոսը երկամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ հրաժարուեց, ուրեմն նրա ընտրութիւնը եղել է ոչ թէ 1441 այլ 1438 թ։

Սսի Սիմէոնի առաջ բերած թուերը ոչ իրար են համապատասխանում և ոչ էլ պատմական դէպքերին, որով և կորցնում են իրանց կարևորութիւնը. մեզ համար կարևորութիւն ունի այն, որ Մակուեցու կոնդակի համեմատ հայրապետական աթոռի տեղափոխութեան թիւը պէտք է դնել 1441-ի փոխանակ 1438։ Սիմէոն Կիրակոսի կաթուղիկոսութիւնը անուանում է զաղալով, որ կը նշանակի հաստատագրով. նա դրանով կամենում է ասել, թէ Կիրակոսը ոչ թէ եկեղեցական օրէնքով և ազգային ընտրութեամբ է կաթուղիկոսացել, այլ տիրող իշխանութեան հրամանով։

6. Գրիգոր Կեսարացին Սրապիոնի, որ յետոյ Էջմիածնի կաթուղիկոս դարձաւ Գրիգոր ԺԳ. անուամբ, աշակերտներից էր։ Մովսէս կաթուղիկոսը յարդանքով էր վարուում Գրիգոր Կեսարացու հետ, որովհետև նա, թէև Սրապիոնի կրտսեր աշակերտներից, սակայն առ ոտս Գրիգորի էր չարունակել իւր ուսումն, ու նրանից վարդապետական զաւազան ստացել։ Փիլիպպոսն էլ յարգում էր Գրիգորին, որովհետև ինքն էլ Մովսէսի աշակերտն էր։ Մնացած հոգևորականները պատկառում էին նրանից, համարելով նրան երախտաւոր Էջմիածնի երկու ամենանշանաւոր կաթուղիկոսներին։ Անչուշտ, Գրիգոր Կեսարացին անձնական արժանաւորութիւն էլ ունէր, իբրև հմուտ և եկեղեցական կարգ կանոններին նախանձախնդիր հոգևորական։

7. Սսի Ազարիա կաթուղիկոսի մահից յետոյ (1601 թ.) նրա աշակերտ Յովհաննէս Անթափեցին Սսում օծուեց կաթուղիկոս, իսկ ումն Պետրոս Կարկառեցի՝ Բերիայում (Հալէպ). Գրիգոր Կեսարացին, Երուսա-

դէմ գնալիս՝ այս երկպառակութեան և խռովութեան վերջ տալու համար մտաւ Կիլիկիա, որոշեց՝ որ երկուքն էլ իրանց տեղերում մինչև իրանց մահը վարեն կաթուղիկոսութիւնը, իսկ մէկի կամ միւսի մահից յետոյ կենդանի մնացողը, Սսում հաստատելով իւր աթոռը՝ միայնակ վարի իշխանութիւնը։ Այսպէս ևս եղաւ. Պետրոսի մահից յետոյ Յովհաննէսը միայն վարեց իշխանութիւնը Սսում։

8. Գրիգոր Կեսարացին կարծում է, որ Բաղկեղօնի ժողովից յետոյ հայ հայրապետները դադարեցին Կեսարիայում ս. օծումն ընդունելը և ինքնագլուխ ու անկախ դարձան։ Բաղկեդօնի ժողովը գումարուեց 451 թուին. մինչդեռ Արշակ Բ. թագաւորը և Ներսէս Մեծը 366 թ. Վաղարշապատի Բ. ժողովում, Բաղկեդօնի ժողովից 85 տարի առաջ արդէն որոշել էին հայ եկեղեցու անկախութեան և հայրապետի՝ իւր եպիսկոպոսներից օծումն ընդունելու խնդիրը։

9. Զաքարէ և Իվանէ եղբայրները Վրաց արքունիքում մեծ նշանակութիւն ունէին։ Հայ և Վրացի զինուորների միջից տօների առիթով տարաձայնութիւններին վերջ տալու համար խնդրեցին Յովհաննէս Է. Մեծաբարոյ կոչուած կաթուղիկոսից ս. Աստուածածնի Վերափոխման և Խաչվերացի տօները Վրաց հետ տօնել, և վրանի տակ, չարժական սեղանի վերայ ս. պատարագ մատուցանել։ Այդ ժամանակ Յովհաննէս Մեծաբարոն Հռոմկլայ էր աքսորուած և Լևոն Բ. թագաւորի հրամանով Դաւիթ Գ. օծուելով Սսում՝ վարում էր կաթուղիկոսական իշխանութիւնը, ուստի և Դաւթի նախադահութեամբ գումարուեց Սսի Ա. ժողովը 1204 թուին։ Ժողովը Զաքարէի խնդրին բաւարարութիւն տուեց և որոշումն յատուկ պատգամաւորի ձեռքով ուղարկեց Զաքարէին։ Սակայն Զաքարէի հրամանով Լօռու ժողովը 1205 թ. և Անւոյ Դ. ժողովը 1207 թ. չընդունեցին Սսի ժողովի որոշումները։ Մխիթար Գոշը իւր երկրիմի վարմունքով և Խաչատուր Տարօնեցին, «Խորհուրդ խորին» չարակամի հեղինակը, լուսեայն քաջալերում էին Զաքարէին։

10. Փիլիքսը Հռովմայեցւոց կողմից դատաւոր էր Պաղեստինի Կեսարիայում։ Հրէաները Փիլիքսին դատապարտեցին՝ թէ Պօղոսը ապստամբիչ խռովարար է և Նազովրեցւոց աղանդի—քրիստոնէութեան—առաջնորդ։ Պօղոս Երուսաղէմից Փիլիքսի մօտ տարուեց, որ հարցուփորձով և հաստատելով հանդերձ Պօղոսի անմեղութեանը, բանտարկեց նրան, որ ընծայ ստանայ և ապա արձակի։ Պօղոսը երկու տարի մնաց բանտում, և երբ Փիլիքսը Հռովմ կոչուեց, Հրէաներին հաճելի մնալու համար դարձեալ չարձակեց Պօղոսին (Գործք առաք. գլ. ԻԳ, ԻԴ)։ Փեղեստոսը մերժուած էր եկեղեցուց իւր հերետիկոսական

կարծիքի համար։ Նա ասում էր, որ մեռելների յարութիւնը արդէն եղած է (Տիմօթ. Բ. 14—19)։ Սսի Սիմէօնը Փիլիպպոս կաթուղիկոսին Փելիքս և Փեղեստէս է կոչում բացի անուններից նմանութիւնից, և այն պատճառով, որ, որպէս թէ Փիլիպպոսը համոզուած է իւր անմեղութեանը, բայց Փելիքսի պէս անձնական չարը ի նկատի ունենալով չի խոստովանում, և Փեղեստոսի պէս հեստելով ճշմարտութիւնից՝ կործանում է ոմանց հաւատը դէպի Սսի աթոռը։

11. Խաչատուրը ծննդեամբ Կեսարացի էր, բայց Ասպահանցի էր կոչում, որովհետև երկար ժամանակ այնտեղ առաջնորդութիւն է արել։ Խաչատուր վարդապետն ևս իւր ժամանակի նշանաւոր հոգևորականներից էր։ Մովսէս Գ. կաթուղիկոսից ուղարկուեց Լեհաստան այնտեղի հայերի գործերին վերահասութիւն դրծելու. բայց ապարդիւն։ Խաչատուրը, ինչպէս երևում է Սիմէօնի թղթից, ձեռնադրուած է Սսի եպիսկոպոսից։ Խաչատուրի աշակերտն էր Փիլիպպոսի յաջորդ Յակոբը Դ. Զուղայեցին։

12. Մեր օրինակում Յովսէփը կոչուած է Ղ. (90-րդ.) կաթուղիկոս. Վիեննայի օրինակում՝ Զ. (6-րդ.). անշուշտ գ-ի և ղ-ի նմանութեան պատճառով։ Յովսէփը, եթէ ընդունենք Վայոց Զորեցին անգամ, դարձեալ 6-րդ կաթուղիկոսը չէ. իսկ այստեղ՝ Սիմէօնը ի նկատի ունի Յովսէփ Գ. Սսեցին, որը 1439 թուին կաթուղիկոսացաւ և մի քանի ամսից յետոյ վախճանուեց. որից յետոյ դահ բարձրացաւ Գրիգոր Թ. Մուսաբէկեանը և Հայրապետական աթոռը տեղափոխուեց Վաղարշապատ։

13. Վահան կամ Վահանիկ Բաղաց Զուանչիր իշխանի որդին էր. 965 թուին կաթուղիկոս ընտրուեց։ Սա եկեղեցու մէջ մի քանի յունական ներմուծութիւններ արեց, որով գրգռեց իւր դէմ իւր ժողովրդին. Աչոտ Գ. 970 թ. գումարեց Անւոյ Գ. ժողովը. Վահանը համոզուած լինելով որ չի կարող արդարանալ ժողովի առաջ՝ փախաւ Վասպուրական տեղւոյն Ապուսահլ թագաւորի պաշտպանութեանը ապաւինելով։ Անւոյ ժողովը կաթուղիկոս ընտրեց Սեանի վանահայր Սահականնոս Գ.-ին։ Սահականնոս բանադրեց Վահանին իւր հետևողներով, իսկ Վահանը՝ Սահականնոսին։ Այսպէս՝ Սիմէօնի ասածի նման «լցաւ աշխարհս նզովիւք»։ Սահականնոսը բազմաթիւ հոգևորականներով գնաց Վասպուրական Վահանին սանձահարելու, սակայն Ապուսահլ թագաւորից Կոտորոց բերդում բանտարկուեց և երկամեայ իշխանութիւնից յետոյ վախճանուեց։

14. ա. Համազասպ եպիսկոպոսը Հաւուց Թառ վանքի և Երևանի առաջնորդն էր։ Առաքել պատմագիրը (էջմ. 1884. եր. 227—28)

ասում է. «Էր սա այր իրոխտ և ճարտարաբան, որ մեծաբանութեամբ պակուցանէր զկոյմն Մելքիսեդեկեանց և թէ ածէր ի վերայ նոցա»։

Մելքիսէթ կաթուղիկոսը մի մուրհակ կեղծեց, որպէս թէ Մովսէս Խոտանանցին (յետոյ կաթուղիկոս) պարտ է իրան մի հարիւր թուման, և մուրհակը ներկայացրեց Երևանի Ամիրգունայ խանին։ Խանը և բոլորը հաւատացած էին որ մուրհակը կեղծ է. ուստի և դատաստանը երկու ամիս ձգձգուեց՝ որ եթէ հնար է ազատուի Մովսէսը։

Մի անգամ էլ խանի ատեանում բոլորի ներկայութեամբ Մելքիսէթի եղբօրորդի Սահակ կաթուղիկոսը Համազասպ եպիսկոպոսից վրէժ առնելու համար կանգնեց ու ասաց. «Թուղթդ այդ բոլորովին սուտ է. զի ոչ իմ հօրեղբայրն գիտէ և ոչ ես. այլ ես գիտեմ, որ Համազասպ եպիսկոպոսն է արարեալ զայդ նենդութիւն»։ Ինչ կասկած որ այս վկայութիւնից յետոյ Մովսէսը ազատուեց, և ամբաստանութիւնը ծանրացաւ Համազասպ եպիսկոպոսի վերայ։

ը. Ճանճի կամ ըստ Զաքարիա սարկաւագի Ճաճին (հատ. Գ. եր. 32—34)։—Փիլիպպոս կաթուղիկոսը Երևանի խանի ցանկութեամբ պարտաւորուեց ջրօրհնեաց հանդէսը Երևանում կատարել հանդիսաւոր կերպով՝ գեաի վերայ։ Երբ եկեղեցական թափօրը դուրս եկաւ գեղի գեռը, թաթարներն էլ մի ուրացած եպիսկոպոս, որին Ճաճին էին կոչում, հանդիսապետ կարգեցին և ծաղրելով Հայոց եկեղեցական թափօրը դուրս եկան «զօղանջելով, և բարբանջելով, գահուելով, զուռնայով և չըվչուելով և ծափելով և ուրացեալ Ճաճինն առաջի նոցա»։ Յովհաննէսվանքի առաջնորդ Զաքարիա վարդապետը եկեղեցական թափօրը յետ դարձրեց. բռնել տուեց Ճաճինին, գետին գլորեց՝ «և հանեալ զկօշիկ իւր՝ կալեալ զգլուխ ուրացողին և բեռօք կօշկին հարկանէր մինչև վիրաւորեալ արիւնաշաղաղ արար»։ Դրդռուած տաճիկները սուր են հանում, բայց խանը միջամտում է. ջրօրհնեաց հանդէսը դարձեալ կատարել է տալիս. մի մի պատուական պատմուճան է տալիս Փիլիպպոս կաթուղիկոսին և Զաքարիային. թաթարներից 30 հոգի է բռնում և 300 թուման տուգանք առնում. ուրացող Ճաճինին էլ երեսից ձգում է և բերդից դուրս քշում։ Ժամանակի բարք։

գ. Սահակ կաթուղիկոսը հարկապահանջներն և պարտատէրների երեսից փախաւ Տաճկաստան։ Էջմիածնի վանքը Մելքիսէթի ձեռագրով պարտաւորուել էր տարեկան մի հարիւր թուման հարկ կամ մուղաթա վճարել, որ տարիների ընթացքում անվճար մնալով ծանրացել էր վանքի վերայ և կաթուղիկոսները պարտաւորւում էին այդ մուղաթան պահանջելու համար նշանակուած բազմաթիւ պաշտօնեաների տալրուստն ևս հոգալ, որ աւելի ևս ծանր էր քան ինքն մուղաթան։

Սահակ Դ. կաթուղիկոսը երբ լսեց Մովսէսի կաթուղիկոսանալը, կամեցաւ ինքն ևս Օսմանեան երկրում, անկախ Էջմիածնից, կաթուղիկոսութիւն վարել։ Սակ Յովհաննէս կաթուղիկոսի եղբօր որդի Պօղոս վարդապետին ուղարկեց Կ. Պոլիս, այնտեղի Զաքարիա սարկաւագի ձեռքով կաթուղիկոսութեան հրովարտակ ստացաւ, և պատրիարքի ձեռքով կաթուղիկոսութեան հրովարտակ ստացաւ, և հաստատուեց Մշոյ ս. Կարապետի վանքում, ուր պէտք է վարէր իւր իշխանութիւնը։

Մովսէս Գ. թղթով և Էջմիածնի նուիրակ Փիլիպպոսը (յետոյ կաթուղիկոս) անձամբ շատ աշխատեցին համոզել, որ Սահակը հրաժարուի իւր գիտաւորութիւնից, սակայն հնար չեղաւ։ Սահակ Դ. բարեղէպ առիթ համարելով եպարքոսի Տիգրանակերտում լինելը, գնաց այնտեղ իւր հրովարտակը վաւերացնել տալու, ի չար արքունի գանձարանին խոստանալով տարեկան մի հազար դահեկան։ Տիգրանակերտցի հայերը դիմեցին եպարքոսին՝ խնդրելով ազգը 1000 դահեկանի չը վաճառել և չվաւերացնել հրովարտակը և խոստացան իրանք վճարել այն։ Եպարքոսը, երևի, հայերի սիրտը չահելու համար, ասատիկ բարկացաւ, որ առանց իւր գիտութեան է ստացուած հրովարտակը, խիստ դանակոծել տուեց թէ Սահակ Դ.-ին և թէ նրա համախոհ Պօղոս վարդապետին, ստիպելով՝ որ ընդունեն մահմեդականութիւն։ Հայք, կասկածելով, որ մի գուցէ ուրանան նրանք քրիստոնէութիւնը դիմեցին եպարքոսին ու ազատեցին նրանց։ Փիլիպպոսը իբրև Էջմիածնի նուիրակ՝ հետևում էր Սահակին և ամէն տեղ արգելք էր լինում Հայրապետական իշխանութիւնը երկպառակող ու ջլատող նրա ջանքերին։

Սահակ Դ. մի քանի օր մնաց Տիգրանակերտում, փոքր ինչ ապաքինուեց և վերադառնալով Էջմիածին՝ անց էր կացնում իւր օրերը զղջմամբ ու ապաշխարութեամբ մինչև որ 1639 թուին վախճանուեց։ Առաքել պատմագիրը (գլ. ԻԱ.) շատ սրտաշարժ է նկարագրում Սահակի մահը։

Սերգեյի, Գառնեցի և Զաքէոս արեղաների մասին տեղեկութիւններ պակասում են։

15. Սիմոնական սխտ կամ սիմոնականութիւն կոչւում է դրամով հոգևոր շնորհ տալը կամ առնելը։ Յետոյ սովորութիւն եղաւ կաշառքով ձեռնադրութիւն անելը կոչել սիմոնականութիւն, յանուն Սիմոն կախարդի։ Սիմոն կախարդը Սամարիայում մոգական արուեստով ապշեցրել էր ամենքին։ Սա, տեսնելով՝ որ առաքեալները ում վերայ ձեռք են դնում ստանում են ս. Հոգին, առաքեալներին արծաթ առաջարկեց՝ որ իրան էլ ձեռնադրելու իրաւունք տան. սակայն առաքեալները (Պետրոս և Յովհաննէս) մերժեցին և Պետրոսը ասաց նը-

րան. «Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգևսն Աստուտուծոյ համարեցար ընչիւք ստանալ» (Գործք առաք. Ը. 20)։

16. Հայրապետական կոնդակի ճակատին, ուր հայրապետի տիտղոսներն են յիշատակւում, կաթուղիկոս բառը գրւում էր կըրճատ, պատուով, ըստ այմ. կթղկս, և պատիւը սկսւում էր առաջին կ-ից—հանգչում էր վերջին կ-ի վերայ խաչապսակ գմբէթ ձևացնելով։

17. Ս. Էջմիածնի տաճարը շրջապատուած էր հին չինութիւնների բլրաձև փլուածքներով. հարկ էր մաքրել այդ փլուածքները. ուստի և Մովսէս Գ. կաթուղիկոսը, զեռ լուսաբարապետ եղած ժամանակ, երբ Էջմիածինը նորոգել սկսեց՝ յորդ և վարար ջուր կապեց փլուածքի մի կողմը և բազմաթիւ մշակներ սկսեցին փորել հողը և ջրին տրոր տալ. այսպէս, ջուրը հողն առած տանում էր իսկ քարը մնում. քիչ օրից յետոյ հողը ամեն կողմից վերցուեց՝ մնացած քարերն էլ չինութեան գործ դրուեցին (Առաք. պատ. 1884. եր. 232—234). Սսի Սիմէոնը այս դէպքն է ակնարկում։ Իսկ «անշարժ եղեցի-ն» Մաշտոցի մէջ յայտնի մաղթանքն է, որով կնքւում է նոր գերեզմանի հողակոյտը։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922
именна, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0166055